



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ	1
ԽՄԲԱԳՐԱԿԱՆ.....	2
ԱԽԱՐԱՅՐԻ ՈԳԻՆ ԱԶԳԻ ՈՒ ՀԱՅՐԵՆԻՔԻ ՅԱԻԵՐԺՈՒԹԵԱՆ ՈՒՂԵՆԻՇ Է	2
ՀԱՐՅԱԶՐՈՅՑ.....	4
ԱՄՆ-Ի ՀԵՏԱՔՐՔՐՈՒԹԻՒՆԸ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆՈՒՄ ՈՒՆԻ ԱՇԽԱՐՀԱՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԱՇԽԱՐՀԱՏՆԵՍԱԿԱՆ ՇԱՀԵՐ. ԲԵՆԻԱՄԻՆ ՊՕՂՈՍԵԱՆԸ՝ ՎԵՆՍԻ ԱՅՑԻ ՄԱՍԻՆ	4
ԿԻՊՐԱՀԱՅ	8
ՄԻՋԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ՄԻԱԽՈՐՄԱՆ ԱՂՕԹՔԻ ԵՐԵԿՈՅ	8
ՅՕԴՈՒԱԾՆԵՐ.....	9
1920 ԹՈՒԱԿԱՆԻ ԳԱՂՏՆԻ ՓԱՍՏԱԹՈՒՂԹԸ ԿԸ ԲԱՑԱՅԱՅՏԷ ԹՈՒՐՔԻՈՅ ԾՐԱԳԻՐՆԵՐԸ, ԻՆՉՊԷՍ ԱՅՍՕՐ, ԱՅՆՊԷՍ ԱԼ ԱՅՆ ԺԱՄԱՆԱԿ՝ ՎԵՐԱՅՆԵԼ ՀԱՅԱՍՏԱՆԸ.....	9
• ՀԱՅ ԴՊՐՈՅ, ՀԱՅ ՈՒՍՈՒՑԻՉ	11
• ՀԱՅ ԹԵՐԹ, ՀԱՅ ԽՄԲԱԳԻՐ.....	11
• ՀԱՅ ՀԱՅԵՐԷՆԱԳԷՏ, ՀԱՅ ԲԱՆԱՍԷՐ	11
ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՆՈՐՈՇՈՒԹԵԱՆ ԵՒ ՌԱԶՄԱԿԱՆ ՎՏԱՆԳՆԵՐՈՒ ՄԻՋԵԻ՝ ՍՈՒՐԻՈՅ ՄՈՌՑՈՒԱԾ ՀԱՅԵՐԸ.....	15
ԴՊՐՈՅԸ՝ ԼԵՋՈՒԱԿԱՆ ԴԻՄԱԴՐՈՒԹԵԱՆ ԱՄՐՈՅ ԵՒ ԻՆՔՆՈՒԹԵԱՆ ԴԱՐԲՆՈՅ	18
ԱՆԱՀԻՏ ԱՍՏՈՅԵԱՆԻ ԹՈՒՐՔԵՐՈՒ ԿՈՂՄԷ ՀԱՅՈՅ ՀԱՐՍՏՈՒԹԵԱՆՅ ԲՈՆԱԳՐԱԽՄԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆԸ.....	25
ՏԵՍԱԿԷՏ	28
ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻՈՅ ԲԱՐԵՆՈՐՈԳՈՒՄԸ՝ ՀՈԳԵԻՈՐ ԱՆԸՆԴՄԻՋԵԼԻ ԳՈՐԾԸՆԹԱՅ ՔՐԻՍՏՈՍՈՎ	28
ՄԻՆՉ ԱՇԽԱՐՀԸ ԿԸ ԹՓՈՏԱՅ, ՄԱՐԴԿՈՒԹԻՒՆԸ՝ ԿԸ ԹՐԹԱՅ,	36
ՀԱՅՈՒԹԻՒՆԸ Ո՞ՒՐ Է	36
«ՀՈԳԵԻՈՐ ԿԵԱՆՔԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄԻ ՏԱՐԻ». «ԼԵՑՈՒՆ ԿԵԱՆՔ».....	39
ՅԻՇՈՂՈՒԹԻՒՆԸ ՋՆՋԵԼՈՒ ԴԻԽԱՆԱԳԻՏՈՒԹԻՒՆԸ - ԾԻԾԵՌՆԱԿԱԲԵՐԴԷՆ ՊԱՔՈՒ՝ ՅԻՇՈՂՈՒԹԵԱՆ ՎԱՃԱՌՔԸ.....	43
ԻՆՉՈ՞Ւ ՓԱՇԽԵԱՆ ԴԱՐՁԱԾ Է ԱԶՐՊԷՅՃԱՆԻ ԵՒ ԹՈՒՐՔԻՈՅ ՄԻՐԵԼԻՆ.....	44
ԳՐԱԿԱՆ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ.....	47
ՓՈՒՆՋ ՄԸ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ՝ ԵՐԱՆ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆԷ.....	47
ՊԱՏՄԱԿԱՆ ՎԱՆԷՆ ՄԻՆՉԵԻ ԵՐԵԻԱՆ	51
ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒ ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉԸ	54
ՄԻԱՍԻՆ ԿԱՐԴԱՆՔ ԵՒ ՊԱՏՄԵՆՔ.....	54



Ճորձ Արապաթեան	54
ԹՈՆՐԱՏՈՒՆ	56
ՎԱՐԴԱՆԱՆՔ, ԲԱՐԵԿԵՆԴԱՆ ԵՒ ՓԱԿԵԱԼ ԽՈՐԱՆ	59
ԱԿՆԹԱՐԹՆԵՐ	62
ՔԱՌԵԱԿՆԵՐ	65

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ԱՒԱՐԱՅՐԻ ՈԳԻՆ ԱԶԳԻ ՈՒ ՀԱՅՐԵՆԻՔԻ ՅԱԻԵՐԺՈՒԹԵԱՆ ՈՒՂԵՆԻՇ

Աւարայրի ճակատամարտէն անցեր են 1575 տարի, բայց ան կը մնայ հայոց պատմութեան անկիւնադարձային կարեւորագոյն դրուագներէն մէկը: Անոր նշանակութիւնը դրոշմուած է հայ մարդուն հաւաքական յիշողութեան, հաւաքական գիտակցութեան մէջ: Անոր գլխաւոր հերոսի՝ Վարդան Մամիկոնեանի կերպարը, կը մնայ ըլլալ վսեմ խորհրդանիշը ազգային-ազատագրական պայքարի, ազգային արժանապատւութեան, ազգային անկոտրում ոգիի: Վարդան Մամիկոնեան եւ Վարդանանց նահատակները ներշնչման աղբիւր դարձած են բոլոր դարերուն՝ Աւարայրէն մինչեւ Սարտարապատ ու Արցախ:



Ըստ քաղաքագէտ դոկտ. Արմէն Այվազեանի, Վարդան Մամիկոնեան իր ժամանակի լուսագոյն զօրավարներէն էր: Իր զօրապետական տաղանդի համբաւը կը թեւածէր ե՛ւ Հայաստանէն ներս, ե՛ւ սասանեան ու բիւզանդական արքունիքներու մէջ, ե՛ւ միջին ասիական ցեղապետութիւններու մօտ: Մեր

միջնադարեան անուանի մատենագիրները՝ Մեսրոպ Վայոցձորեցիին ու Վարդան Արեւելցիին կը հաղորդեն որ ռազմի դաշտին վրայ սպարապետ Վարդանի տարած յաղթանակներու ընդհանուր թիւը կը հասնի 42-ի: Աւելին, Վարդան Մամիկոնեանի ազգային ոգիի ծնուցիչն ու սնուցիչը եղան Ս. Սահակ եւ Ս. Մեսրոպ, մեր Թարգմանիչ Հայրերը: Ան մեծցաւ, արդարեւ, իր մեծօր՝ Ս. Սահակի ծունկերուն վրայ եւ դաստիարակուեցաւ Ձուիկ Տիկիւններու դաստիարակութեան շունչով:

Եղիշէ պատմիչը կը բացայայտէ Աւարայրի պատերազմի հիմնական պատճառը: Անիկա, արդարեւ, պարսկական արքունիքի այն քաղաքականութիւնն էր, որ կը ձգտէր պարսկական միաձոյլ եւ ուժեղ պետութիւն ստեղծելու համար Հայաստանի մէջ վերացնել քրիստոնէութիւնը եւ հաստատել պարսկական կրօնը: Այդ քաղաքականութեան ամենամուլեռանդ կիրառողը կը դառնայ պարսից Յազկերտ արքան, որ իր նպատակին հասնելու համար կը փորձէ ջլատել Հայաստանի ռազմական ուժն ու տնտեսութիւնը,



վերացնել հայ իշխաններու իրաւունքները: Այնուհետեւ, Յազկերտը հայերէն կը պահանջէ հաւատաւորիս ըլլալ: Այս ամէնուն հետեւանքը կ'ըլլայ այն, որ Պարսկաստանի դէմ կ'ապստամբի ամբողջ հայ ժողովուրդը՝ հոգեւորական թէ աշխարհական, կին թէ տղամարդ, շինական թէ գօրական... ի գլուխ ունենալով Վարդան Մամիկոնեանը:

Վարդանը Վարդան Մամիկոնեանի խօսքը ուղղուած հայոց բանակին, գրուած դարձեալ պատմիչ Եղիշէի «Վարդանանց եւ հայոց պատերազմի մասին» գիրքին մէջ:

«Արդ, կ'աղաչեմ ձեզի, ո'վ իմ քաջ նիզակակիցներ. մանաւանդ որ ձեզմէ շատերը քաջութեամբ ինձմէ աւելի լաւ էք եւ հայրենական գահի պատուով՝ աւելի բարձր. բայց երբ ձեր յօծար կամքով զիս կարգեցիք ձեզ առաջնորդ եւ գօրագլուխ, թող իմ խօսքերը ախորժալուր եւ բաղձալի թուին մեծերիդ ու փոքրերիդ ականջներին: Չերկնչիք ու չվախնանք հեթանոսներու բազմութենէն ոչ ալ մահկանացու մարդու ահռելի սուրի դէմ թիկունքներս դարձնենք, որպէսզի եթէ Տէրը յաղթութիւնը մեր ձեռքը տայ, ոչնչացնենք անոնց գօրութիւնը, որպէսզի բարձրանայ ճշմարտութեան կողմը, իսկ եթէ հասեր է ժամանակը մեր կեանքը Սուրբ մահով աւարտելու այս պատերազմին, ընդունինք ուրախ սրտով, միայն թէ արիութեան ու քաջութեան մէջ վախկոտութիւն չխառնենք»:

Սա սրբազան կռիւ էր յանուն հաւատքի, յանուն անկախ հայրենիքի, քանզի հաւատքը դարձեր էր հայուն ինքնութեան անբաժանելի մասը: «Յանուն Յիսուսի, յանուն հայրենեաց, յառա՛ջ»:

Ու թէեւ Աւարայրի ճակատամարտը աւարտեր է մարտավարական ոչ ոքիով, բայց անհկա հետագային վերածուեր է հայոց ռազմավարական յաղթանակի, յատկապէս քաղաքական, գաղափարական եւ բարոյական առումներով: Աւարայրը շարունակուեր է 482-484 թուականներուն տեղի ունեցած հայ-պարսկական Վահանանց մարտերով եւ անոնց ձեռքբերած յաղթանակներով եւ Նուարսակի կարեւոր դաշնագիրով: Վերջինը՝ Նուարսակի դաշնագիրը, Մարգարանական Հայաստանին շնորհեց չափազանց լայն ինքնավարութիւն ռազմական, իրաւաքաղաքական եւ կրօնական-մշակութային ոլորտներու մէջ, ինչ որ ռազմավարական նշանակալից յաղթանակ է:

Աւարայրի ոգին դարձեր է հայուն լինելութեան կերպը, սրբազան պայքարի խորհրդանիշ, տեսելու, տոկալու եւ յարատեւելու անբեկանելի կամք ու վճռականութիւն յանուն ազգի ինքնութեան, ազգային հաւատքի, ազգային արժէքներու շարունակականութեան, յանուն հայրենիքի ինքնուրոյն գոյութեան:

Այսօր համաշխարհայնացման մունետիկները եւ նորօրեայ յազկերտներ կը սպառնան հայուն եւ անոր հայրենիքի անկախ գոյութեան: Անոնք չեն հրաժարած երբե՛ք հայութեան եւ Հայաստանի ոչնչացման նպատակէն ու քաղաքականութենէն: «Հայաստանը առանց հայերու» հայաջինջ ծրագիրէն: Միամիտ չըլլանք եւ չխաբուինք «խաղաղութեան» խաբեպատիր քօղէն, որուն ետին՝ Հայաստանի իրաւունքներու հաշտոյն, նոյն ծաւալողապաշտ քաղաքականութիւնն է: Վկայ՝ Ալիեւը կը փութայ լուծում տալ Նախիջեւանի հարցին՝ չեղեալ յայտարարելով 1921թուականի որոշումը եւ Նախիջեւանը միացնելով Ատրպէյճանին, որպէս անոր անբաժանելի մասը: Եւ դեռ պետական



մակարդակով կը տարածէ «արեւմտեան Ատրպէյճանի» ստայօղ խօսույթը, Պաքուի մէջ ցմահ դատաւճիռներ կ'արձակուին պատերազմի եւ հակամարտութեան իբրեւ հետեւանք գերեւարուած՝ Արցախի քաղաքական եւ ռազմական բարձրաստիճան ղեկավարներուն եւ այսպէս շարունակ...

Իսկ մենք որքանո՞վ հաւատարիմ ենք Վարդան Մամիկոնեանինն ու անոր հետ Աւարայրի դաշտին վրայ անմահացած 1036 հայ ռազմիկներուն: Անոնց հոգեւոր-բարոյական, ազգային-գաղափարական ոգինն ու տեսլականին: Անոնց դաւանած արժէքային համակարգին:

Անոնք գծած են ազգի ու հայրենիքի յաւերժութեան ճանապարհը: Անոնք ուղենիշ են ներկայ ու գալիք մարտահրաւերներու յաղթահարման: Դիմադրութեան աննկուն կամքի: Թշնամիին դէմ ծառանալու եւ խիզախելու բարձրագոյն արժանապատուութեան: Հայուն ինքնութեան, հաւատքին, ազգային-բարոյական-գաղափարական արժէքներուն, հայրենիքի անկախութեան պաշտպանութեան համար մինչեւ վերջ պայքարելու վճռակամութեան:

Ազգն ու հայրենիքը, ֆիզիքականէն ու նիւթեղէնէն անդին, հոգեկան հարստութիւն է, առաջին հերթին, անկողոպտելի ոգեղէն արժէք ու տարածք, դարերէն եկած այլեւ խորապէս ներկայ կոչում ու առաքելութիւն: Ճակատագիր է ու պատգամ: Բարձրագոյն պատասխանատուութիւն եւ յանձնառութիւն:

Եւ ինչպէս պիտի ըսէր հայ մեծ մտածող Կոստան Զարեան. «Կամ կը յաղթի տասնեակ դարերի զոհաբերութիւններով պաշտպանուած հոգեկան այս հարստութիւնը, կամ կը յաղթի խաւարը...»:

Հիմա ալ հայութիւնը արդեօ՞ք կանգնած չէ նման ԼԻՆԵԼ-ՉԼԻՆԵԼՈՒ սահմանագծին:

Փա՛ռք ու պատի՛ւ եւ խոնարհո՛ւմ մեր հին ու նոր բոլոր անմահ հերոսներուն:

ԵՐԱՆ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆ

ՀԱՐՑԱԶԲՈՅՑ

**ԱՄՆ-Ի ՀԵՏԱՔՐՔՐՈՒԹԻՒՆԸ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆՈՒՄ ՈՒՆԻ
ԱՇԽԱՐՀԱՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԱՇԽԱՐՀԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՇԱՀԵՐ.
ԲԵՆԻԱՄԻՆ ՊՕՂՈՍԵԱՆԸ՝ ՎԵՆՍԻ ԱՅՑԻ ՄԱՍԻՆ**

«Մեղիալարի» հարցերին պատասխանում է «ԱՊՐԻ Արմենիա» վերլուծական կենտրոնի աւագ փորձագէտ Բենիամին Պօղոսեանը

– Պարո՛ն Պօղոսեան, ԱՄՆ փոխնախագահի այցը Հայաստան աւարտուեց, ի՞նչ էական արդիւնք տուեց այդ այցը Հայաստանին, ի՞նչ կարելոր կէտեր կ'առանձնացնէք ընդհանուր այցից:

– Այցը ցոյց տուեց, որ ԱՄՆ-ն շարունակում է հետաքրքրուած լինել Հարաւային Կովկասով, շեշտում եմ՝ Հարաւային Կովկաս, որովհետեւ այցը միայն Հայաստան չէր, լինելու է նաեւ Ադրբեջանում: Սա կարելոր է, որովհետեւ առայժմ, գոնէ 2025-ի օգոստոսի 8-ից յետոյ, ԱՄՆ-ի ներգրաւուածութիւնը կամ ներկայացուածութեան շահագրգռուածութիւնը տարածաշրջանում կայունութեան գլխաւոր գրաւականներից մէկն է:



Բոլորս գիտենք, որ 2025-ի առաջին ամիսներին Ադրբեջանի կողմից կար նոր լայնածաւալ յարձակման էական սպառնալիք: Աւարտուել են բանակցութիւնները այդ երկու-երեք պայմանագրի շուրջ, որը հնարաւորութիւն է տալիս Հայաստանին ձեռք բերել ամերիկեան միջուկային տեխնոլոգիաներ, որքան ես եմ հասկանում, վերջնական որոշում դեռ չկայ, ու տարբեր պետութիւններ այդ տեխնոլոգիաներին

տիրապետում են, ոչ միայն ԱՄՆ-ն, այլ նաեւ Ռուսաստանը, Չինաստանը, կարծես Հարաւային Կորեան ու Ֆրանսիան եւս քայլեր են ձեռնարկում այդ փոքր մոդուլային ռեակտորների ստեղծման ուղղութեամբ: Ամէն դէպքում այս բանակցութիւնների աւարտը հնարաւորութիւն է տալիս, որ եթէ Հայաստանը որոշի, որ ընտրելու է փոքր մոդուլային ռեակտորների կառուցման ամերիկեան տեխնոլոգիաները, ապա արդէն դրա պայմանագրային հիմքը կայ: Գիտենք նաեւ, որ այս ուղղութեամբ Ռուսաստանը եւս իր առաջարկները ներկայացրել է ու սպասում է պատասխանի:

Երբորդ՝ մենք տեսանք հետախուզական որոշ դրոնների վաճառքի համաձայնագիր, որը, կարծում եմ, ունի ոչ այնքան զուտ ռազմական նշանակութիւն, որքան քաղաքական, որովհետեւ ամէն դէպքում ցոյց է տրուում, որ հիմա Հայաստանն ունի ԱՄՆ-ից զէնք ձեռք բերելու հնարաւորութիւններ: Բոլորս ենք հասկանում, որ ամերիկեան զէնքերը իհարկէ շատ բարձր որակի են, բայց նաեւ բաւականաչափ թանկ, հետեւաբար որքանով Հայաստանը կը կարողանայ խոշոր ծաւալով գնումներ կատարել հենց ԱՄՆ-ից, այլ հարց է, բայց ամէն դէպքում սա ցոյց տուեց, որ այդ պատուհանն արդէն բաց է:

Չորրորդը այդ բարձր տեխնոլոգիաների, մասնաւորապէս, արհեստական բանականութեան հետ կապուած համագործակցութիւնն է, մենք տեսանք, որ ԱՄՆ-ն համաձայնել է սկսել այդ արհեստական բանականութեան համագործակցութեան տուեալների կենտրոնի կառուցման երկրորդ փուլը ու շատ աւելի մեծ քանակութեամբ պրոցեսորներ վաճառել Հայաստանին: Ես այս չորս հիմնական ձեռքբերումը կ'առանձնացնեմ, որը մենք ունենք փոխնախագահի այցից յետոյ:

– *Քննարկման թեմա է դարձել 9 միլիարդ դոլարի «ներդրում» անելու թեման Հայաստանում, մի մասը պնդում է, թէ ԱՄՆ փոխնախագահը նման բան չի յայտարարել, ուղղակի*



*Հայաստանի իշխանութիւններն են մանկապաշտպանում նրա խօսքը, միւս մասը՝
ընդհակառակը: Ձեր դիտարկումը խնդրեմ:*

– Ես կարդացել եմ անգլերէն տեքստը. փոխնախագահը նշել է, որ միջուկային տեխնոլոգիաների համաձայնագիրը հնարաւորութիւն կը տայ ԱՄՆ-ի համար ունենալ մինչեւ 5 միլիարդ դոլարի արտահանում, հենց «արտահանում» բառն է օգտագործուած, որից յետոյ եւս 4 միլիարդ՝ արդէն վառելիքի մատակարարման ու, այսպէս ասենք՝ ատոմակայանի փոքր մոդուլային ռեակտորների սպասարկման հետ կապուած:

Ինքս միջուկային էներգետիկայի մասնագէտ չեմ, բայց որքան ես եմ հասկանում, խնդիրն այն է, որ եթէ Հայաստանը որոշում է, որ ԱՄՆ-ն պէտք է կառուցի այդ փոքր մոդուլային ռեակտորը Հայաստանում, ապա ատոմակայանի կառուցման բուն արժէքը կարող է լինել 5 միլիարդ դոլար, որից յետոյ եւս 4 միլիարդ դոլար էլ կ'արժենայ ատոմակայանը միջուկային վառելիքով ապահովելն ու ատոմակայանի սպասարկումն իրականացնելը: Այսինքն՝ ընդհանուր առմամբ այդ նախագծի գինը, եթէ Հայաստանը որոշի, որ ամերիկեան ընկերութիւնը պէտք է դա կառուցի, կարող է կազմել մինչեւ 9 միլիարդ դոլար: Հիմա, թէ ո՛վ է տրամադրելու այդ գումարը, գոնէ փոխնախագահի յայտարարութիւններից յստակ չէ:

– Ուղիղ ներդրման մասին խօսք փաստօրէն չի՞ եղել:

– Ո՛չ, յամենայնդեպ ոչ փոխնախագահի կողմից:

*– Ասացիք, որ ԱՄՆ-ն հետաքրքրուած է Հարաւային Կովկասով, ինչո՞վ էք պայմանաւորում
այդ հետաքրքրուածութիւնը այս փուլում:*

– Երկու բաղադրիչ կայ՝ ն՝ աշխարհաքաղաքական, ն՝ աշխարհատնտեսական, թէեւ դրանք ինչ-որ չափով փոխկապակցուած են: Աշխարհաքաղաքական տեսանկիւնից դա բնականաբար Հարաւային Կովկասի՝ Իրանին սահմանակից լինելն է ու ԱՄՆ-ի ներկայութիւնը այստեղ, այն էլ երկարաժամկետ, եթէ խօսում ենք ԹԴԻՓԲ-ի մասին, խօսքը շուրջ մէկդարեայ ներկայութեան մասին է, երկրորդ՝ Հարաւային Կովկասը մինչեւ 1991 թուականը Խորհրդային Միութեան մաս էր, ու մենք բոլորս գիտենք, որ Ռուսաստանը նախկին Խորհրդային Միութեան հանրապետութիւնները համարում է իր օրինական կամ յատուկ շահերի գօտի: Այստեղ ամերիկեան ներկայութիւնը ինչ-որ տեղ տեղաւորուում է նաեւ Ռուսաստանի հետ ընթացող մրցակցութեան տրամաբանութեան մէջ, իհարկէ նախագահ Թրամփի օրօք այդ տրամաբանութիւնը որոշակիօրէն փոխուել է, Բայդենի օրօք ԱՄՆ-ի ու Ռուսաստանի միջեւ շատ աւելի կոշտ հակամարտութիւն կար, բայց ամէն դէպքում այդ մրցակցութեան տրամաբանութիւնը ինչ-որ չափով դեռեւս պահպանում է:

Իհարկէ կայ աշխարհատնտեսական բաղադրիչ, դա բոլորիս յայտնի միջին միջանցքն է, այլ ոչ թէ Չինաստանը Եւրամիութեանը կապող ինչ-որ ճանապարհների ստեղծման, որովհետեւ ես բացառում եմ, որ ԱՄՆ-ն շահագրգռուած է, որ Չինաստանը ԵՄ-ի հետ աւելի շատ առեւտուր անի: Խօսքն այստեղ վերաբերում է Կենտրոնական Ասիան Թուրքիային ու Եւրոպային կապող յաւելեալ միջանցքին: Մէկ միջանցք արդէն մօտ 20 տարի է՝ ինչ գործում է, նկատի ունեմ Կենտրոնական Ասիա, Ադրբեջան, Վրաստան, Մեւ ծով, Եւրոպա կամ



Կենտրոնական Ասիա, Ադրբեջան, Վրաստան, Թուրքիա, Եւրոպա: Ու հիմա կարծես ամերիկացիները շահագրգռուած են ունենալ երկրորդ յաւելեալ միջանցքը, այսինքն՝ Կենտրոնական Ասիա, Ադրբեջան, Հայաստան, Թուրքիա:

Այստեղ արդէն աշխարհատնտեսական շահերի մէջ մտնում է այդ թում նաեւ ենթադրաբար Կենտրոնական Ասիայի ռեսուրսների օգտագործումը: Գիտէք, որ բոլորը խօսում են հագուազիւտ մետաղների ու այլնի մասին, որոնք շատ կարեւոր են ժամանակակից տնտեսութեան, համակարգչային տեխնոլոգիաների, միկրոպրոցեսորների արտադրութեան մէջ: Իհարկէ դեռեւս շատ յստակ պատասխան չունեցող հարցեր կան, թէ ինչքանո՞վ այդ ռեսուրսները կան Կենտրոնական Ասիայում, ինչքանո՞վ է շահաւէտ դրանք արդիւնահանելը ու Ադրբեջանով կամ Հայաստանով Թուրքիա կամ ԵՄ տեղափոխելը, բայց ամէն դէպքում այստեղ նաեւ աշխարհաքաղաքական բաղադրիչ կայ:

Որոշ փորձագէտներ խօսում են նաեւ, որ Միւնիքի մարզում կան ուրանի հանքավայրեր, գուցէ ԱՄՆ-ն որոշակի հետաքրքրութիւններ ունի նաեւ հենց Հայաստանի հանքահումքային հանածոներում ինչ-որ ներգրաւուածութիւն ունենալու համար՝ սկսած պոտենցիալ ուրանից, վերջացրած արդէն իրատեսական պղնձի ու մոլիբդենի շատ խոշոր հանքավայրեր կան: Ամէն դէպքում այս երկու բաղադրիչը կայ, որը ԱՄՆ-ին բերում է Հարաւային Կովկաս՝ կոնկրետ դէպի Հայաստանի հարաւային հատուած:

– Ադրբեջանում պահուող հայ ռազմագերիների վերադարձի հարցում փոխնախագահի այս այցն ի՞նչ ազդեցութիւն կարող է ունենալ:

– Գուշակութիւններով զբաղուել չեմ ցանկանում, բայց որքան ես եմ հասկանում Բաքուի ընկալումներից, կայ գերիների երկու խումբ՝ ռազմաքաղաքական ղեկավարութիւն, որտեղ կայ առանձնացուած Ռուբէն Վարդանեան ու մնացած 7-ը, ու մնացեալ գերիները, Ադրբեջանի կողմից հաստատուած 19 գերի, որից հանում ենք 8-ը, մնում է 11: Որքան ես եմ պատկերացնում, Ադրբեջանը դիտարկում է ինչ-որ բանի կամ ինչ-որ կողմի խնդրանքի դիմաց այդ 11 անձին ազատ արձակելու հնարաւորութիւնը, կարող եմ ասել՝ մինչեւ այս տարուայ յունիսի 7-ի խորհրդարանական ընտրութիւններ: Բայց ռազմաքաղաքական ղեկավարութեան խմբի մասով Ադրբեջանն ունի այդ մարդկանց ազատ արձակելու զրօ ցանկութիւն, ու տրամադրուածութիւնը այնպիսին է, որ այդ մարդիկ դեռ շատ երկար պէտք է մնան Բաքուի բանտերում:

Հնարաւո՞ր է փոխել Ադրբեջանի դիրքորոշումը այս մասով, մի փոքր բարդ է ասել, բայց ամէն բան կախուած է նրանից, թէ ո՞վ է պահանջողն ու ի՞նչ է առաջարկում դրա դիմաց, հետեւաբար չենք կարող ասել, թէ այստեղ կան դժուարութիւններ, բայց, իմ պատկերացմամբ, Ադրբեջանը դժուար թէ հակուած է այդ մարդկանց խնդիրը մօտ ապագայում լուծելու:

Քրիստինէ Աղաբեկեան

MediaLab.am

ԿԻՊՐԱՀԱՅ

ՄԻՋԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ՄԻԱԽՈՐՄԱՆ ԱՂՕԹՔԻ ԵՐԵԿՈՅ



Շաբաթ, 31 Յունուար 2026-ին, Երեկոյեան ժամը 6.30-ին, Նիկոսիոյ Սուրբ Աստուածածին Մայր եկեղեցւոյ մէջ՝ «Քրիստոնէաներու միութեան համար աղօթքի շաբաթ»-ին նուիրուած միջեկեղեցական արարողութիւն մը տեղի ունեցաւ, նախագահութեամբ՝ Թեմիս Կաթողիկոսական Փոխանորդ Տէր Կոմիտաս Արքեպիսկոպոս

Օհանեանի, ներկայութեամբ հայ թէ օտար քրիստոնէայ հաւատացեալներու ստուար բազմութեան:

Աղօթքի այս Երեկոյին մասնակցեցան Կիպրոսի մէջ գործող քրիստոնէայ եկեղեցիներու հոգեւոր պետեր եւ ներկայացուցիչներ: Հայոց առաքելական սուրբ եկեղեցւոյ կողքին, կային հոգեւոր պետերն ու ներկայացուցիչները յոյն ուղղափառ եկեղեցւոյ, մարոնիթ, լատին, անկլիկան, դպտի համայնքներու ներկայացուցիչներ, որոնք առանձին-առանձին եւ հաւաքաբար աղօթեցին աշխարհի խաղաղութեան, երկիրներու համերաշխութեան համար, փառաւորելով զԱստուած եւ ողորմութիւն խնդրելով Անկէ:

Արարողութեան ընթացքին Սրբազան Հայրը անգլերէն լեզուով ողջունեց եկեղեցիներու հոգեւոր պետերը, ներկայացուցիչները, հոգեւորականները, միաբանութեանց անդամները եւ հաւատացեալները եւ ուրախութիւն յայտնեց, որ քոյր եկեղեցիներ համախմբուած են Սուրբ Աստուածածին եկեղեցւոյ մէջ, աղօթելու համար աշխարհի խաղաղութեան եւ մարդկային համերաշխութեան: Սրբազան Հայրը յատկապէս շեշտեց Տէր Յիսուս Քրիստոսի հրաշափառ ծննդեան նշանակութիւնը, յայտնելով որ այս կարեւորագոյն իրադարձութիւնը իր անջնջելի կնիքը դրաւ համաշխարհային պատմութեան վրայ:

Ս, Աստուածածին Մայր եկեղեցւոյ երգչախումբը մասնակցեցաւ հայ հոգեւոր երգերու հոգեպարար երգեցողութեամբ, յատկապէս՝ «Քրիստոս ի մէջ մեր յայտնեցաւ», «Սուրբ, Սուրբ» աղօթքներու եւ հուսկ Տէրունական աղօթքի հոգեյոյզ կատարումներով:

ՅՕՂՈՒԱԾՆԵՐ

1920 ԹՈՒԱԿԱՆԻ ԳԱՂՏՆԻ ՓԱՍՏԱԹՈՒՂԹԸ ԿԸ ԲԱՅԱՅԱՅՏԵԹՈՒՐՔԻՈՅ ԾՐԱԳԻՐՆԵՐԸ, ԻՆՉՊԷՍ ԱՅՍՕՐ, ԱՅՆՊԷՍ ԱԼ ԱՅՆ ԺԱՄԱՆԱԿ՝ ՎԵՐԱՑՆԵԼ ՀԱՅԱՍՏԱՆԸ

Յարութ Սասունեան

www.TheCaliforniaCourier.com



Վերջին ամիսներուն բազմիցս յղումներ կը կատարուին թրքագէտ, դոկտոր Ռուբէն Սաֆրաստեանի 2019 թուականին Երեւանի մէջ հրատարակուած կարեւոր հայերէն գիրքին՝ «Մուսթաֆա Քեմալ. պայքարը Հայաստանի Հանրապետութեան դէմ 1919-1921 թուականներին» խորագրեալ:

Գիրքը ներկայիս յատուկ ուշադրութեան կիզակէտ դարձաւ այն պատճառով, որ արժէքաւոր այլ տեղեկութիւններու շարքին կը

ներկայացնէ Թուրքիոյ արտաքին գործոց նախարարի պաշտօնակատար Ահմետ Մուխթարի կողմէ 8 նոյեմբեր 1920-ին Արեւելեան ռազմաճակատի (Հայաստանի սահման) բանակի գլխաւոր հրամանատար Քեազիմ Քարապէքիրին ուղարկուած ծածկագրուած հեռագիրին բովանդակութիւնը: Այս փաստաթուղթը առաջին անգամ հրապարակուած է Պոլսոյ մէջ, 1960 թուականին, Քարապէքիրի «Մեր անկախութեան պատերազմը» գիրքին մէջ:

Դոկտոր Սաֆրաստեանի համաձայն, այս փաստաթուղթը կ'արտացոլացնէ Թուրքիոյ նախագահ Մուսթաֆա Քեմալի (հետագային նշանաւոր իբրեւ Աթաթուրք) դիրքորոշումը եւ չէր կրնար գրուիլ առանց անոր յատուկ ցուցումներուն եւ հաստատման: Մուխթարը նշած է, որ՝ «Այս գաղտնի հրամանը կը պարունակէ (թրքական) կառավարութեան իրական նպատակը»: Ատոր կողքին, Քեմալը 1920 թուականի փետրուար 5-ին ծածկագիր հեռագիր յղած է Քարապէքիրին՝ հրահանգելով անոր նախապատրաստուիլ Հայաստանի վրայ յարձակումի:

Այս պատմական փաստաթուղթին արժէքն այն է, որ 1920-ին թրքական կառավարութեան թշնամական դիրքորոշումը զարմանալիօրէն նման է անոր ներկայի դիրքորոշման՝ Հայաստանի Հանրապետութեան նկատմամբ: Ապշեցուցիչ զուգահեռներ կան այն մասին, թէ Թուրքիան ինչպէ՛ս Հայաստանը կը դիտարկէր անցեալին եւ ինչպէ՛ս կը վերաբերի այսօր: Նման բաղդատական վերլուծում մը կարելոր է նաեւ հասկնալու համար մտածելակերպը Ագրպէյճանի ղեկավարութեան, որ Թուրքիոյ «կրտսեր գործընկերն» է: Գաղտնի փաստաթուղթը անմիջականօրէն կ'առնչուի վարչապետ Նիկոլ Փաշինեանի հետեւողական ջանքերուն՝ «Խաղաղութեան պայմանագիր» ստորագրելու նախագահ Իլիհամ Ալիեւի հետ՝ այն համոզմամբ, թէ նման թուղթի կտոր մը կրնայ կանխել Ագրպէյճանի յարձակումը Հայաստանի վրայ:



Բազմաթիւ վախազդու զուգահեռներ նկատելի են 1920 թուականին գրուածին եւ այսօր տեղի ունեցող իրադարձութիւններուն միջեւ: Յատուկ կերպով կ'ընդգծեմ թրքական գաղտնի փաստաթուղթին այն հատուածները, որոնք մեր օրերուն եւս նոյնքան չարագուշակ են.

«Կասկած չկայ, որ Հայաստանի զինադադարի առաջարկը այս պահուն, երբ ան մեկուսացուած է թէ՛ արեւմտեան, թէ՛ արեւելեան աշխարհներէն, նպատակ ունի խուսափիլ վրայ հասնող աղէտէն: Հազիւ զօրացած՝ Հայաստան բնականաբար պիտի աշխատի իրականացնել Սեւրի պայմանագիրով իր վրայ դրուած Արեւելքի հետ մեր կապը խզելու պարտականութիւնը, ինչպէս նաեւ յոյներուն հետ միասին պիտի վտանգէ մեր կեանքն ու զարգացումը: Անկարելի է, որ Հայաստանը, որ կը գտնուի մեծ իսլամական շրջանակի կեդրոնը, այդ դաժան ժանտարմի պարտականութենէն սրտի համոզմունքով հրաժարի եւ որոշէ իր բախտը լիովին կապել Թուրքիոյ եւ իսլամութեան հետ: Այդ պատճառով բացարձակ անհրաժեշտութիւն է, որ Հայաստանը քաղաքականապէս ու նիւթապէս մեջտեղէն վերցնուի: Ասոր հետ մէկտեղ, քանի որ այդ նպատակի իրականացումը կախեալ է մեր հզօրութեան ընձեռած կարելիութենէն եւ ընդհանուր քաղաքական իրադրութեան բարենպաստ ըլլալէն, ապա անհրաժեշտ է վերել նշուած կարեւոր նախապայմաններու համաձայնեցումը նախապատրաստութիւն: Անկէ կը բխի, որ քննարկման առարկայ չի կրնար ըլլալ հայերուն հետ պարզ զինադադարի համաձայնութեան մը իբրեւ արդիւնք մեր ետ քաշուելը: Հայերուն փոխանցուող զինադադարի հիմնադրոյթները ուղղուած պիտի ըլլան ոչ թէ Հայաստանէն դուրս գալուն, այլ՝ հայերը մոլորեցնելուն եւ Եւրոպայի նկատմամբ խաղաղասէր երեւալուն: Սակայն իրականութեան մէջ արդիւնքը պիտի ըլլայ մեր նպատակի աստիճանական նախապատրաստութեան ու հասունացման համար անհրաժեշտ նախապայմաններու ստեղծումը:

«Ներկայիս բացարձակ անհրաժեշտութիւն է զօրացրել հայկական բանակը եւ բռնագրաւել անոր զէնքը՝ այդպիսով կարելիութիւն չտալով, որ վերականգնի անոր ռազմական կառոյցը: Երկաթուղիները հսկողութեան տակ պահելու եւ իսլամ բնակչութեան իրաւունքները պաշտպանելու պատրուակով անհրաժեշտ է մեր ռազմական հսկողութիւնը հաստատել Հայաստանի ողջ տարածքին վրայ եւ այդպիսով մեր ձեռքին մէջ պահել Թուրքիան Ագրպէճճանին կապող բոլոր ուղիները: Վերոնշեալ նպատակը պէտք է իրականացնել քողարկուած ու փափուկ ձեւով՝ ինչպէս խաղաղութեան պայմանագրի բովանդակութեան, այնպէս ալ անոնցմէ բխող գործողութիւններուն մէջ՝ հայերուն համար մնայուն կերպով խաղաղասէր երեւելու պայմանով:

«Ընդունումը սահմանին վերաբերեալ հանրաքուէ կատարելու սկզբունքին, որ կը հանդիսանայ առաջին կէտը այսօր ձեզի ուղարկուած զինադադարի համաձայնագիրին, զոր պէտք է փոխանցէք Հայաստանի կառավարութեան, կը բխի Հայաստանի հետ սահմաններու վերջնական որոշումը խոչընդոտելու ձգտումէն: Կրնաք ժամանակաւորապէս ընդունիլ Պրեստ Լիթովսքի սահմանագիծը, քանի որ նպատակ դրուած է այդ հարցին մէջ հայերուն ձեռքէն նախ եւ առաջ սահմանի վերաբերեալ գրաւոր առաջարկ ստանալ եւ այդպիսով խոչընդոտել բանակցութիւններու փակուղի մուտքը: Սակայն անհրաժեշտ է յարատեւ միջամտութեան համար հող նախապատրաստել՝ սահմանի միւս կողմը մնացող իսլամ փոքրամասնութեան իրաւունքները պաշտպանելու պատրուակով: Պայմանագիրին մէջ պէտք է ներառել կէտեր, որոնք պիտի ապահովեն կարելի եղածին չափ արագ թշնամիին ձեռքէն զէնքի բռնագրաւումը եւ անոր բանակի զօրացումը: Անհրաժեշտ է յատուկ ջանքեր գործադրել քայլ առ քայլ տարածաշրջանի թուրքերը զինելու եւ ազգային զինուած ուժեր

ստեղծելու ուղղութեամբ: Անոնք իրարու պիտի կապեն Արեւելքն ու Արեւմուտքը եւ Ազրպէյճանը դարձնեն ինքնուրոյն թրքական պետութիւն»:

Կան շարք մը մտահոգիչ նմանութիւններ 1920-ի թրքական փաստաթուղթին մէջ արտայայտուած թշնամական մտադրութիւններուն եւ այսօրուան իրավիճակին միջեւ.

1.- Հայաստանի եւ Ազրպէյճանի միջեւ ստորագրուելիք «Խաղաղութեան պայմանագիրը» չի խանգարեր նախագահ Ալիեւը իր բազմիցս յայտարարած մտադրութիւնը իրականացնել՝ ներխուժելու եւ գրաւելու ամբողջ Հայաստանի Հանրապետութիւնը, զոր ան կը կոչէ «Արեւմտեան Ազրպէյճան»: Ալիեւի չարամիտ մտադրութեան լաւագոյն ապացոյցը անոր մնայուն սպառնալիքներն են, որոնք Հայաստանէն անվերջ զիջումներ կը պահանջեն: Որքան Նիկոլ Փաշինեան բաւարարէ Ալիեւի փափաքները, այնքան Ալիեւի պահանջները պիտի աւելնան:

2.- Եթէ Փաշինեանն ընդունի Ալիեւի պահանջը՝ վերաբնակեցնել 300 հազար ազրպէյճանցիներ Հայաստանի մէջ, ատիկա հաւանաբար պիտի նշանակէ Հայաստանի Հանրապետութեան վերջը: Ալիեւ կրնայ ամէնէն դոյզն պատրուակն անգամ օգտագործել իր զօրքերը Հայաստան ուղարկելու համար՝ իբր թէ իր հայրենակից ազրպէյճանցիները պաշտպանելու նպատակով:

3.- 1920 թուականի փաստաթուղթին մէջ նշուած «մեր ձեռքը պահել Թուրքիան Ատրպէյճանին կապող բոլոր ճամբաները» յղումը նման է «միջանցք»-ի ներկայի պահանջին, ուր կ'արտացոլայ Թուրքիոյ դարաւոր ձգտումը դէպի «Թուրանի ճանապարհ»՝ կապելու Կեդրոնական Ասիոյ թուրքական հանրապետութիւնները Թուրքիոյ:

ՀԱՅ ԴՊՐՈՑ, ՀԱՅ ՈՒՍՈՒՑԻՉ

ՀԱՅ ԹԵՐԹ, ՀԱՅ ԽՄԲԱԳԻՐ

ՀԱՅ ՀԱՅԵՐԷՆԱԳԷՏ, ՀԱՅ ԲԱՆԱՍԷՐ

ՊԱՐՈՅՐ Յ. ԱՂՊԱՇԵԱՆ



Հակառակ բոլոր ճիգերուն ու ջանքերուն, Մփիւտքը տակաւ կը տառապի բազմաթիւ տագնապներէ, որոնք իր ամենօրեայ կեանքին մէջ նշմարելի են եւ երթալով աւելի կը խորանան:

Կար ժամանակ, երբ այդ բոլորը նուազ մտահոգութիւններ էին, ընդհակառակը, միշտ բարեկարգելի եւ ուսանելի էին, ուրախալի ու հպարտալի, որովհետեւ ատոնք սեղմօրէն ու լրջօրէն առնչուած էին



հայոյ ինքնութեան պահպանումին ու կառչածութեան հետ, «հայապահպանում»ի համատարած խորագիրի եւ օրակարգի տակ:

Ինչ խօսք, որ «հայապահպանում» հասկացողութիւնը, իր լիարժեքութեամբ, բովանդակութեամբ ու համատեղութեամբ, յարատեւեց եւ ապրեցուց, դաստիարակեց ու լիացուց իրերայաջորդ սերունդներ:

Այո՛, շատ բան կը պարտինք «հայապահպանում»ի խորիմաստ ու լայնահունչ ըմբռնողութեան, որ դարձաւ բեղուն եւ իմաստալի դպրոց, Սփիւռքը կազմակերպելով ու կերտելով, ճոխացնելով ու ճիւղաւորելով, որովհետեւ յետեղեանք, այլընտրանք չէր ձգած ու չէր ձգեր, բացի՝ «հայապահպանում»ի կենդանացնող սնունդով սնուելու ու գոյատեւելու ապահով ու կայուն ուղիներ փնտռելով եւ այդ հիմունքներով դիմելու վերագարծոնքի իրագործումներուն:

Անկասկա՛ծ, Հայոց Ցեղասպանութենէն ետք, երբ տարագրուած հայութիւնը ցիրուցան եղաւ եւ իր գոյութիւնը պահպանելու համար, միակ ելքն ու ճարը, «հայապահպանում»ի արահետներով առաջնորդուիլն էր եւ գալիք սերունդները այդ ոգիով ու շունչով կրթելը: «Հայապահպանում» մը, իր բազմաճիւղութեամբ ու տարակազմաւորութեամբ, ամբողջ «պատմագրականութիւն» մը հանդիսացաւ եւ անոր սկզբունքներն ու հայեացքները որդեգրելով, ճամբայ հարթեց եւ ակօսեց ընդունելի տարագումներով ու լոգունգներով, հայութիւնը ԵՐԲԵՔ չդարձնելով... Թանգարանի պահեստային նմոյշ:

Ինչ խօսք որ՝ «հայապահպանում»ը, հայ ժողովուրդին համար, նորութիւն չէր, անիկա կար պատմութեան երկարամեայ յառաջիադացքներու ընթացքին, բայց, մնաց կանգուն, իսկ 1915էն ետք, ան ստացաւ բոլորովին նոր գունաւորում, արժեւորում ու գնահատում, մանաւանդ՝ երբ իր «լինել-չլինելու» հրամայականներուն առջեւ, անխուսափելի կը դառնար «հայապահպանում»ի նման հզօր եւ ազդու զինամթերքով պայքարիլ բոլոր անոնց դէմ, որոնք կը կարծեն հայութիւնը հաշուեյարդարի ենթարկած ըլլալ...:

Ներկայիս, երբ հայ իրականութիւնը, ի Հայաստան թէ ի Սփիւռս, կը դիմագրաւէ բազմաբնոյթ ու բազմատեսակ մարտահրաւերներ, արդեօք նոյն «հայապահպանում»ը կրնա՞յ նպաստել անոր դէմ ծառացած նորագոյն կոշտ ու կոպիտ օրակարգերուն:

Միամիտ պէտք է ըլլալ, հաւատալու, որ «հայապահպանում»ի երեկուան միջոցներով ու կարելիութիւններով կարելի է պայքարիլ հայ ժողովուրդին դէմ ցցուած բազմակուտակ խոչընդոտներուն ու տարաբնոյթ աղէտներուն, զի անոնք այնքան շատ են ու տեսակաւոր, թէ՛ ներքին, թէ՛ արտաքին մակարդակներու վրայ:

Այս դառն ճշմարտութիւնը ի՞նչ կը նշանակէ, եթէ ոչ՝ «հայապահպանում»ի ոլորտները նոյն արժեչափերով կարելի չէ կշռել, որքան ալ անոնք ըլլան միաձուլուած, պարզապէս անոր համար, որ այժմու պահանջները, ժամանակները, պայմաններն ու պարագաները հիմնապէս տարբեր են, հետեւաբար, կայ միտում (թերեւս ալ ստիպողութիւն), նոր դիտարկումներով ու վերափոխուած եզրոյթներով «հայապահպանում»ին հետ վերաբերուիլ, առանց սակայն, մոռնալու կամ անջատուելու այն հորիզոնականներէն, որոնք իրենց դրականութեամբ նպաստաւոր եղած են այդ երթին, իսկ այժմ, կայ նոր (ոչ-տարբեր) ուղի մը, որ հեռու ըլլալու է կրկնութիւններէ, բայց անպայմանօրէն, յարմարուելու տիրող մթնոլորտին, առանց թերագնահատելու «հայապահպանում»ի դերն ու արժեքը, որոշապէս վերանորոգուած ու վերակազմաւորուած լծակներով:

Հոս է, որ պէտք է ըլլալ զգոյշ եւ ուշադիր, չիյնալու համար ծայրայեղութիւններու մէջ կամ դառնալու գերին ոչնչութիւններու ու դատարկապորտներու, որոնք ողողած են աշխարհը, իրենց այլանդակութիւններով ու միմոսութիւններով, առաւել՝ վարակուած բջջային անհեթեթ ու խաբուսիկական վարկածներով:



Իսկ այս խայտաբղէտութիւնները, թերեւս ամենէն շատ կը վնասեն ու կը վտանգեն հայ իրականութեան, իր զանազան արտայայտութիւններով, միջամտութիւններով ու սայթաքումներով:

Անգամ մը պէտք է նայիլ մեր չորսդին, տեսնելու ու զգալու թէ մեր «հայապահպանում»ի նուիրականութիւններուն ո՞րքան հարազատ մնացած ենք, եւ ո՞րքան հեռացած:

Ճիշդ է, յաճախ մեր մատները կը դնենք մեր վերքերուն վրայ, բայց, «կը բուժե՞նք» զանոնք կամ կը ձգտի՞նք... «բուժելու», թէ՞ զանոնք կը մատենք մոռացութեան, անորոշութեան եւ անիրաւութեան, երբ այնքա՛ն կարիքը կայ զանոնք խնամելու ու գուրգուրալու եւ ոչ թէ՛ արգահատելու, անտեսելու ու շրջանցելու, երբ՝ հիմա՛, ամենէն աւելի պէտք է լծուիլ անոնց կարգաւորման, դասաւորման ու հիմնաւորման վսեմ աշխատանքներուն:

Նիւթը, որուն պիտի անդրադառնամ, արդէն իր խորագիրով պերճախօս է եւ յաճախ ալ՝ քննարկումի արժանացած, մամուլով, խորհրդակցութիւններով, ժողովներով, երբեմն ալ՝ ուսումնասիրութիւններով կամ վիճակագրութիւններով:

Անշուշտ, նման մօտեցումներ, մտածումներ ու հրապարակումներ օգտակար եղած են եւ ընդհանրապէս լոյս սփռած այդ բնագաւառներուն վրայ, նկատի ունենալով, որ անոնք ո՞րքան հրատապ են, այժմեական եւ հրամայական, զանոնք դարձնելով կիզակէտային, մտահոգութիւններ եւ առաջադրութիւններ:

Այդուհանդերձ, այդ նախաձեռնութիւնները, փորձագիտութիւնները ու սերտորոշութիւնները, բաւարար չեն եղած «արմատական» լուծումներու ու «հիմնական» բարեկարգումներու հետքերով զարգանան հոլովոյթները ու նպաստեն մեր վերնագիրին մէջ արձանագրուած եւ յիշուած դաշտերուն:

Եթէ, մէկ կողմէն՝ այդ «թուլացում»ները կը վերագրուին, անհրաժեշտ զգոնութեան, հետեւողութեան ու նախանձախնդրութեան բացակայութեան կամ անբաւարարութեան, միւս կողմէն ալ՝ ոչ-նուազ տարողութեամբ, անոնք առընչուած են համապատասխան մասնագէտներու չգոյութեան կամ նուագումին, իսկ անոնք մեծապէս կը տուժեն հայերէնը՝ իր տարբեր ճիւղերով ու բաժիններով զգաստ պահելու անմիջականութեան, արտադրականութեան եւ յարատեւութեան, զայն միշտ կանգուն եւ արդիւնաշատ տեսնելու հեռանկարներով:

Այս առիթով, մեր այս գրութեան մուտքին, յատուկ դիտաւորութեամբ յիշատակած էինք «հայապահպանում» եզրին մասին, որուն լծակները, ամուր եւ յոսւադրիչ դարձնելու պայմաններով պէտք է դիտել, որպէսզի, նախ՝ քայլ պահուի տիրող մտայնութիւններուն ու դատումներուն հետ, ապա՝ «հայապահպանում»ի ըմբռնումն ու գործունէութիւնը դրուին, ոչ միայն անշեղ ուղեգիծի վրայ, այլեւ՝ զայն պարուրելով նորագոյն հնարքներով, առանց սակայն, խեղաթիւրելու կամ լուսանցքելու անոր ոգին, էութիւնը եւ ինքնութիւնը:

Այս առումով, կ'արժէ յիշել հետեւեալ անժխտելի եւ անվիճելի «հայապահպանում»ի սիւները, որոնք զայն կը պահեն աներեր, գործունեայ, բերքաւոր, մշտանորոգ ու գրաւիչ, միանգամայն, ծառայելով հայ ժողովուրդի կենսունակութեան, առատաշնորհութեան ու կենդանութեան, որոնք այնքան անհարժեշտ ու կարելոր են, որ «հայապահպանում»ը միշտ մնայ իր կոչումին ՀԱՐԱՅՈՒՄ կրողը ու սերունդներու դաստիարակութեան մշակողը:

Իսկ հայութիւնը, օդի ու ջրի նման կարիքը ունի իր արմատներուն տէր դառնալու, առանց ընկրկումի ու նահանջի, տատանումի եւ անկիւնաւորումի, անձնատուութեան ու գերեվարութեան:

«Հայապահպանում»ի աննկուն սիւներն են (եւ պէ՛տք է մնան այդպիսին), պայմանաւ որ հաւատարիմ դառնան իրենց ուխտին ու տեսիլքին, թէեւ, երբ կը թունք զանոնք, դեմ



յանդիման կու գանք անխուսափելի (բայց, ոչ-ընդունելի) «պարապ»ութիւններու, որոնք կրնան տկարացնել հայոյ դիմադրականութիւնն ու տոկունութիւնը:

Այսպէս.

● **ՀԱՅ ԴՊՐՈՑ ՈՒ ՀԱՅ ՈՒՍՈՒՑԻԶ**

Հայկական վարժարանները պատնէշի վրայ են, թէւ զգալի փակումներով ու միացումներով, որոնց ոչ բոլորը արդարանալի ու համոզիչ էին, բայց, չոր իրականութիւնը ինքզինք պարտադրած է, երբ պէտք էր ըլլար աւելի գիտակից ու հեռատես կամ գտնէր զանոնք դարմանելու միջոցները կամ խուսափելու ահաւորագոյններէն, կարելի չափով, տրամաբանական հաշուարկներով:

Ի դէպ, հայ ուսուցիչներով ոչ միայն հարուստ էինք, այլեւ՝ գէթ լիբանանահայութիւնը, այլ գաղութներ իսկ կը մատակարարէր ուսուցիչներ, խմբագիրներ, գործիչներ դրկելով, որոնք անխառն շնորհակալութեամբ կ'ողջունուէին, իսկ այսօր, բարախուն այս գաղութը ինք կ'ապրի այդ... ակամայութիւնը, միջդեռ, կար ժամանակ, երբ արաբական դպրոցներուն մէջ իսկ ունէինք յարգելի ու բազմակարող ուսուցիչներ:

Աշակերտութեան թիւերու նուազումը, որքան ալ ցաւալի, քաղաքական-ապահովական վտանգներու արդիւնք է, սակայն, երբ անոնք ոչ-հայկական դպրոցներ կը յաճախեն, ասիկա ահաւոր անփութութիւն է, որուն համար, պատկան պատասխանատուներ (գտնուելու են), պէ՛տք է գտնուին աշակերտութեան գերագոյն պատասխանատուութեան դիմաց:

● **ՀԱՅ ԹԵՐԹ ՈՒ ՀԱՅ ԽՄԲԱԳԻՐ (ՀՐԱՊԱՐԱԿԱԳԻՐ)**

Հայ մամուլը, իր պատմութեան մէջ, միշտ ինքզինք գերազանցած է, իր որակով ու մակարդակով, ճոխութեամբ ու բովանդակութեամբ, դերակատարութեամբ եւ ընթերցասիրութեամբ, մինչ այսօր, «կը շնչէ», բայց, մեղմ ըսած, հիւանդագին կարգով, որուն պատասխանատուութիւնը միշտ չէ որ կ'երթայ ընթերցողին, այլ՝ անոր նկատմամբ ցուցաբերուած անտարբերութեան, որուն մէջ... «կը փայլին» ԱՆՅԱՆՁՆԱՌՈՒ եւ ԱՆԻՐԱՏԵՍ տժգոյն դէմքեր, իսկ այս ընթացքը, կրնայ աղիտաբերութեան տանիլ «լոյսի աղբիւր» թերթը, մանաւանդ որ՝ այսօրուան դրութեամբ, բացի մատի վրայ համրող յարգելի խմբագիրներէ ու հրապարակագիրներէ, դժուար է գտնել նորակոչիկներ ու փոխարինողներ, ոչ թէ «չկայ»ի պատրուակով, այլ՝ այս մէկն ալ ձգելով... ԱՆԴԵԿութեան դարպասներուն առջեւ:

● **ՀԱՅ ՀԱՅԵՐԷՆԱԳԷՏ ՈՒ ՀԱՅ ԲԱՆԱՍԷՐ**

Խորհրդային Հայաստանի պանծալի եւ երախտաշատ օրերուն, Սփիւռքէն եւ յատկապէս Լիբանանէն ու Սուրիայէն, ի շարս այլ մասնագիտական ճիւղերու հետեւորդներուն, հասարակագիտական-հայագիտական նիւթերուն, զգալի թեկնածուներ ալ կային, որոնք ընտրած էին հայերանագիտութիւնն ու բանասիրութիւնը, այդ հարուստ գիտելիքներով զինուած, վերադառնալու Սփիւռք ու ծառայելու իրենց առաքելութեան ու կոչումին, յանուն հայութեան, հայրենիքին ու համայնքներուն:

Այժմ, կը դժուարանամ ըսելու, թէ անոնցմէ քանի՞ հոգին, մնաց հարազատ ու հաւատարիմ իր ձեռք ձգած մասնագիտութիւններուն...:

Այսօր, հայերէնագէտ փնտռելը (ալ ո՛ր մնաց բանասէրը) իսկական... ցնորք է, հակառակ որ՝ լռելեայն քաջալերողներ կան, բայց... ականջ չդնողներ ալ կան, վերէն վարէն, աջէն ու ձախէն: (Այս ալ ուրիշ պատմութիւն):

Ահաւասիկ, հին ու նոր հսկայածաւալ թղթածրար մը, որ վերջին տարիներուն դարձաւ մնայուն մղձաւանջ, իր այս եւ այլ՝ լուծուած-չլուծուած, մասնակի թէ մասամբ տնօրինումներով, սակայն, ցաւը, հոգը, մնացին շեշտակի, երբ «դեգերում»ները չկրցան ուղիներ գտնել կամ իրենց նպատակին հասնիլ, ուրեմն, ի՞նչ, «զնացք»ը այս ճամբով կրնա՞յ ընթանալ, թէ՞՝ պիտի սուլէ՝-սուլէ՛, շոգիէ՛-շոգիէ՛ ու հետզհետէ խամրի ու տժգունի...:

(Պէյրութ)

Հրատապ Օրակարգերու Գծով

4/2/2026

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՆՈՐՈՇՈՒԹԵԱՆ ԵՒ ՌԱԶՄԱԿԱՆ ՎՏԱՆԳՆԵՐՈՒ ՄԻՋԵՒ՝ ՍՈՒՐԻՈՅ ՄՈՌՑՈՒԱԾ ՀԱՅԵՐԸ

✉ **ՀՐԱՉ ԶԻԼԻՆԿԻՐԵԱՆ**

23/1/2026

Դոկտ. Հրաչ Զիլինկիրեան

Այսօր Սուրիա կը մնայ բաժնուած քաղաքական տարածք մը, որ կը բնորոշուի ոչ միայն աւերիչ քաղաքացիական պատերազմի ժառանգութեամբ, այլ նաեւ երկրի կեդրոնական իշխանութեան եւ հիւսիսային ու հիւսիս-արեւելեան շրջաններուն մէջ գործող քրտական ուժերու միջեւ չլուծուած լարուածութիւններով: Պարբերաբար ծագող բախումները, փոխուող դաշինքները եւ վիճարկուած կառավարման համակարգերը կը շարունակեն անկայունութիւն եւ անորոշութիւն ստեղծել, յատկապէս փոքրամասնութիւններու համար, որոնք կը գտնուին տարբեր ուժային կեդրոններու միջեւ: Այս խոցելի պայմաններուն մէջ, քրիստոնէայ փոքրամասնութիւնները՝ ներառեալ հայերը, ստիպուած են իրենց գոյատեւումն ու անվտանգութիւնը ապահովել առանց հաւասար քաղաքացիութեան իրական երաշխիքներու:

Պատմականօրէն Սուրիոյ հայերը կազմած են երկրի հասարակական եւ մշակութային հիւսուածքի անբաժան մասը: Հալէպը տասնամեակներ շարունակ եղած է սփիւռքահայ կեանքի ամենէն կենսունակ կեդրոններէն մէկը՝ իր դպրոցներով, եկեղեցիներով, մամուլով եւ մշակութային հաստատութիւններով: Այս համայնքային հզօր ներկայութիւնը, սակայն, 2011-էն ի վեր կտրուկ կերպով նահանջեց՝ զանգուածային տեղահանութիւններու, տնտեսական փլուզման եւ անվտանգային անկայունութեան հետեւանքով:



Այսօր Սուրիոյ հայ համայնքը թիւով փոքրացած է, հաստատութիւնները թուլցած են, իսկ ապագան խորապէս անորոշ է: Այն, ինչ որ երկար տարիներ ինքնաբաւ համայնք մը էր, վերածուած է խոցելի մնացորդի մը, որ կը գոյատեւէ հիմնականօրէն քրիստոնէական եկեղեցիներու եւ սփիւռքեան աջակցութեան շնորհիւ: Այս իրադրութիւնը Սուրիոյ մէջ հայ ներկայութեան պատմական ընթացքին



մէջ խոր եւ վտանգաւոր խզում մը յառաջացուցած է:

Հայկական երեք կրօնական յարանուանութիւնները այս պայմաններուն մէջ կը շարունակեն խաղալ աւելի լայն դեր, քան զուտ հոգեւոր առաջնորդութիւնը: Անոնք կը գործեն որպէս համայնքային կառավարման առանցք, մարդասիրական աջակցութեան կազմակերպիչներ եւ պետութեան հետ միջնորդներ: Պատերազմի տարիներուն եկեղեցիները վերածուեցան նաեւ ապաստանի եւ պաշտպանութեան վայրերու՝ շարունակելով Արեւելեան քրիստոնէութեան մէջ արմատացած պատմական աւանդոյթ մը:

Հայերու եւ Սուրիոյ այլ կրօնական համայնքներուն յարաբերութիւնները ընդհանուր առմամբ խաղաղ եղած են, սակայն միշտ ալ հիմնուած գործնական համակեցութեան, այլ ոչ թէ իրական հաւասարութեան վրայ: Պատերազմը ի յայտ բերաւ այս համակեցութեան փխրուն բնոյթը եւ փոքրամասնութիւններու խոցելիութիւնը՝ պետական իշխանութեան կազմաքանդման պայմաններուն մէջ:

Սուրիոյ մէջ հայկական մշակութային եւ կրօնական ժառանգութիւնը կը մնայ խորապէս արմատացած, սակայն նաեւ լքօրէն վտանգուած: Տէր Զօրի նման վայրեր կը յիշեցնեն, որ այս ներկայութիւնը միայն մշակութային չէ, այլ նաեւ պատմական յիշողութեան եւ հաւաքական տառապանքի մաս է:

Այսօր հարցը այլեւս միայն վերակառուցում չէ, այլ գոյատեւման քաղաքական եւ իրաւական պայմաններու ապահովումը: Առանց հաւասար քաղաքացիութեան, կայուն անվտանգութեան եւ իրական իրաւունքներու, Սուրիոյ հայ համայնքին ապագան մոայլ կը մնայ: Նոյն ճակատագիրը կը սպառնայ նաեւ քրիստոնէայ այլ համայնքներու՝ անկախ այն բանէն, թէ որ ուժը կը վերահսկէ տուեալ տարածքը:

Ցաւօք, աշխարհաքաղաքական արագ զարգացումներուն, ինչպէս նաեւ Հայաստանի եւ տարածաշրջանի մէջ ընթացող լուրջ ու շարունակական ճգնաժամային պայմաններուն տակ, Սուրիոյ հայ համայնքի վիճակը կարծեք այլեւս առաջնահերթութիւն չէ սփիւռքի մեծ մասին համար: Միջազգային ուշադրութեան եւ սփիւռքեան ներուժի սահմանափակման այս մթնոլորտին մէջ, Սուրիոյ հայերը կը մնան լուսանցքի վրայ՝ իրենց գոյութենական խնդիրներով եւ անորոշ ապագայով:

Ստորեւ՝ թարգմանաբար կու տանք Հրաչ Զիլինկիրեանի 2023-ին [գիրքի մը](#) մէջ հրատարակուած «Միջին Արեւելքի հայ համայնքները. Ապագային՝ անցեալը պիտի կորստի՞» ամփոփ եզրակացութեան բաժինը:

Արդեօք Միջին Արեւելքի քրիստոնէաներու եւ յատկապէս հայկական համայնքներու ապագան վտանգուած է

Հրաչ Զիլինկիրեան

«Առաջին համաշխարհային պատերազմէն եւ Օսմանեան կայսրութեան մէջ գործադրուած ցեղասպանութենէն ետք, վերապրած հայերը յաջողեցան վերակառուցելու համայնքներ: Անոնք նաեւ շինեցին եկեղեցիներ, դպրոցներ, մշակութային ենթակառոցներ եւ



հաստատութիւններ հիմնականօրէն Սուրիոյ, Լիբանանի, Եգիպտոսի, Իրաքի եւ Միջին Արեւելքի այլ փոքր համայնքներուն մէջ: Այս բոլորը կարելի դարձան շնորհիւ եւրոպական հոգատարութեան տակ անցած արաբական պետութիւններու շնորհած կրօնական եւ քաղաքացիական որոշակի իրաւունքներուն, որոնք նման էին Օսմանեան կայսրութեան *միլէթի* համակարգին: Վերակառուցումը կարելի եղաւ նաեւ շնորհիւ [ցեղասպանութենէն] վերապրածներու եւ յաջորդող սերունդներու վճռականութեան՝ վերականգնելու հայկական համայնքային կորսուած կեանքը զիրենք ընդունող երկիրներուն մէջ: Աւելի քան մէկ դար հայերը միլիառաւոր տոլարներ, աշխատանք եւ հաւաքական ճիգ ներդրած են Միջին Արեւելքի մէջ իրենց մշակոյթը, լեզուն եւ աւանդոյթները հաստատելու եւ կենսականացնելու համար:

«1970-ականներէն սկսեալ, տարբեր ալիքներով, Միջին Արեւելքի հայերը սկսան մասնաւորաբար գաղթել դէպի Հիւսիսային Ամերիկա, Եւրոպա եւ Աւստրալիա՝ հիմնականօրէն Լիբանանի քաղաքացիական պատերազմին, Իրանի իսլամական յեղափոխութեան, Իրաքի պատերազմներուն եւ շարունակուող տնտեսական դժուարութիւններուն պատճառով: Եթէ արտագաղթի հակումը շարունակուի, այդ մէկը կրնայ նշանակել տարածաշրջանի քրիստոնէական հնագոյն համայնքներէն մէկուն ընկերամշակութային մահը:

«Աւելի քիչ տեսանելի են պետութեան, ընկերութեան եւ կրօնական հաստատութեան դերերը Միջին Արեւելքի մէջ հայկական եւ ընդհանրապէս քրիստոնէայ համայնքներու երկարատեւ կենսունակ ներկայութեան մէջ: Միջին Արեւելքի մէջ, քրիստոնէայ փոքրամասնութեան անդամ ըլլալը «ուրիշ» կամ «այլ» ըլլալու բեռը ծանր է: «Այլականացումը» ('othering') կը յայտնուի տարբեր մակարդակներու վրայ. ա) կայ իմ բնորոշումով «փափուկ այլականացումը» պետութեան կողմէ՝ օրէնքներու, արգելքներու եւ բազմաթիւ պարագաներու ոչ-իսլամներու նկատմամբ խտրականութեան ճամբով. բ) Միջին Արեւելքի իսլամ մեծամասնութիւն ունեցող երկիրներու մէջ աւելի մեծ հասարակութեան կողմէ միտումնաւոր կամ ակամայ դրուած ընկերային սահմանափակումներով. եւ (գ) ընկերութեան իսլամիսթ հատուածներուն կողմէ դիտուած «կարծր այլականացումը», որ ոչ-իսլամները կը ներկայացնէ իբրեւ «անհաւատներ» (infidel), հետեւաբար, ըստ սահմանումին, երկրորդ կարգի քաղաքացիներ:

«Յիսուն տարի առաջ պատմաբան Ռիչըրտ Յովհաննիսեան նկատած է, որ հայերը եւ ոչ-իսլամ այլ համայնքները Միջին Արեւելքի մէջ «դէմ յանդիման կը գտնուին անբարենպաստ այնպիսի գործօններու, որ անոնց ապագան լաւագոյն պարագային անկայուն կը դարձնէ»: Այսօր իրավիճակը ոչ միայն անկայուն է, այլեւ՝ չափազանց ճգնաժամային: Միջին Արեւելքի հայերուն եւ ընդհանրապէս քրիստոնէաներուն առջեւ ծառացած իրողութիւնները կը պատկերեն անորոշ ապագայ մը, որովհետեւ յամեցող հակամարտութիւնները կրնան շարունակուիլ երկար տարիներ: Ինչպէս այս գլուխին ենթավերնագիրը կը նշէ, վտանգուած է եւ թերեւս ապագային կորսուելու է անցեալին մէջ արմատացած Միջին Արեւելքի ամենէն հարուստ կրօնական եւ մշակութային ժառանգութիւններէն մէկը»:

ԴՊՐՈՑԸ՝ ԼԵԶՈՒԱԿԱՆ ԴԻՄԱԴՐՈՒԹԵԱՆ ԱՄՐՈՑ ԵՒ ԻՆՔՆՈՒԹԵԱՆ ԴԱՐԲՆՈՑ

20/1/2026

ԱՐՏԱ ՃԵՊԷՃԵԱՆ

Դոկտոր ընկերալեզուաբանութեան

Ներածական



Թէեւ դպրոցը, Եկեղեցին, մամուլն ու մշակութային միութիւնները կենսական դեր ունին վտանգուած լեզուներու պահպանման մէջ, սակայն ընկերալեզուաբանական իրականութիւնը կը հաստատէ անվիճելի ճշմարտութիւն մը՝ լեզուի գոյութեան գլխաւոր երաշխաւորը տունն է։

Լեզուի մը մահուան, պահպանման կամ

վերակենդանացման ճակատագիրը կը վճռուի ընտանեկան յարկին տակ։ Ուստի, եթէ կը փնտռենք արեւմտահայերէնի՝ վտանգուած լեզուի մը, փրկութեան բանալին, զայն պէտք է փնտռել նախ եւ առաջ ծնողքին գիտակից հոգիէն եւ տան սեմէն ներս։

Նախքան յառաջանալը՝ անհրաժեշտ էր կատարել այս կարեւոր մատնանշումը։

Այս յօդուածին նպատակը

Ընդառաջելով ընթերցողներու փափաքին ու հետաքրքրութեան՝ նախաձեռնեցի սոյն յօդուածին։ Սակայն այս յօդուածը պիտի կեդրոնանայ կրթական օճախի՝ «Էթնիք» դպրոցին, դերակատարութեան վրայ՝ վտանգուած մայրենի լեզուի մը պահպանման գործընթացին մէջ։ Հայկական վարժարանները՝ Սփիւռքի տարածքին, կամ մաուրի դպրոցները՝ Աւստրալիոյ եւ Նոր Զելանտայի մէջ, եւ օթոմի կրթօճախները՝ Մեքսիքայի մէջ, պարզ կրթական հաստատութիւններ չեն, այլ՝ լեզուական եւ մշակութային դիմադրութեան ամրոցներ եւ ինքնութեան պահպանման կենսական միջավայրեր։

Դպրոցներու զարգացումը արտերկրի համայնքներուն մէջ

Արտերկրի համայնքներուն մէջ դպրոցները զարգացան, երբ ժողովուրդներ գաղթեցին կամ տեղահանուեցան, յատկապէս՝ 16-20-րդ դարերուն, երբ առեւտուրը, կայսրութիւնները, հալածանքներն ու բռնի գաղթերը ստեղծեցին մեծ եւ մնայուն սփիւռքներ։ Անոնց նպատակն

Էր կանխել ձուլումը եւ պահպանել ազգային ինքնությունը հայրենիքէն հեռու: Այսօր ալ «Էթնիք» դպրոցները կը շարունակեն իրենց առաքելությունը՝ կամրջելով տեղական պետական կրթական չափանիշները ազգային ժառանգութեան հետ, պատրաստելով օրինակելի քաղաքացիներ, որոնք միաժամանակ տէր կը կանգնին իրենց արմատներուն:



Հայկական իմաստով, յատկապէս՝ Հայոց ցեղասպանութենէն ետք, 1920-ական թուականներէն սկսեալ, Միջին Արեւելքի եւ աւելի ուշ Արեւմուտքի մէջ դպրոցները դարձան մշակութային ամրոցներ, ուր նոր սերունդները կը սորվէին մայրենի լեզուն, պատմությունը եւ եկեղեցական ասանդությունները:

Լիբանանի մէջ հայկական վարժարաններու հիմնադրությունը սերտօրէն կապուած էր գաղթականներու զարգացման հետ, յատկապէս՝ Պէյրութի ու Պեքայի շրջաններուն մէջ, թէեւ 1902 թուականին Ս. Նշան եկեղեցոյ շրջափակին մէջ հիմնուած էր Ս. Նշան վարժարանը՝ հետագային Սուրէն Խանամիրեան ազգային քոլէճը: 1922-ին վերապատուելի Ենովք Հատիտեանի ջանքերով Ատանա քեմփի հիւղաւանին մէջ հիմնուեցաւ Հայ աւետարանական կեդրոնական բարձրագոյն վարժարանը: 1930-ին Պուրճ Համուտի նորակազմ թաղամասին մէջ հաստատուած մարաշցի վերապրողներուն համար հիմնուեցաւ Նոր Մարաշի Հայ աւետարանական վարժարանը (այժմ՝ Շամլեան-Թաթիկեան երկրորդական վարժարան):

Նոր Ատանա թաղամասին բնակիչները, իրենց ծննդավայրի Աբգարեան վարժարանի յիշատակը յաւերժացնելու համար, 1931-ի աշնան, Լիբանանի Հայոց թեմի առաջնորդարանի կողմէ լիազօրուած երկու ազգայիններով՝ Յակոբ Տիգրանեան եւ Երուանդ Թաւուզճեան, 40 աշակերտներով հիմը դրին Ազգային Աբգարեան վարժարանին:

Սսեցի գաղթական հայերու ճիգերով, 1930-ին կառուցուեցաւ փայտաշէն եւ թիթեղածածկ վարժարանը, որ կոչուեցաւ Ազգային Լուսինեան վարժարան: 1932-ին երկու յարկի վրայ կառուցուեցան վեց սենեակներ, որոնք օգտագործուեցան իբրեւ նախակրթարանի դասարաններ:

Նոյն թուականին Լեւոն Շանթի եւ Նիկոլ Աղբալեանի նման մտաւորականներու կողմէ հիմնադրուեցաւ Համազգայինի Ճեմարանը՝ նպատակ ունենալով սփիւռքի մէջ



պատրաստել հայ մշակոյթի ու ղեկավարութեան նոր սերունդ մը: Այս ժամանակաշրջանին իրենց կրթական առաքելութիւնը ծաւալեցին նաեւ Միւսիթարեան հայրերը՝ 1930-ականներու սկզբնաւորութեան պաշտօնական դպրոց հաստատելով Լիբանանի հայ գաղթականութեան զաւակներուն համար:

Իսկ Հալէպը դարձաւ Ցեղասպանութենէն վերապրողներու գլխաւոր կեդրոնը, ուր բազմաթիւ վարժարաններ հիմնուեցան: 1919-ին Բերիոյ հայոց թեմի առաջնորդարանին կողմէ հիմնուեցաւ Հայկազեան վարժարանը: 1924-ին Այնթապի Կրթասիրաց միութիւնը հիմնեց Կրթասիրաց վարժարանը: Զաւարեան վարժարանը, որ սկզբնապէս հիմնուած էր 1925-ին՝ որպէս Ներսէսեան դպրոց, նախապէս կը ծառայէր որպէս չափահաս որբերու կեդրոն, իսկ հետագային վերածուեցաւ նախակրթարանի՝ Հալէպի Նոր Գիւղ (Մէյտան) թաղամասին մէջ: 1927-ին հիմնուեցաւ Սահակեան վարժարանը՝ անուանուած Սահակ Բ. Խապայեան կաթողիկոսի անունով, որուն կառուցումը իրականացաւ Հնդկաստանի եւ Պրագիլի հայ գաղութներու նուիրատուութիւններով: 1930-ին Ներսէս Կիւլպէնկեանի բարերարութեամբ հիմնադրուեցաւ Կիւլպէնկեան վարժարանը՝ սպասարկելով Սուլէյմանիէ թաղամասի աճող հայ բնակչութեան:

Դպրոցին հիմնական դերակատարութիւնները

Դպրոցները կը տրամադրեն յատուկ ժամանակ եւ վայր՝ լեզուի պաշտօնական կրթութեան համար, այլ նիւթերու կողքին: Համախմբելով տարբեր ընտանիքներէ եկած անհատներ՝ դպրոցը կը ստեղծէ ընկերային միջավայր մը, ուր լեզուն կը խօսուի եւ կ'արժեւորուի՝ զայն դարձնելով իրենց առօրեայ կեանքին բնական մէկ մասը: Ասիկա կ'օգնէ բնականօրէն դարձնելու լեզուի գործածութիւնը եւ կրնայ պայքարիլ ամէկոտութեան կամ մեկուսացման զգացումներուն դէմ, որոնք յաճախ կապուած են փոքրամասնութեան լեզուով խօսելուն հետ:

Պատմական փորձառութիւնը ցոյց կու տայ սակայն, թէ տեղական կրթական համակարգերը յաճախ վերածուած են փոքրամասնութիւններու լեզուներու խափանման եւ կորուստի միջոցներու: Հարկ է հարց տալ, թէ ինչպէ՞ս յառաջացած է այս երեւոյթը:

Լեզուական քաղաքականութիւնը որպէս բռնի ձուլման միջոց

Միացեալ Նահանգներու, Միացեալ Թագաւորութեան եւ Աւստրալիոյ մէջ, օրինակի համար, լեզուական քաղաքականութիւնը ծառայեց որպէս բռնի ձուլման հզօր գործիք, որուն նպատակն էր տեղական/ցեղային եւ գաղթական հաւաքականութիւններու ինքնութիւնը ձուլել անգլիախօս ազգային կերպարի մը մէջ:



Մայրենիի հալածանքը արեւմուտքի մէջ

Միացեալ Թագաւորութեան մէջ կը պատժէին այն երեխաները, որոնք կելտական լեզուներ կը խօսէին, ինչ որ պատճառ դարձաւ ուելշ, քորնիշ եւ մենքս լեզուներու գրեթէ անհետացման: Թէեւ Միացեալ Նահանգները միշտ ալ եղած է լեզուական հսկայական բազմազանութեամբ երկիր մը, սակայն այն նաեւ յաճախ կը նկարագրուի որպէս «լեզուներու գերեզմանոց»: Նիւ Եորքի մէջ, ուր նախապէս 800 լեզուներ վաւերագրուած էին, այսօր միայն 180-ի հետքերը կը գտնուին: Աւստրալիոյ քաղաքականութիւնը ի վերջոյ նուազեցուց երկրի լեզուական հարստութիւնը՝ աւելի քան 250 տեղական լեզուները հասցնելով շուրջ 120-ի, որոնք այսօր վտանգուած են:

Վերջ ի վերջոյ, այս համակարգուած ջանքերը ստեղծեցին «հեղինակութեան անջրպետ» մը, որ կը պատժէր մայրենի լեզուները եւ անգլերէնը կը հռչակէր որպէս քաղաքացիական եւ ընկերային գոյատեւման միակ լեզուն: Ընկերալեզուաբանական գետնի վրայ, անգլերէնը յաճախ կը բնորոշուի որպէս «սպաննող լեզու» (killer language):

Ափրիկեան փորձառութիւնը

Ափրիկէի մէջ գաղութատիրական լեզուական քաղաքականութիւնները հիմնականին մէջ ձեւաւորուեցան բրիտանացիներու կիրարկած «Անուղղակի կառավարման» եւ ֆրանսացիներու նախընտրած «Ձուլման» իրերամերժ փիլիսոփայութիւններով: Բրիտանացիները որդեգրեցին «բուրգի» դրութիւնը, որ թոյլ կու տար տեղական կարելոր լեզուներուն, ինչպէս՝ սուաիլիին, հաուսային կամ եորուպային, գոյատեւել տեղական մակարդակի վրայ՝ նախնական կրթութեան եւ առեւտուրի համար, մինչ անգլերէնը խստիւ վերապահուած էր օրէնքի, բարձրագոյն կրթութեան եւ վարչական «վերնախաւին» համար:

Իսկ ֆրանսացիները հետապնդեցին «Քաղաքակրթական առաքելութեան» (Mission Civilisatrice) քաղաքականութիւնը, որուն հիմքը բացարձակ միալեզուութիւնն էր: Անոնք պարտադրեցին ֆրանսերէնը՝ որպէս դպրոցական առաջին իսկ օրուան միակ ուսուցման լեզուն, եւ արգիլեցին ափրիկեան լեզուները՝ զանոնք արհամարհանքով որակելով որպէս պարզունակ բարբառներ (patois): Ասիկա յառաջացուց ֆրանսերէնի բարձր մակարդակի տիրապետում մտաւորական վերնախաւին մօտ, բայց ծանրօրէն արգելք դարձաւ տեղական լեզուներու պաշտօնական զարգացման ու կանոնաւորման:

Կրօնական քարոզչութիւն եւ լեզուական գաղութատիրութիւն

Միսիոնարական դպրոցները բախտորոշ դեր խաղցան բնիկ լեզուներու նահանջին մէջ: Բռնի կերպով հեռացնելով երեխաները իրենց ընտանիքներէն, անոնք արգիլեցին մայրենիի



գործածութիւնը՝ զայն պիտակելով «յետամնաց» կամ «սատանայական»: Լեզուի փոփոխութիւնը ներկայացուեցաւ իբրեւ հոգեւոր փրկութեան նախապայման: Նոյնիսկ երբ լեզուները գրաւոր կը դառնային Աստուածաշունչի թարգմանութեան համար, անոնք կը սահմանափակուէին լոկ կրօնական ոլորտով՝ տեղի տալով գաղութատէրերու լեզուին: Այս քաղաքականութիւնը խզեց ընտանեկան շղթան՝ սերունդներ զրկելով իրենց մայրենիէն եւ ինքնութենէն:

Հոգեբանական եւ ֆիզիքական բռնութիւն

Լեզուական այս ճնշումին կ'ընկերակցէին դաժան պատիժներ: Քենիացի հեղինակ Նկուկի ուա Թիոնկօ կը գրէ, թէ ինչպէ՛ս իր մայրենի լեզուն գործածող աշակերտը կ'ենթարկուէր ծեծի եւ նուաստացուցիչ պատիժներու: Երեխային վիզէն կախուած տախտակի մը վրայ գրուած կ'ըլլար՝ «Ես ապուշ եմ» կամ «Ես էշ եմ»: Ան պետք էր անգլերէն խօսէր: Նմանապէս, Ալասքայէն թլինկլիթ ցեղախումբէն մէկը կը գրէ. «Մինչեւ օրս, երբ թլինկլիթ խօսիմ, բերանիս մէջ օձառին համը կը զգամ»: Անոր բերանը օձառով կը լուային ամերիկացի ուսուցիչները իր մայրենի լեզուն խօսելուն համար:

Դպրոցին դերը՝ վտանգուած մայրենի լեզուի մը պահպանման գործին մէջ

Ներկայիս, բարեբախտաբար, նախկին գաղութատէր երկիրները սկսած են ընդունիլ իրենց պատմական դերը լեզուներու կորուստին մէջ եւ կը ձեռնարկեն գործնական վերակենդանացումի քայլեր, ինչպէս, օրինակ, Միացեալ Նահանգներու 2024-ի «Բնիկ լեզուներու վերակենդանացման 10-ամեայ ազգային ծրագիրը»:

Աւստրալիոյ մէջ համայնքային ու կրթական յատուկ ծրագիրներ թոյլ կու տան տեղացիներուն՝ վերատիրանալ իրենց նախնիներու լեզուական հմտութիւններուն: Միացեալ Թագաւորութեան մէջ Ուելզի կառավարութիւնը պարտադիր դպրոցական ուսուցման միջոցով նպատակ դրած է մինչեւ 2050 մէկ միլիոնի հասցնել ուէլշ խօսողներու թիւը: Ափրիկէի պարագային, նախապէս միայն բանաւոր համարուող լեզուները այսօր կը ստանան իրենց գրային համակարգերը, իսկ թուային արհեստագիտութեան ու «Google Translate»-ի նման միջոցներու շնորհիւ՝ ափրիկեան բազմաթիւ լեզուներ կը ստանան ժամանակակից հեղինակութիւն եւ կիրարկութեան նոր դաշտ:

Մորվեցնելով եւ արժեւորելով վտանգուած լեզու մը, դպրոցը կրնայ շրջել այս միտումը՝ բարձրացնելով լեզուին վարկը եւ տալով հզօր պատգամ մը, թէ այդ արժանի է ուսումնասիրութեան եւ պահպանման: Ասիկա կրնայ քաջալերել թէ՛ անհատները եւ թէ՛



ծնողները, որպէսզի լեզուին նային ո՛չ միայն իբրեւ մշակութային մասունք, այլեւ՝ իբրեւ կենդանի եւ արժեքաւոր միջոց:

Դպրոցը՝ իբրեւ լեզուի եւ մշակոյթի փոխանցման երաշխաւոր

Դպրոցը վտանգուած լեզուի մը պահպանման միակ վայրն է, ուր տեղի կ'ունենայ հետեւողական եւ համակարգուած ուսուցում: Սփիւռքեան պայմաններուն մէջ, ուր տան մէջ լեզուի գործածութիւնը յաճախ անկայուն է, կրթօճախը կը դառնայ այն հարթակը, ուր աշակերտը կը սորվի գրել, կարդալ, եւ լեզուն կ'իրարկել կանոնաւոր ձեւով: Այս միջավայրը ոչ միայն գիտելիք կը ջամբէ, այլեւ օրինականութիւն ու վարկ կու տայ մայրենիին՝ պատգամելով նոր սերունդին, որ իրենց լեզուն ոչ թէ «նախնեաց» մնացուկ է, այլ՝ արժեքաւոր ու այժմեական հաղորդակցման միջոց:

Միաժամանակ կրթական հաստատութիւնը կը լեցնէ ընտանեկան փոխանցման խզուած բացը եւ կը կերտէ հաստատուն ինքնութիւն: Այնտեղ կը ստեղծուի ապահով եւ քաջալերող մթնոլորտ մը, ուր աշակերտը զերծ կը մնայ սխալելու վախէն եւ ձեռք կը բերէ լեզուական ինքնավստահութիւն: Դպրոցը լոկ լեզու սորվեցնելու վայր չէ, այլ՝ ինքնաճանաչման դարբնոց, ուր աշակերտը կը զգայ իր պատկանելիութիւնը համայնքին՝ զինուելով մշակութային հպարտութեամբ, որ պիտի ուղեկցի իրեն ողջ կեանքի ընթացքին:

Վերջապէս, դպրոցները կը ծառայեն իբրեւ համայնքային խարիսխներ, որոնք կը կամրջեն աւանդութիւնն ու արդիականութիւնը: Անոնք կը պատրաստեն ոչ միայն խօսողներ, այլեւ՝ ապագայ ուսուցիչներ, առաջնորդներ եւ պահպաններ, որոնք ի վիճակի պիտի ըլլան շարունակելու լեզուապահպանման նուիրական գործը: Դպրոցը, համախմբելով ընտանիքներն ու ամրապնդելով ընկերային կապերը, լեզուական ծրագիրները կը վերածէ համայնքային կեանքի զարկերակին՝ երաշխաւորելով մայրենիին յարատեւութիւնը օտար ափերու վրայ:

Սփիւռքի մէջ՝ դպրոցներու մարտահրաւերները եւ սահմանափակումները

Հակառակ իրենց կենսական դերին՝ պէտք է ընդունիլ, որ սփիւռքեան դպրոցները կը դիմագրաւեն զգալի մարտահրաւերներ:

Ուսուցիչներու պակասը, դասաւանդման հինգաձէւերն ու անբաւարար աշխատավարձերը կը դժուարացնեն երիտասարդութեան ներգրաւումը: Նիւթական տագնապն ու բարձր կրթաթոշակները ընտանիքները կը մղեն դէպի անվճար պետական վարժարաններ: Դպրոցները յաճախ կը գործածեն այնպիսի լեզուական ծրագիրներ, որոնք տասնամեակներով ետ կը մնան տեղական պետական կամ համաշխարհային դպրոցներու



մէջ օգտագործուող բարձր արհեստագիտական դասագիրքերէն: Նաեւ, երբ հայկական իմաստով, օրինակի համար, հայահոծ թաղամասերը կը նօսրանան եւ ընտանիքները կը փոխադրուին արուարձաններ, հեռաւորութիւնը կը դառնայ մեծ արգելք՝ դպրոց յաճախելու համար: Վերջապէս, ընտանիքներու շարունակական արտագաղթը պատճառ կը դառնայ որոշ ազգային եւ համայնքային վարժարաններու եւ աշակերտութեան թիւի զգալի նուազումին:

Յատկանշական է վիճակագրական տուեալներու համեմատականը: Օրինակի համար, եթէ 1975-ին Լիբանանի մէջ կը գործէին 60 հայկական վարժարաններ՝ օժտուած 21.000 աշակերտութեամբ, ապա 2007-ին այդ թիւերը նուազեցան՝ հասնելով 28 կրթական հաստատութեան եւ շուրջ 7000 աշակերտի: Ներկայիս դպրոցներու քանակը կրճատուած է՝ հասնելով 15-ի, ինչ որ ընթերցողը կը մղէ եզրակացնելու աշակերտութեան թիւի համապատասխան եւ մտահոգիչ անկումը:

Եզրակացութիւն


Վերոյիշեալ տուեալները կը հաստատեն, որ կրթական օճախը կը պահէ իր վճռորոշ եւ անփոխարինելի առաքելութիւնը՝ արեւմտահայերէնի, ուելշի, քաթալանի, կամ մաուրիի նման վտանգուած լեզուներու պահպանման ու վերաշխուժացման հոլովոյթին մէջ, յատկապէս՝ սփիւռքեան կամ տեղական բարդ պայմաններուն մէջ, ուր փոքրամասնութեան լեզուն, մեր պարագային՝ արեւմտահայերէնը, կը գտնուի օտար լեզուներու մշտական ու գերիշխող ազդեցութեան տակ:

Այսուհանդերձ, նկատի ունենալով նշուած մարտահրաւերներն ու առկայ սահմանափակումները, հարց կը ծագի. ինչպէ՞ս կրնայ դպրոցը լիարժեքօրէն իրագործել իր լեզուապահպանումի դերը: Այս հարցումին պատասխանին պիտի անդրադառնանք յաջորդ յօդուածով:

Գիպրոս, յունուար 2026

ԱՆԱՀԻՏ ԱՍՏՈՅԵԱՆԻ ԹՈՒՐԹԵՐՈՒ ԿՈՂՄԷ ՀԱՅՈՑ ՀԱՐՍՏՈՒԹԵԱՆՑ ԲՈՒՆԱԳՐԱԻՄԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆԸ

Յարութիւն Իսկահատեան – Պէյրութ



Եթէ ըսենք «Հայոց լքեալ գոյքերը» կամ «Իրենց ետին ձգած հարստութիւնները» կամ նման այլ արտայայտութիւններ, այն տպաւորութիւնը կը ձգենք թէ հայերը կամովին իրենց հարստութիւնները ետին ձգած ու հեռացած են, բացարձակապէս սխալած կ'ըլլանք: Ինչ որ պատահած է բռնագաղթ է: Թէ՛ երիտթուրքերու եւ թէ՛ քեմալականներու իշխանութեան ժամանակաշրջանին արդէն նախապէս ծրագրուած էր կողոպուտը հայոց հարստութիւններուն: Անոնք այս կողոպուտներով լեցուցին

թրքական պետական դատարկ գանձը, մեծ գումարներ յատկացուցին պատերազմին, վճարեցին պետական արտաքին պարտքերուն մեծ մասը, թրքացուցին երկրին տնտեսութիւնը ու կազմակերպեցին ազգային շարժումը, որու իբրեւ արդիւնք հիմնուեցաւ թրքական հանրապետութիւնը: Այս բացատրութեան լոյսին տակ միայն այդ երեւոյթը յարմար եւ ճիշդ է կոչել «Հայոց Հարստութեանց եւ ինչքերուն բռնագրաւումը կամ յափշտակութիւնը», հետեւողականօրէն ա՛յս արտայայտութիւնը գործածելով:

Հայրենի ուսումնասիրող Անահիտ Աստոյեան նախաձեռնած է թուրքերու կողմէ հայոց յափշտակուած գոյքերու եւ հարստութիւններու մասին իր ուսումնասիրութեան արդիւնքը գիրքով մը հրատարակել՝ «Դարի Կողոպուտը, Հայերի Ունեգրկումը Օսմանեան Կայսրութիւնում 1914-1923», Նայիրի հրատարակչութիւն, 2013, Երեւան, 256 էջ + 80 էջ ներդիր (Յաւելուած), Խմբագիր՝ Գուրգէն Գասպարեան :

«Առաջաբան»ին մէջ հեղինակը՝ Անահիտ Աստոյեան կ'ըսէ. «Գրքում օգտագործուել են Թուրքիայի Հանրապետութեան վարչապետարանի հանրապետական արխիւի, Մաշտոցեան Մատենադարանի եւ Եդիշէ Չարենցի անուան գրականութեան եւ արուեստի թանգարանի արխիւային վաւերագրերը» (էջ 4):

Խօսելով հայոց հարստութիւններու կորուստին մասին, հեղինակը սոյն գիրքին հրատարակութեան եւ հարցին արծարծման նպատակը կը շեշտէ ըսելով. «1914-1923 Օսմանեան Կայսրութիւնում տեղի ունեցած հայերի ունեգրկման գործընթացի ուսումնասիրութիւնը ունի ոչ միայն գիտաճանաչողական, այլեւ արդիական-քաղաքական կարեւոր նշանակութիւն՝ հայ-թրքական յարաբերութիւնները ողբերգական նման անցեալից յետոյ քաղաքակիրթ եղանակով հանգուցալուծելու համար, ենթադրուում է Թուրքիայի Հանրապետութեան կողմից Հայոց Ցեղասպանութեան ճանաչումը եւ հայերի ունեցուածքի վերադարձը գոհերի ժառանգներին եւ վնասի դրամական փոխհատուցումը հայութեան (էջ 5):



Հայերը մեծ ներդրում ունեցած են Օսմանեան Պետութեան տնտեսութեան մէջ: Այս ուղղութեամբ Անահիտ Աստոյեան կ'ըսէ. «Օսմանեան կառավարութիւնը թէեւ հալածում էր իր քրիստոնէայ հպատակներին, մանաւանդ հայերին, սակայն ի նպաստ իր շահերի օգտագործում էր նրանց կարողութիւնները եւ որոշ ազատութիւն շնորհում: Օսմանեան Պետութեան համար որեւէ վտանգ չէր ներկայացնում հայ անհատների գործունէութիւնը (էջ 6):

Թուրքերու եւ քիւրտերու հայոց նկատմամբ վարուելակերպին մասին խօսելով, ֆրանսացի պատմաբան, արեւելագէտ Ռընէ Բինոն կ'ըսէ. «Ծոյլ թուրքին, թափառաշրջիկ եւ աւազակ քիւրտին համար հայը բնական որս է, պարբերաբար առարկայ իր ցանկութեան:

Անմիջապէս որ գաւառապետը կամ ոստիկանապետը նշան կու տան եւ կամ պարգապէս աչք կը գոցեն, սատուրնականը կը սկսի՝ թալան, շուայտութիւն, ջարդ... (էջ 7):

Ռուս տնտեսագէտ Վ. Պ. Վրոչենկօ 1835-ին իր տպաւորութիւններուն մէջ կ'ըսէ.

«Արհեստներն ու առետուրը Արեւմտեան ու Կեդրոնական Անատոլի մէջ հայերի զլխաւոր զբաղումն է: Ամենէն հարուստ վաճառականները Փոքր Ասիայի ներքին քաղաքներում հայեր են: Բոլոր դրամատուներու տէրերը քրիստոնէաներ են (էջ 15):

Օտարները, որ ականատես դարձան հայոց կարողութիւններուն եւ ապա անոնց կոտորման, պերճախօսօրէն կը վկայեն հայոց մասին: Անոնցմէ գերմանացի լրագրող Հարրի Շթիւրմերը կ'ըսէ. «Կը յայտարարեմ ուրեմն թէ այս վայրագ միջոցներու ծաւալումը եղաւ ցեղային մոլեռանդութեան գործը, ամենէն անարգը, ամենէն շնականը եւ ամենէն ոճրայինը, զոր արձանագրած ըլլայ երբեք մարդկային պատմութիւնը, թէ այս գործը տեղի ունեցաւ միայն անոր համար որ թուրքերը կը զգային իրենց չափազանց ստորնութիւնը տնտեսական եւ քաղաքական տեսակէտով, այս ոչ թուրք տարրի հանդէպ եւ կ'ուզէին «հաւասարութիւն» հաստատել ոյժի միջոցաւ ի նպաստ իրենց, թէ այս գործը կատարուեցաւ վերջապէս գերման կառավարութեան վատ համաձայնութեամբ (էջ 20):

Անահիտ Աստոյեան յետեղեռնեան թրքական տնտեսութեան մասին խօսելով կ'ըսէ.

«Բնական էր, որ հայերի տեղահանութիւններից եւ ցեղասպանութիւնից յետոյ երկրի տնտեսութիւնը յայտնուեց աղէտալի վիճակում: Ողջ բնակչութիւնը զգաց երկրի տնտեսական ճգնաժամի ծանրութիւնը: Այդ մասին են վկայում Առաջին Համաշխարհային պատերազմի տարիներին կայսրութիւնում գործող օտար դիւանագէտները, զինուորականները, միսիոնարական կազմակերպութիւնների ներկայացուցիչները (էջ 20): Նոյն ծիրին մէջ Եռհաննէս Լեփսիուս իր պատրաստած տեղեկագիրին մէջ կ'ըսէ. «Քանի որ ներքին առետուրի 90 տոկոսը հայերի ձեռքն է, ապա տարագրութեան հետեւանքները կը լինեն երկրի կործանման գնալը: Դատարկուած երկրամասում, բացառութեամբ մի քանի տեղերի, այլեւս չկան ո՛չ որմնադիր, ո՛չ երկրագործ, ո՛չ հիւսն, ո՛չ ատաղձագործ, ո՛չ բրուտ, ո՛չ կղմինտրագործ, ո՛չ կօշկակար, ո՛չ ոսկերիչ, ո՛չ դեղագործ, ո՛չ բժիշկ, ո՛չ փաստաբան, ո՛չ էլ մի անձ, որ պատկանի ասպարէզներին եւ զբաղուի ինչ-որ արհեստով: Երկիրը իրապէս յուսահատական կացութեան պիտի մատնուի» (էջ 21):

Անահիտ Աստոյեան հայոց հատուցումի պահանջքին մասին հետեւեալը կ'ըսէ. «Թալաաթ եւ Էնվեր փաշաների նպատակը հայոց բնաջնջումն էր: Նրանք մերժեցին հայերի Ամերիկա տեղափոխելու Հենրի Մորկընթաուի առաջարկը, քանզի հայերը կարող էին հարց բարձրացնել եւ իրենց լքեալ (բռնագրաւում- Յ. Ի.) գոյքերի հատուցում պահանջել (էջ 40):

Գալով հայոց հարստութիւններու բռնագրաւման «իրաւական» հիմքերուն, այսինքն՝ թրքական յափշտակութեան ծառայող պատճառաբանութիւններուն, Անահիտ Աստոյեան այս հարցը կը քննարկէ հատորին 41-64 էջերուն մէջ: Ան կ'ըսէ. «Մի ամբողջ ժողովուրդ կողոպտելու համար նախ եւ առաջ հարկ էր հայերի ունեցուածքը դարձնել տիրազուրկ»: Հետեւաբար, «Օսմանեան իշխանութիւնները ընդունեցին մի օրէնք 30 Մայիս 1915-ին, որի



նպատակն էր «օրինական» քող ստեղծել հայ ժողովրդի կանխամտածուած զանգուածային ոչնչացման՝ Յեղասպանութեան համար» (էջ 41):

Ինչպէս որ երիտթրքական կառավարութեան շահերը պահանջած են եւ մղած զիրենք հայոց ինչքերուն հետ վարուելու կամայական ձեւով, անոնք երբեմն թոյլ տուած են թուրք եւ քիւրտ խուժանին յարձակելու, կողոպտելու եւ իւրացնելու այդ ինչքերէն մաս մը: Սակայն երբեմն ալ արգիլած են զանոնք մօտենալու հայոց հարստութիւններուն, պետութեան եւ անձնական շահերու համար իւրացնելու զանոնք:

Թրքական կառավարութիւնը 1915-16-ին ուղղակի հայոց ինչքերը կողոպտելէ բացի, որդեգրեց յափշտակութեան անուղղակի ձեւ մը: Հայերէն իբրեւ պատերազմի տուգանք կը խլէր անոնց ամբարանոցին մէկ երրորդը: Սակայն թրքական կառավարութիւնը հայ քաղաքացիներէն անոնց պահեստին մէկ երրորդը ամենակարճ ժամանակամիջոցի ընթացքին քանի մը անգամ կը խլէր: Այս հարցին կապակցութեամբ Անահիտ Աստոյեան կ'ըսէ. «Բանն աւարտում էր նրանով, որ բնակչութիւնը կողոպտուում էր բառացիօրէն մինչեւ վերջ (էջ 64):

Վերոյիշեալ կողոպուտներուն մասին օտար բազմաթիւ վկայութիւններ հաւաքած է հեղինակը: Օտար դիւանագետներ, լրագրողներ, Եւրոպական երկիրներու դեսպաններ եւ հիւպատոսներ ու ականատես վկաներ պերճախօս վկայութիւններ արձանագրած են այս ուղղութեամբ:

Անահիտ Աստոյեան խօսելով հայոց եկեղեցական գոյքերու կողոպուտին մասին կ'ըսէ.

«Թուրքական մի աղբիւր վկայում է, որ 1914 թուականի տուեալների համաձայն՝ Օսմանեան կայսրութիւնում հայերն ունեցել են 2538 եկեղեցի, 451 վանք եւ 2000 դպրոց: Այժմ Թուրքիայի Հանրապետութեան տարածքում Պոլսից բացի հայերն ունեն 6 եկեղեցի եւ ոչ մէկ դպրոց: Լոզանի պայմանագրի 42-րդ յօդուածի մէջ ասւում է. «Թուրքական կառավարութիւնը պետք է լինի եկեղեցիների, սինակոկների, գերեզմանոցների եւ միւս կրօնական կառոյցների պաշտպանութեան երաշխաւորը»: Ըստ 1974 UNESCO-ի (ՄԱԿ-ի կրթական, գիտական եւ մշակութային կազմակերպութիւն- Յ.Ի.) գեկոյցի, մնացել է դրանից 913 եկեղեցի եւ վանք: Հետագայում դրանցից 464-ն ամբողջովին աւերուել է, 252-ը փլուզման վտանգի տակ է, 197-ը լուրջ վերանորոգման կարիք ունի» (էջ 97):

Անահիտ Աստոյեան կ'ըսէ թէ ոչ միայն թրքական կառավարութիւնը, այլ երկրին թուրք, քիւրտ, չերքէզ բնակչութիւնը տիրացան հայոց հարստութիւններուն, նաեւ օտարներ, ինչպէս գերմանացիներ եւ գերմանական կառավարութիւնը:

Կողոպտուած գոյքերու եւ հարստութիւններու մաս կը կազմեն նաեւ հայոց օտար ապահովագրական ընկերութիւններու ոսկեղրամով վճարած գումարները, կ'ըսէ հեղինակը (էջ 130):


Վերոյիշեալ ծաւալուն եւ օգտակար ուսումնասիրութեան վերջաւորութեան հեղինակը՝ Անահիտ Աստոյեան կ'եզրակացնէ. «Բազմադարեայ պատմութեան ընթացքում կուտակուած նիւթական ահռելի կորուստներից բացի, հայութիւնը կորցրեց նաեւ իր Պատմական Հայրենիքի մեծագոյն մասը՝ Արեւմտեան Հայաստանը, որը հնարաւոր չէ՝ եւ չի՝ կարող նիւթական արժէքի վերածուել ու դրամով փոխհատուցուել: Հայրենիքի գինը հայրենի հողն է (էջ 162): Շատ ճիշդ եզրակացութիւն այս կարեւոր ուսումնասիրութեան բովանդակած նիւթը ամբողջացնող:

Աղբիւր՝ ՊԱՅՔԱՐ

ՏԵՍԱԿԷՏ

ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻՈՅ ԲԱՐԵՆՈՐՈԳՈՒՄԸ՝ ՀՈԳԵԻՈՐ ԱՆԸՆԴՄԻՋԵԼԻ ԳՈՐԾՆԹԱՅ ՔՐԻՍՏՈՍՈՎ

Դոկտ. Արել քինյ. Մանուկեան



ընկալումը կը մատնանշէ աստուածաբանական հիմնարար սկզբունք մը. քրիստոնէական հաւատքը ճահճացած չէ անցեալի որեւէ երեւոյթի հետ, այլ հիմնուած է Յիսուս Քրիստոսի մշտական ներկայութեան վրայ: Այս մասին է, որ կը վկայէ նաեւ Պօղոս առաքեալ, երբ կ'ըսէ. «Քանզի Յիսուս Քրիստոս նոյնն է երէկ, այսօր եւ յաւիտեան» (Եբր. ԺԳ, 8):

Սոյնը պէտք չէ ընկալել պատմագիտական առումով, թէ քրիստոնէութիւնը պէտք է պահպանէր իր անշարժ կամ կաղապարաձեւ բնոյթը: Շատ աւելի՝ ան կը վերաբերի աստուածային յաւերժութեան, որ նոյնական չէ միայն անցեալին հետ, այլ կը նշանակէ, որ ան միշտ ներկայ է՝ գերիվեր ժամանակի վերաբերեալ մեր բոլոր ընկալումներէն: Աստուծոյ յաւերժութիւնը ստեղծագործական այսօրն է, այլ խօսքով՝ «հիմա»-ն. իւրաքանչիւր դարաշրջան սկիզբ կ'առնէ աստուածային ներկայէն: Հետեւաբար, քրիստոնէութիւնը երբեք անցեալ մը չէ, այլ իր բնոյթով միշտ նոր է: Ան նման չէ օրկանիզմի մը, որ բնութեան օրինաչափութեան համաձայն պարտադիր ու անխուսափելիօրէն կը ծերանայ, հոսկ կը կորսնցնէ իր կենսունակութիւնը ծնունդի եւ աճի փուլէ մը ետք, այլ կը մնայ իր սկիզբի արարչագործ եւ շարունակական գործընթացին մէջ: Ուստի մանանելիի հատիկի Նոր



կտակարանի պատկերը,– փոքրագոյն սերմէն սաղարթախիտ հսկայ ծառի մը վերածուելու իրողութիւնը,– առնչուած է ոչ թէ աւարտուն իրավիճակին, այլ աճելու կամ ձեւաւորուելու շարունակական ուժականութեան հետ:

Արդարեւ, Հայ եկեղեցւոյ բարեկարգութիւնը պէտք չէ շփոթել պարզապէս ժամանակակից նախասիրութիւններու կամ հասարակական սպասումներու յարմարելու պահանջին հետ: Աստուածաբանական իմաստով՝ ժամանակակից արդիականութիւնը բոլորովին չի նշանակեր հաւատքը սահմանափակել լոկ այն երեւոյթներով, որոնք ներկայիս հաճելի են: Շատ աւելի՝ ան հարկ է ընկալել իբրեւ մարտահրաւէր մը՝ մեր ներկայ մտածողութիւնը, գործողութիւնները եւ եկեղեցական կեանքը շարունակ համապատասխանեցնելու Աւետարանի սկզբունքներուն եւ թելադրած պատգամներուն, աճիլ կարենալու համար ըստ տիրաւանդ ու առաքելաշաւիղ չափանիշներուն: Ուստի Եկեղեցիին բարենորոգումը խորացման հոգեւոր գործընթաց մըն է, այլ ոչ թէ սովորական կամ միամիտ պարզեցում մը: Անշուշտ ժամանակահունչ ըլլալու պահանջը անշրջելի է, սակայն ան նոյնքան հրամայականօրէն առնչուած պէտք է մնայ Աւետարանի, Եկեղեցւոյ վարդապետութեան, հաւատքի ժառանգութեան ու քրիստոնէական կեանքի հոգեւոր եւ բարոյական չափանիշներուն հետ:

Այս խորապատկերին վրայ, Հայ եկեղեցւոյ բարենորոգութեան հարցը կը ստանայ առանձնայատուկ նշանակութիւն: Հայց. առաք. եկեղեցին, իբրեւ արեւելեան հնագոյն եկեղեցիներէն մին, իր մէջ կը պահպանէ հոգեւոր, ծիսական եւ աստուածաբանական հարուստ ժառանգութիւն: Սակայն այս ժառանգութիւնը չի սահմանափակուիր վիճակագրական անցեալի մը տուեալներով, այլ կը հանդիսանայ կենսատու աղբիւր, որմէ Եկեղեցին անտարակոյս ի վիճակի է ձեւաւորելու իր ներկան՝ խարսխուելով քրիստոնէական հաւատքի հիմքերուն վրայ: Այս ընկալումէն մեկնելով՝ Հայ եկեղեցւոյ բարենորոգութիւնը կը նշանակէ ներթափանցել սեփական եկեղեցական կեանքին եւ այն սրբազան աւանդոյթին մէջ, որպէսզի ան բովանդակ հայաշխարհին համար միշտ մնայ արժանահաւատ վկայութիւն Քրիստոսի շնորհաբաշխ ներկայութեան մէջ: Այսպիսով, հաւատքը ինքնին կը վերածուի այն տեղը, ուր Աստուծոյ արարչագործ ներկայութիւնը անընդմիջելի, ապրող ու շնչող կը դառանայ մեր առօրեային եւ կեանքի պատմական ճշգրիտ իրավիճակին մէջ:

Վերոնշեալ համոզումներով տոգորուած եւ ներշնչուած Հայաստանի մէջ քրիստոնէութեան 1700-ամեակի տօնակատարութենէն՝ 2003 թուականին հրապարակեցի հատոր մը «Հայ եկեղեցին ժամանակի մարտահրաւէրներուն դիմաց»¹ խորագրով: Հակառակ մեծաշուք տօնակատարութեան՝ կանխատեսելի էր ծանրակշիռ բաց մը, որ կը վերաբերէր Հայ եկեղեցւոյ բարեկարգութեան խնդրին. տասնամեակներէ ի վեր չարչրկուած առաջադրանք մը, որ մեր ազգային-եկեղեցական հողմածուփ կեանքին բերումով, այլեւ տարատեսակ պատճառներով այդպէս ալ ցայսօր մնաց անիրագործելի: Պահանջը միշտ ալ կար, սակայն կը պակսէր զայն

¹ Տե՛ս Մանուկեան, Արէլ, «Հայ եկեղեցին ժամանակի մարտահրաւէրներուն դիմաց», Ժընև, 2003: Նոյնը նաեւ անգլերէն թարգմանութեամբ՝ Manoukian, Abel, “The Armenian Church – Present Day Challenges”, Geneva, 2005.



իրագործելու ներուժը, թերեւս նաեւ հոգեւորականներէ ու աշխարհականներէ կազմուած փորձագէտներու հոյլը, որ հաւաքական աշխատանքով լրացնել կարենար առաջադրուածը, զայն ներկայացնելու համար գուցէ յատուկ այս նպատակով հրաւիրուած Հայց. առաք. եկեղեցւոյ Ազգային-եկեղեցական ժողովին:

Արդարեւ, 1982 թուականին էր, երբ կ'ուսանէի Վիեննայի պետական համալսարանի աստուածաբանական կաճառին մէջ, վերադարձայ Ս. Էջմիածին՝ ամառնային արձակուրդս այնտեղ անցընելու նպատակով: Այդ օրերուն իմ հոգեւոր հօր՝ Ն.Ս.Օ.Տ.Տ. Վազգէն Ա. վեհափառ հայրապետի յանձնարարութեամբ, նմանապէս արտասահմանէն ժամանած խումբ մը միաբանակից եղբայրներու հետ քաղաքավարական այցելութիւն մը տունիք պրն. Անդրանիկ Հասրաթեանին, որ այդ ժամանակ ՀԽՍՀ նախարարներու խորհուրդին առնթեր Հայ եկեղեցւոյ գործերու խորհուրդի նախագահ պրն. Ռուբէն Պարսամեանի տեղակալն էր: Երբ ան տեղեկացաւ, որ մեզմէ ոմանք ուսանողներ են եւրոպական տարբեր համալսարաններու մէջ, պահ մը կանգ առաւ, ապա սթափ ու հանգամանօրէն նշեց, որ մեր Եկեղեցին տեսաբաններու կարիքն ունի, եւ սոյնը զգալի պակաս մըն է՝ համեմատելով այն փորձագէտ տեսաբան-աստուածաբաններուն հետ, որոնք առաւելագոյն չափով ունին մասնաւորաբար Ռուս ուղղափառ, Հռոմէական կաթողիկէ եւ Աւետարանական եկեղեցիները: Այս կարեւոր թելադրութիւնը, որ ուղղուած էր մեզի խորհրդային պետական անաստուածութեան վարդապետութեան հետեւող պաշտօնակատարի մը կողմէ, խորապէս տպաւորեց եւ ուղեկցեցաւ ինծի այդ այցելութենէն տակաւին երկար ժամանակ անց: Գուցէ վերոնշեալ հատորիս հրատարակութիւնն ալ կը կրէր այդ տպաւորութեան կնիքը՝ տեսնել մեր Եկեղեցին Քրիստոսի խորհուրդի արարչագործ ներկայութեան մէջ, ոչ միայն լոկ իր անցեալի փառքով, այլ ներկային արդիւնաւորութեամբ եւ ապագայի տեսիլքով:

Հատորը ներառած էր երեք ենթախորագիր՝ «Տարի մը՝ 1700-ամեակէն ետք...», «Հայց. առաք. սուրբ եկեղեցւոյ ազգային եւ կրօնական անժամանցելի արժէքը հայ ժողովուրդի կեանքին մէջ», «Տառապիլ Հայ եկեղեցիով, Հայ եկեղեցիին հետ եւ Հայ եկեղեցիին համար»: Նշուած երեք վերնագրերն ալ եկեղեցաբանական եւ աստուածաբանական անդրադարձ էին, որոնք կը միտէին ցոյց տալու Հայ եկեղեցւոյ կալուածին մէջ բարեկարգութեան զգալի պահանջը, անոր նշանակութիւնը եւ կարեւորութիւնը այսօրուան մեր հոգեւոր կեանքին մէջ:

Այս առնչութեամբ հետաքրքրական է նշել, որ այդ ժամանակ անդրադառնալով հատորիս՝ շուրջ 116 աշխարհական անձեր հասցէիս փոստային նամակներ կամ ել-հաղորդագրութիւններ յղեցին գնահատական խօսքերով կամ զանազան հարցադրումներով, սակայն ո՛չ մէկ հոգեւորական, թէկուզ հոգեւոր եղբայրներէս, ոչ ոք յանձն առաւ յիշելու զայն. քար լոռի՛ն, բառացիօրէն «Ձայն բարբառոյ յանապատի»: Բացառութիւն էր Մոնթրէալի Ս. Յակոբ եկեղեցւոյ հոգեւոր հովիւը, որ ել-նամակի միջոցաւ կարճ ու կտրուկ հետեւեալը ուղղեց հասցէիս. «Հայ եկեղեցին անբարեկարգելի է»: Անշուշտ երեւոյթը ուղղակի ցնցող է եւ յիշատակութեան արժանի, պարզապէս զայն առնչելու համար այսօրուան պետութեան եւ Եկեղեցւոյ վերնախաւին միջեւ առկայ լարուածութեան մէջ յառաջացած ՀՀ վարչապետին կողմէ 8 դեկտեմբեր 2025-ին Հայ եկեղեցւոյ բարեկարգութեան



վերաբերեալ հրապարակած նախագիծին², ապա նորէն վերջինիս կեցավայրին մէջ 10 եպիսկոպոսներու մասնակցութեամբ 5 յունուար 2026 թուականին ստորագրուած Հայ եկեղեցւոյ Բարենորոգման ճանապարհային քարտեզին³ հետ:

ՀՀ վարչապետին յայտարարած Հայ եկեղեցւոյ «Բարենորոգման» վերաբերեալ վերոգրեալ նախաձեռնութիւնները, առաջին հայեացքով, կը պարունակեն ողջունելի յանձնառութիւններ, մասնաւորապէս թափանցիկութեան, հիմնարար կարգուկանոնի եւ հոգեւորականութեան ընկերային ապահովագրութեան վերաբերեալ: Այս տուեալները կը վերաբերին Եկեղեցւոյ կառավարման իրական եւ տասնեակ տարիներէ ի վեր քննարկուող խնդրայարոյց ոլորտներուն:

Ճիշդ է, որ խօսքը այստեղ «ճանապարհային քարտեզ»-ներու մասին է եւ կարելի չէ ակնկալել Բարենորոգման աւարտուն եւ արդէն պատրաստ աշխատանք մը, այնուամենայնիւ, թէ՛ 8 դեկտեմբեր 2025 թուականին յայտարարուած ծրագիրը եւ թէ՛ 5 յունուար 2026-ին ստորագրուած փաստաթուղթը կը բացայայտեն կառուցուածքային, եկեղեցաբանական, կանոնագիտական եւ աստուածաբանական զգալի թերութիւններ՝ այնքանով, որ անոնք Հայ եկեղեցւոյ Բարենորոգումը հիմնականօրէն կ'ընկալեն իբրեւ վարչական-իրաւական գործընթաց մը, եւ այդպիսով միայն անբաւարար պատկերացում կը դրսեւորեն Եկեղեցւոյ իրական բնոյթին մասին:

Խնդրոյ առարկայ փաստաթուղթերուն մէջ կը բացակայի ամուր եկեղեցաբանական հիմք մը. յստակ կերպով չ'արտայայտուիր, թէ ի՞նչ է Եկեղեցին իր էութեամբ, ինչպէ՞ս կը հիմնաւորուի հոգեւոր իշխանութիւնը եւ ուրկէ՞, ի վերջոյ, կը բխի եկեղեցական Բարենորոգման խորքային աղբիւրը: Եկեղեցին անուղղակի կերպով կը ներկայանայ որպէս դուրսէն բարեփոխելի հաստատութիւն մը, այլ ոչ թէ որպէս Քրիստոսի խորհրդաւոր մարմինը, որուն Բարենորոգումը գերազանցապէս կը բխի իր ներքին հոգեւոր կեանքէն՝ հաւատքին ու պաշտամունքին կենսատու աւիշէն:

Եկեղեցական իրաւունքի տեսանկիւնէն՝ յատկապէս զգուշութիւն կը պահանջէ պետական դերակատարներու ընդգծուած մասնակցութիւնը եկեղեցական կանոններու ձեւաւորումի, ներեկեղեցական գործընթացներու համակարգումի եւ, թէեւ անուղղակի, Եկեղեցւոյ ղեկավարութեան հաստատումին մէջ, որոնք լուրջ հարցադրումներ կը յառաջացնեն Եկեղեցւոյ ինքնուրոյնութեան, կանոնական կարգի եւ պետական օրինական ներգրաւուածութեան սահմաններուն վերաբերեալ: Բացի այդ, կաթողիկոսի պաշտօնին շուրջ կեդրոնացած՝ ակամայ հանգստեան կոչուելու կամ տեսակ մը աթոռագրկուելու, տեղապահի, ապա նոր կաթողիկոսի մը ընտրութեան վրայ շեշտադրումը կը թողու այն

²

Տե՛ս

<https://www.civilnet.am/news/990813/%D6%83%D5%A1%D5%B7%D5%AB%D5%B6%D5%B5%D5%A1%D5%B6%D5%A8-%D5%A5%D5%AF%D5%A5%D5%B2%D5%A5%D6%81%D5%B8%D6%82-%D5%B6%D5%B8%D6%80%D5%B8%D5%A3%D5%B4%D5%A1%D5%B6-%D5%B3%D5%A1%D5%B6%D5%A1%D5%BA%D5%A1%D6%80%D5%B0%D5%A1%D5%B5%D5%AB%D5%B6-%D6%84%D5%A1%D6%80%D5%BF%D5%A5%D5%A6-%D5%A7-%D5%B6%D5%A5%D6%80%D5%AF%D5%A1%D5%B5%D5%A1%D6%81%D6%80%D5%A5%D5%AC/>

³ Տե՛ս <https://www.azatutyun.am/a/varchapety-ev-10-episkoposnery-ekeghetsou-barenorogman-haytararoutyamb-handes-ekan-/33640182.html>



տպաւորութիւնը, թէ Հայ եկեղեցւոյ մէջ այսօրուան առկայ ճգնաժամը կրնայ լուծուիլ միայն կաթողիկոսական պաշտօնը զբաղեցնող անձին հետացումով կամ փոփոխութեամբ: Մինչդեռ որքան ալ տուեալ անձը Հայ եկեղեցիին մէջ ստեղծուած ճգնաժամին, գայթակղութեան եւ միութեան խաթարման գլխաւոր պատասխանատուն նկատուի, միեւնոյնն է, կաթողիկոսական պաշտօնը, իբրեւ այդպիսին, պէտք չէ ընդամենը միջոցի մը վերածուի, այլ ընկալուի իր պատմական, խորհրդանշական, սրբազան եւ հոգեւոր համապարփակ նշանակութեամբ:

Նոյնքան ուշագրաւ է Հայ եկեղեցւոյ ժողովական կեանքին հետ առնչուող՝ Աստուծոյ ժողովուրդին իրական մասնակցութեան բացակայութիւնը. աշխարհականներու, եկեղեցական շրջանակներու, հովուական պատասխանատուներու եւ, ի վերջոյ, աստուածաբաններու եւ կանոնադրողներու ձայնը գրեթէ լսելի չէ, երեւոյթ մը, որ Եկեղեցին բարեկարգելու ծրագիրը կը ներկայացնէ իբրեւ վերէն վար ուղղուած գործընթաց մը:

Ի տարբերութիւն այս սահմանափակ ընկալումին, Հայ եկեղեցւոյ բարենորոգութեան ծրագիրը, իբրեւ աստուածաբանական հիմնական եւ պատասխանատու գործընթաց, կոչուած է ունենալու համապարփակ բնոյթ եւ ընդգրկելու եկեղեցական կեանքի էական բոլոր ոլորտները՝ հոգեւոր, պաշտամունքային, ծիսական եւ քարոզչական առաքելութեան վերաշխուծացումը, աստուածաբանական կրթութեան ամրապնդումը, եկեղեցաբանական ու ժողովական ինքնագիտակցութեան խորացումը, Եկեղեցւոյ հովուական եւ հասարակական կեանքի հոգեւոր ու բարոյական ոլորտներէն ներս ներգրաւուածութիւնը թէ՛ հայրենի հողին վրայ եւ թէ՛ աշխարհասփիւռ հայութեան իրականութեան մէջ:

Առանց ապաշխարութեան, հաւատքի խորացումի եւ հոգեւոր ինքնագիտակցութեան նորոգումի՝ իւրաքանչիւր կառուցուածքային բարեփոխում կը դառնայ բռնագրօսիկ եւ կը մնայ ընդամենը արտաքին: Եկեղեցական բարենորոգման գործընթացը կառուցողական կը դառնայ այն պարագային, երբ ան կը հիմնուի առաջին հերթին եկեղեցական ներքին ինքնագիտակցութեան եւ հոգեւոր պատասխանատւութեան վրայ, եւ կը պահպանէ պատշաճ հաւասարակշռութիւն պետութեան հետ գործակցութեան մէջ՝ ի խնդիր պետականաշինութեան, հայրենիքի հզօրացման, սուրբ Եկեղեցւոյ շինութեան, ի պատիւ ազգին եւ ի փառս Աստուծոյ: Ուստի Հայ եկեղեցւոյ բարենորոգման ուղղութեամբ ներկայացուած «Ճանապարհային քարտեզ»-ները, թէպէտ կարելի է ստոյգ արժեւորել իբրեւ անհրաժեշտ եւ ողջունելի քայլեր, սակայն անբաւարար սկիզբ մը միայն, այլապէս՝ նախնական մեկնակէտ մը: Հայ առաքելական եկեղեցւոյ խորքային եւ իսկական բարենորոգումը կ'ենթադրէ երկարաշունչ, հոգեւոր հէնք ունեցող եւ եկեղեցաբանական առումով հիմնաւորուած գործընթաց մը, որ կ'իրականանայ ամբողջ Եկեղեցւոյ մասնակցութեամբ եւ կ'անցնի զուտ իրաւական ու կազմակերպչական միջոցառումներու սահմաններէն անդին:

Քաղաքական նկրտումներէ եւ եկեղեցական պահպանողական կարծիքներէ անդին, եթէ մօտ ապագային իսկապէս յաջողի մեկնարկել Հայց. առաք. եկեղեցւոյ բարենորոգման խորքային գործընթացը, ապա եկեղեցական կեանքի հոգեւոր-բարոյական, նաեւ ծիսական



ուրտներէն բացի, առաջնահերթ պէտք է նկատուի մասնաւոր կարեւորութիւն ընծայել հետեւեալ առաջադրանքներուն.

1. Եկեղեցին պէտք է ներգրաւուի Հայաստանի օրէնսդրական դաշտին մէջ: Եկեղեցւոյ համարկումը Հայաստանի իրաւական շրջանակին կը ծառայէ անոր իրաւական կարգավիճակի եւ պետութեան ու հասարակութեան առջեւ ունեցած պարտականութիւններու պարզաբանումին: Այսպիսով կը ստեղծուին թափանցիկութիւն, իրաւական որոշակիութիւն եւ հաստատութենական հաշուետուողականութիւն՝ առանց կասկածի տակ դնելու Եկեղեցւոյ հոգեւոր ինքնավարութիւնը: Միաժամանակ, ան կ'ամրապնդէ Եկեղեցիին ներգրաւումը Հայաստանի հասարակական կեանքին մէջ եւ կը կանխէ կառուցուածքային անորոշութիւնը կամ իշխանութեան կեղծոնացումը յստակ սահմանուած իրաւական շրջանակէն դուրս:
2. Եկեղեցին չի կրնար յարատեւ մնալ միապետութիւն մը Հայաստանի Հանրապետութեան մէջ⁴: Միապետական դրուածք ունեցող Եկեղեցիին ղեկավարութիւնը հակասութեան մէջ կը գտնուի Հայաստանի հանրապետական կարգի սկզբունքներուն հետ, որոնք հիմնուած են իշխանութեան տարանջատման, հաշուետուութեան եւ հաստատութենական (ինստիտուցիոնալ) մասնակցութեան վրայ: Նման անհամապատասխանութիւնը կը վտանգէ Եկեղեցւոյ հանրային հեղինակութիւնը եւ անոր ներքին օրինականութիւնը: Այս մարտահրաւերներուն դիմակայելու համար անհրաժեշտ են եկեղեցական կառոյցներ, որոնք կ'երաշխաւորեն միասնական պատասխանատւութիւն, թափանցիկ որոշումներ կայացնելու գործընթացներ եւ օրէնսդրական պարտաւորեցնող վերահսկողութեան գործառոյթներ:
3. Այս համաթեքստին մէջ հարկ է մշտապէս հաստատութենականացնել (ինստիտուցիոնալացնել) Ազգային-եկեղեցական ժողովը Հայ եկեղեցւոյ գործող իրաւական կարգի շրջանակներուն մէջ եւ զայն գումարել առնուազն ամեն եօթ տարին անգամ մը: Ժողովը գումարելու լիազօրութիւնը ամենեւին պէտք չէ սահմանափակուած մնայ բացառաբար կաթողիկոսի պաշտօնին մէջ, այլ պէտք է ներառէ նաեւ համարժէք լիազօրութիւններով օժտուած յանձնաժողովի մը նշանակումը, որ պարբերաբար կը գումարէ ժողովը՝ ներկայացնելով համապատասխան օրակարգ⁵:
4. Ամենայն հայոց կաթողիկոսին լիազօրութիւնները, որոնք վերջին տասնամեակներուն դարձած են կամայականօրէն անսահմանափակ, կը պահանջեն պարտադիր դասակարգում՝ Ազգային-եկեղեցական եւ Եպիսկոպոսական ժողովներու կողմէ կայացած որոշումներու ծիրէն ներս, որպէսզի մշտապէս կ'անխաղաղուի եկեղեցական իշխանութեան չարաշահումի եւ Հայ եկեղեցւոյ միանձնեայ ղեկավարումի վտանգը:
5. Անհրաժեշտ է վերականգնել Հայց. առաք. եկեղեցւոյ Եպիսկոպոսաց ընդհանուր ժողովը՝ իբրեւ կրօնական, դաւանաբանական եւ հոգեւոր-բարոյական ուրտներու մէջ Եկեղեցւոյ մշտական կառավարման մարմին: Այս ժողովը պէտք է կազմուած ըլլայ Հայց. առաք. եկեղեցւոյ նուիրապետական բոլոր աթոռներու հաւասար

⁴ Տե՛ս այս մասին «Միապետութիւն մը հանրապետութեան մէջ – Եկեղեցին ինքնակալութեան եւ ժողովրդավարական-սահմանադրական պետութեան միջեւ» խորագրով յօդուած. <https://asbarez.am/archives/485424>

⁵ Տե՛ս նոյնը նաեւ հետեւեալ կայքէջերուն մէջ. <https://hairenikweekly.com/?p=64593>; <https://www.yerepouni-news.com/a-monarchy-within-the-republic-the-church-between-autocracy-and-the-constitutional-state1/>

մասնակցութեամբ: Արդարեւ, 1441 թուականէն ետք նման Եպիսկոպոսաց ընդհանուր ժողով մը վերջին անգամ գումարուեցաւ 2013 եւ 2014 թուականներուն Հայոց ցեղասպանութեան 100-ամեակին առթիւ՝ սրբադասելու համար 1915 թուականին ցեղասպանուած հայութեան 1,5 միլիոն նահատակները: Հանգամանքներու բերումով՝ նշուած զոյգ ժողովները բացառաբար քննարկեցին Հայոց ցեղասպանութեան նահատակները սրբադասելու օրակարգը, առանց անդրադառնալու ժամանակի այն մարտահրաւերներուն, որոնց դէմ-յանդիման կը գտնուէր Հայ եկեղեցին: Այս նպատակով հարկ է ստեղծել եպիսկոպոսներէ կազմուած յանձնաժողով մը՝ մասնակցութեամբ Հայց. առաք. եկեղեցւոյ նուիրապետական բոլոր աթոռներու ներկայացուցիչներուն: Սոյնը պէտք է լիազօրուած ըլլայ հրաւիրելու Եպիսկոպոսաց ընդհանուր ժողով առնուազն երկու տարին մէկ անգամ գումարելու դրոյթով՝ սահմանելով համապատասխան օրակարգ:

6. Հայց. առաքելական եկեղեցւոյ ներկայի եւ ապագայի կարիքներուն համապատասխանելու համար անհրաժեշտ է նախաձեռնել եկեղեցական կանոնական իրաւունքի նոր ու պարտաւորեցնող օրէնսգիրքի մը պատրաստութեան⁶: Այդ նպատակով պէտք է կազմուի մասնագիտական յանձնաժողով մը, որ համակարգուած կերպով վերանայի «Կանոնագիրք Հայոց»-ի ամբողջ կանոնական նիւթը՝ պատմական, աստուածաբանական եւ իրաւաբանական տեսանկիւններէ: Յանձնաժողովին առաքելութիւնը պիտի ըլլայ մշակել միատարր կառուցուածքով, լեզուական եւ իրաւական առումով արդիական, սակայն Հայ եկեղեցւոյ աստուածաբանական եւ հոգեւոր արժանոքներուն հաւատարիմ կանոնագիրք մը: Նման օրէնսգիրք մը պիտի ապահովէ եկեղեցական կեանքի աւելի մեծ իրաւական որոշակիութիւն, պիտի ամրապնդէ Եկեղեցւոյ ինքնավար եւ ինքնապատասխանատու բնոյթը, եւ պիտի նպաստէ թէ՛ ներքին կառոյցներու ներդաշնակ գործակցութեան, թէ՛ պետութեան եւ քոյր եկեղեցիներու հետ առողջ ու կառուցողական երկխօսութեան զարգացման: Այս նախաձեռնութիւնը կը ներկայացնէ ոչ միայն իրաւական բարեկարգում, այլ նաեւ հոգեւոր պարտաւորութիւն՝ ուղղուած Հայ եկեղեցւոյ վերանորոգման, կենսունակութեան եւ իր հաւատացեալ ժողովուրդին հանդէպ արժանահաւատ ծառայութեան:

Եզրակացութիւն

Հայց. առաք. եկեղեցւոյ բարենորոգման հարցը ի վերջոյ չի կրնար սահմանափակուիլ հաստատութենական բարեփոխումներով կամ լոկ անձնական որոշումներով: Որքան ալ կանոնական, իրաւական, վարչական եւ կազմակերպչական միջոցառումները թուին անհրաժեշտ ըլլալ, միեւնոյնն է, առանց եկեղեցաբանական լուրջ մօտեցումի՝ անոնք ազդել կրնան ընդամենը Եկեղեցիին արտաքին ձեւաւորումին վրայ: Եկեղեցաբանական պատասխանատու բարենորոգումը կը պահանջէ աւելի խորքային մօտեցում մը՝ հիմնուած

⁶ Տե՛ս այս մասին «Հայ եկեղեցին եւ կանոնական իրաւունքի օրէնսգիրքի բացակայութիւնը» խորագրով յօդուածը՝ <https://hairenikweekly.com/%d5%b0%d5%a1%d5%b5-%d5%a5%d5%af%d5%a5%d5%b2%d5%a5%d6%81%d5%ab%d5%b6-%d5%a5%d6%82-%d5%af%d5%a1%d5%b6%d5%b8%d5%b6%d5%a1%d5%af%d5%a1%d5%b6-%d5%ab%d6%80%d5%a1%d6%82%d5%b8%d6%82%d5%b6%d6%84%d5%ab-%d6%85/>



Եկեղեցւոյ ինքնընկալումին վրայ որպէս Քրիստոսի մարմին, որ կ'ապրի Տիրոջ մշտնջենական ներկայութենէն, եւ այդ ներկայութենէն կը նորոգուի, Ս. Ներսէս Շնորհալի հայրապետին բառերով՝ «Նորափետուր կը զարդարուի»: Հետեւաբար, բարենորոգումը ոչ թէ միանգամեայ գործողութիւն է կամ արհեստական գործընթաց, այլ շարունակական հոգեւոր ճամբայ մը, որ ծնունդ կ'առնէ դարձի, հաւատքի խորացման եւ համատեղ պատասխանատւութիւն ստանձնելու մէջ:

Մեկնելով այս հայեցակէտէն՝ Եկեղեցւոյ բարենորոգումը արժանահաւատ կրնայ ըլլալ միայն այն պարագային, երբ ան կը բխի Եկեղեցւոյ ներքին կեանքէն եւ կը սնուցուի անոր հոգեւոր փորձառութենէն: Ան միանշանակ կը պահանջէ հաւատարմութիւն Ս. Աւետարանին, եկեղեցական պաշտամունքին եւ աստուածաբանական աւանդութեան, ինչպէս նաեւ կանոնական կարգին հանդէպ, միաժամանակ ձգտելով այս հաւատարմութիւնը նոր ձեւով արտայայտելու կեանքի ներկայ պայմաններուն մէջ:

Բարենորոգումը չի նշանակեր ներկայ ժամանակին յարմարիլ, այլ ներկան ուղղորդել Քրիստոսի: Արդարեւ, իսկական բարենորոգումը կ'իրականանայ այնտեղ, ուր ներկան ինքնաբաւ եւ ինքնանպատակ չէ, այլ կը ձգտի զայն ձեւաւորել՝ մնալով համահունչ Քրիստոսի խորհուրդին՝ Ս. Աւետարանի ընդմէջէն փոխանցուած տիրաւանդ պատգամներուն: Յատկապէս Հայ եկեղեցին, որ ունի բազմադարեան հաւատքի նուիրագործուած պատմութիւն, հրաւիրուած է իր հոգեւոր հարուստ ժառանգութիւնը չդիտելու իբրեւ փակ անցեալ մը, այլ կենդանի աղբիւր, որմէ կը ձեւաւորուի իր տուած ներկայ վկայութիւնը: Հայ եկեղեցին պատմական անկենդան յուշարձան մը չէ, ոչ ալ հաստատութենական կառոյց մը, այլ զայն միանշանակ պէտք է ընալել իբրեւ առաքելաշաւիղ աւանդութենէ սնող մշտնարորոգ առաքելութիւն մը:

Ամենեւին պէտք չէ անտեսել այն փաստը, որ նման բարենորոգում մը հրամայականօրէն կը պահանջէ ամբողջ Եկեղեցւոյ՝ հոգեւորականութեան եւ աշխարհական դասերու մասնակցութիւնը: Հայ եկեղեցւոյ ժողովական եւ ժողովրդավարական սկզբունքներուն պահպանումը, այսինքն՝ ժողովական կեանքի եւ գործառնություններու կիրառումը, որ կ'ընկալուի իբրեւ հոգեւորականութեան ու աշխարհականներու հոգեւոր եւ կանոնականօրէն կարգաւորուած համատեղ պատասխանատւութիւն ստանձնելու պատրաստակամութեան դրսեւորում եկեղեցական որոշումներու կայացման մէջ: Ժողովական կեանքի մէջ գործադրուող հաշուետւութեան կարելորութիւնը, նաեւ կրօնագիտական կրթութեան անհրաժեշտութիւնը ոչ թէ լրացուցիչ ազդակներ են, այլ միանշանակ կը հանդիսանան Եկեղեցւոյ գոյութեան էական եւ բաղկացուցիչ տարրերը: Երբ այս չափանիշերը կամայ թէ ակամայ կ'անտեսուին, իւրաքանչիւր բարենորոգման փորձ կը վտանգուի մակերեսայնութեամբ եւ կը կորսնցնէ իր հոգեւոր լիարժէք հաւաստիութիւնը:

Այսպէս ընկալուած՝ Հայ եկեղեցին բարենորոգելու ծրագիրը ոչ միայն չի դառնար սպառնալիք հանդէպ ազգային հոգեւոր աւանդութեան, ինքնութեան եւ առաքելութեան դէմ, այլ կը կազմէ անոր բնական զարգացման արժանիքը: Աւանդապահ ըլլալը լաւ է, սակայն զայն իբրեւ քանքարաթաքոյց անցեալի փոշիներուն մէջ թաղելը՝ մահացու: Զայն ժամանակի պահանջներուն համապատասխան պատուաստել է պէտք, որպէսզի նոր ընձիւղներ

արձակէ, փթթի եւ տայ պտուղ «Մէկի փոխարէն հարիւր, ուրիշ մը՝ վաթսուն եւ ուրիշ մը՝ երեսուն» (Մտթ. ԺԳ, 23):

Աւանդութիւնը կեանք կը ստանայ ոչ թէ անցեալը պարզապէս պահելով, այլ Քրիստոսի հաւատարիմ մնալով, որ «նոյնն է երէկ, այսօր եւ յաւիտեան» (Եբր. ԺԳ, 8): Այս հաւատարմութեան մէջ է, որ կը կայանայ յոյսը, թէ Հայց. առաք. եկեղեցին պիտի կարենայ ժամանակի ներկայ մարտահրաւերներուն դիմաց հաւատքով ապրիլ իր «այսօրն ու վաղը»՝ ըլլալով մեծագոյն եւ արժանահաւատ վկան իր հայկագուն հօտի գոյութեան, անոր զարգացման, բարոյական մեծութեան եւ հոգեւոր սրբութեան:

Ժընեւ, 3 փետրուար 2026

Տօն սրբոց Սուրբասանց վկայիցն

ՄԻՆՉ ԱՇԽԱՐՀԸ ԿԸ ԹՓՌՏԱՅ, ՄԱՐԴԿՈՒԹԻՒՆԸ՝ ԿԸ ԹՐԹՐԱՅ, ՀԱՅՈՒԹԻՒՆԸ Ո՞ՒՐ Է

ՊԱՐՈՅՐ Յ. ԱՂՊԱՇԵԱՆ



Աշխարհը՝

- Կ'եռայ իր տազնապներով:
- Կը պղպշակի իր ելեւէջներով:
- Կը բորբոքի իր ցնցումներով:
- Կը զալարի իր հարուածներով:
- Կը խոցոտուի իր մորմոքներով:

Իսկ մարդկութիւնը՝

- Կը բեկորուի իր տառապանքներով:
- Կը հիւծուի իր խայթոցներով:
- Կը վտանգուի իր կեանքով:
- Կը պառակտուի իր գոյութեամբ:
- Կը յօշոտուի իր հեռու թէ մօտիկ մերձաւորներով:

Այս տխուր ու սեւ պատկերը նորութիւն չէ, ոչ ալ անցողակի, միշտ եղած է ու կայ, միշտ ալ դեգերած է աջ ու ձախ, վեր ու վար, բայց այն ինչի մասին կը խօսուի, կ'ակնարկուի կամ կը յիշուի, բոլորովին նոր բռնապետութեամբ, վայրագութեամբ, անասնութեամբ եւ անմարդկայնութեամբ կը բնորոշուի եւ կը յատկանշուի, եւ ոչ միայն քիչ մը որոշ տեղերու կամ հարթակներու վրայ, այլ՝ համարեա տիեզերքի ամէն հորիզոնականներէն եւ



անկիւններէն... աշխարհը կը թփռտայ ու մարդկութիւնը կը թրթռայ, վերածուելով գոհի ու դիակի:

Այս ընդգծումները ի՞նչ կը նշանակեն կամ կ'ապացուցանեն, եթէ ոչ՝ համաշխարհային գայթակղութիւններու ամբողջական շարաններ, կուտակումներ ու պոռթկումներ, որոնց հեղինակներն են այն պետութիւնները կամ իշխանութիւնները, որոնք «վարժ» են ապակայունացնել ու վտանգել, ոչ միայն իրենց շրջակայքերը, այլեւ՝ հեռաւոր ցամաքամասերն ու ամերը:

Այլապէս, ինչպէ՞ս բացատրել կամ նկարագրել, հոս ու հոն տեղի ունեցող տեղաշարժերը, բռնկումներն ու պայթիւնները, որոնք աշխարհը կ'ալեկոծեն ու մարդկութիւնը կը մասնատեն:

Ամենէն մտահոգիչը եւ ապշեցուցիչը այն է, որ այս եւ նման թոհուրոհներ կազմակերպող, հիւսող ու հրահրող կողմեր, միշտ ալ, նոյն բռնամարտիկներն են, որոնք «մասնագէտ»ներ են՝ «աշխարհն ու մարդկութիւն»ը պահելու իրենց բռնցքներուն ու ծոցերուն մէջ, մինչեւ որ զանոնք արիւնքամ կամ խեղդամահ ընեն:

Զսպողնէ՞ր, այդպիսի տմարդի սանձարձակներուն, չկա՛ն ու չեն կրնար ըլլալ, այնքան ատեն որ՝ անոնք ինքզինքնին կը նկատեն՝ «կեղծ» խաղաղասէրներ, ոգիով՝ մարդակերներ, նաեւ հոգեաբանութեամբ՝ անմարդկայիներ, «զազանաբարոյ»՝ մունետիկներ, եւ, ամենէն ահաւորը, իրենք իսկ իրենց ինքնութեան ուրացողները:

Արտառոցը եւ տարօրինակը (արդեօ՞ք) այն է, որ ամէն ոք կամ կողմ, ինքզինք կը հռչակէ «անմեղ», իր խաղաղասիրութեամբ, մարդասիրութեամբ, բարեկեցութեամբ եւ ապահովութեամբ, մինչդեռ, նոյն այդ «վիուկ»ներն են, որոնք յականէ-անուանէ, բայց, միշտ բացայայտ ստորութեամբ, կը նեխեն շրջապատներն ու մթնոլորտները, յետագային ալ, հագնելով «հուրի-բերրի»ներու... կեղծապատիր ու շնորհագուրկ պատմուճաններ:

Պէտք կա՞յ համոզուելու կամ ընդունելու, որ՝ ա՛յս է տիրող (ան)կարգավիճակը՝ աշխարհին ու մարդկութեան, որոնք հանդէս կու գան իրենց խոցելի դերակատարութիւններով, մէկը՝ իր աշխարհացրիւ թունաւորումներով, միւրը՝ իր ոչխարամտութեամբ (նաեւ աղուէսամտութեամբ):

Դժբախտաբար, այս է գորշ կացութիւնը, որ դարձած է ամենօրեայ մղձաւանջ, ումանց համար հասկնալի, ուրիշներու համար՝ անհասկնալի, բայց, վերջին հաշուով, կա՞յ անխուսափելի իրականութիւն մը, ինքզինք պարտադրելու ու տարածուելու ահեղ մոլեգնութեամբ:

Վստահաբար, այս է պատճառը, որ՝ աշխարհը լրիւ շրջուած կարգով կը գլորի եւ իր ետեւէն կը գլորէ... ցամաքամասեր, իսկ մարդկութիւնը կը շարժի, համաձայն իր սեւեռումներուն, քմահաճումներուն ու պահանջներուն, սակայն, միշտ ձախողութեան ու ձախաւերութեան դիտարկումներով:

Այս համաշխարհային ու համամարդկային խառնիճաղանձին մէջ, երբ աշխարհը նոր ձեւափոխումներով ու քարտէսագրումներով յղի է, իսկ մարդկութիւնը՝ ոլոր-մոլոր իր գոյութիւնը կը փորձէ համակերպել ու համալրել, հետաքրքրական է, անոնք ո՞ր կ'երթան եւ ո՞ր կը տանին իրենց հետեւորդները:

Անտարակոյս, այս հարցադրումներուն պատասխանները, եթէ ոչ լրիւ, գէթ մասնակի, նոյնիսկ ամբողջական առումներով, կան «վերնախաւ»երուն մօտ, որմէ տեղեակ չեն «վարնախաւ»երը, բայց, այդ խաղքութիւնները կամ կաղացումները, ո՞վ ըրտաւ որ, կը նկատուին օրինակելի կամ տանելի չափանիշներ:

Այստեղէն եւ այս կէտերէն է, որ կը սկսին խարխափումներն ու խախտումները, որոնց՝ սատանայական կամ խաբէբայական «կռունկ»ներուն տակ, կը փճանան թոյլերը, որոհվետեւ, անոնք չեն անդրադառնար (կամ կ'անդրադառնա՞ն բայց կը լռեն), որ՝



դիմադրելը կամ հակազդելը, չի կրնար ըլլալ լոկ կամայական կամ պատահական, այլ՝ կազմակերպչական ու հիմնական:

Ահա թէ ինչո՞ւ՝ երբ լուսարձակի տակ կ'առնուին վերոյիշեալ չափանիշները, իրենց նշմարելի ու կշռելի ցուցանիշներով, անհրաժեշտ կը դառնան այդ պացքներով կողմնորոշուիլ, բացայայտուիլ ու պարզաբանուիլ, այլապէս՝ ամէն ինչ կրնայ հակառակ արդիւնք տալ կամ առաջնորդել դէպի անորոշութիւններ:

Մեր այս ընդհանրական ակնարկը, ստիպողական կը դարձնէ նաեւ անդրադառնալ ու կեդրոնանալ ՀԱՅ ՀԱՄԱՏԱՐԱԾ ԻՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ, գլխաւորաբար, ուրուագծելով Հայաստանի մէջ տիրող իրավիճակին ահաւորութիւնը, որ հասած է աւելի քան մտահոգիչ եւ անդունդային սահմաններու:

Ծանօթ ճշմարտութիւն է, որ վերջին ծանր ամիսներուն, Հայաստանը կ'ապրի լաւաքանդային զգայացունց շարժումներ, ԵԿԵՂԵՑԻ-ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆ բուռն եւ աննախընթաց զարգացումներով, որոնք ո՛չ դադար, ո՛չ մեղմացում, ո՛չ ալ զսպուածութիւն կ'արձանագրեն, ընդհակառակը, օրը մէկ, նոր բռնկում կը ծագի, նոր աւերներով: Կը թուի թէ այդ եղելութիւնները, ոչ միայն մօտ ապագային, այլ ընդերկար շարունակուելու սուր ճակատագրի մը դատապարտուած են, մանաւանդ, երբ կը տեսնուին, զոյգ բեւեռներուն փոխադարձ անզիջողութիւնները (իրարու նկատմամբ եւ իրենց դիրքերէն), ինչ որ աւելիով կը հաստատէ, յաւելեալ ճակատումներու անխուսափելիութիւնները: Փաստ է, որ հայրենի ժողովուրդը, ըստ էութեան, բաժնուած է երկու հիմնական առանցքներու եւ իւրաքանչիւր կողմ, բռնօրէն կառչած կը մնայ իր դիրքերուն: Ձիւնհալութեան նշո՞յլ, ոչ մէկ տեսանկիւնէ չի նշմարուիր, ընդհակառակը, բախումնային տրամադրութիւնները շատ աւելի շեշտուած են, իրենց բրտութեամբ ու կոշտութեամբ, թէեւ ատոնք չեն հասած յոռեգոյնին, փառք տալով, որ վատագոյն սահմանագիծեր չեն յայտնուիր...:

Սակայն, բոլոր երեւոյթները եւ յառաջխաղացքները, չեն գուշեր դոյզն լաւատեսութիւններ, ոչ ալ կը յուշեն բարեբերութիւններ, ի տես կողմերուն անզիջումներուն, նահանջներուն կամ «դրական եզրոյթ»ի մը յանգելու հաւանականութեան:

Այսօր, Հայաստանը մատնուած է ակամայ, բայց, պարտադիր... անգործութեան, որովհետեւ ամբողջ տարածքները կլանուած են հակընդիր հաւաքականութիւններով, հրապարակները ողորդուած են՝ հասարակական համախմբումներով, պողոտաները խճողուած են հանրահաւաքներով, ուր գոռումները, բացականչութիւններն ու պահանջատիրութիւնները կը խլացնեն ամբողջ հայրենիքը, իսկ եկեղեցիները վերածուած են ամենօրեայ հանդիպումներու վայրի, ոչ միայն ժողովուրդին կողմէ, այլեւ՝ եկեղեցականներու եւ իշխանաւորներու մասնակցութեամբ, արդէս ք, սակայն, բոլոր ժամանողները, այցելուները կամ մասնակիցները, ԻՍԿԱԿԱՆ եկեղեցական հաւատքէն կամ ուխտէն հոն կը յաճախեն, կամ... առ ի ցուցմունք լուսաբանելի ու պարզելի երեւոյթ, արդարեւ:

Յանկարծ, եկեղեցամէտութիւնը ու պատարագապաշտութիւնը դարձան բոլորին համար սիրելի՝ եւ անգի՛ն բարեպաշտութիւններ, առանց սակայն, մտածելու, թէ ինչպէ՞ս պիտի բառնան իրենց արքանեալ դրութիւններէն եւ ինչ վախճան կը սպասուի, թէ՛ ժողովրդական ժխորներուն, թէ՛ իշխանաւորներու խստապահանջութեանց ու ծայրայեղութեանց զսպումներուն:

Աշխարհը, իր բարեկիրթ ու չարակիրթ հատուածներով, Հայաստանի մէջ գոյացած խլտրումները կը դիտէ ու կը հետեւի անհանդարտելի անցուդարձերուն, ոմանք զարմանքով, որ Քրիստոնէութեամբ օրհնուած երկիր մը, ինքզինք յանձնած է մադձի ու մոլոցքի... ճիրաններուն, իսկ ուրիշներ, հեզմանքով կ'ականատեսեն ու կը հրճուին ներհայաստանեան դէպքերուն, ապահովաբար, աւելին ցանկալով անոր... անկումներուն:

Այդուհանդերձ, գահավիժումը կը շարունակուի, կը տարածուի ու կը վերանորոգուի, անխնայօրէն, անգուսպօրէն եւ անսանձօրէն, մինչ քանտախտուցերը ու կալանավայրերը, այնքան խճողուած են, որ համարեա տեղ չկայ նորերուն, նոյնիսկ... «վիզա» ունեցողներուն: Յաճախ հարց կը տրուի, թէ հայաստանցի մտաւորականները «խելագարուած ամբոխ»ներուն մէջ, ո՞ր կը գտնուին: Ճիշդ է, նախորդ ժամանակներու չափանիշներով, մեծութիւններ չկան, բայց, կան, խոհեմ ու գիտակից մտաւորականներ, ճոխ վաստակով օժտուածներ, բայց, հրապարակէն... Բացակայ են:

Ես յաճախ իմ անցեալի դասընկերներուս հարց տուած եմ. «ո՞ր էք, դուք, չէ՞ որ ամենէն շատ ձեզի պէտք ունի հայրենիքը»: Պատասխանները միշտ ալ խուսափողական եղած են, եւ կամ պատճառաբանութիւններ, որոնք այնքան ալ համոզիչ չեն, բայց, իրենց մոայլ պայմաններէն մեկնելով, այլ միջոցներ չեն տեսներ... ափսոս:

Այս կարգավիճակները ի՞նչ արձագանգներ եւ ազդեցութիւններ կը ձգեն Սփիւռքի վրայ, որ, յետ եղեռնի իր ամբողջ կեանքը նուիրեց հայրենիքին, անորմով ապրեցաւ եւ շնչեց, սերունդներ դաստիարակեց ու կրթեց, որպէսզի անոնք միշտ կառչած մնան անոր: Բարդ է սփիւռքահայուն հոգեբանութիւնը, տեսնելով Հայաստանի տակաւ եռքը, իր երկզկխանիութեամբ, երբեմն ալ՝ բազմազկխանիութեամբ, որ տարակուսանքներու կը մատնէ զինք:

Այդ պատճառով ալ, առանց անտեսելու կամ շրջանցելու հոն «խլրտուող» շարժումները, խոհեմութիւնը կը պահանջէ չմիջամտել անոնց «ներքին հարցերուն», բայց, ատիկա չի նշանակեր, որ սփիւռքահայութիւնը, տեսակէտ կամ կեցուածք չունենայ, այնքան ատեն որ՝ երկուքն ալ, Ս. Եկեղեցին ու պետութիւնը, անքակտելի զոյգեր են, ուստի պէտք է մնան աներեր, ամրախիւղ ու հարազատ, միանգամայն, իսկ անոնց զօրավիզ կանգնիլը՝ սրբազան պարտականութիւն:

Այս մօտեցումն ու վերաբերմունքը բացարձակ անհրաժեշտութիւններ են, որոնցմով միայն հայութիւնը կրնայ դիմագրաւել դժուարութիւնները, անոնք ըլլան ներքին թէ արտաքին, հետեւաբար, այդ սկզբունքներով պէտք է ընթանալ ու զօրակցութիւն ցուցաբերել, անխաթար հիմունքներով գործելու եւ արդիւնաւորուելու վճռակամութեամբ:

(Պէյրուք)

«ՀՈԳԵՒՈՐ ԿԵԱՆՔԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄԻ ՏԱՐԻ». «ԼԵՑՈՒՆ ԿԵԱՆՔ»

«Ես եկայ, որ կեանք ունենան եւ ա՛լ աւելի ունենան» Յովհաննու 10:10



Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. վեհափառ հայրապետը իւրաքանչիւր տարի մեզ կը հրաւիրէ խոկալու եւ ծրագրելու մեր հայկական կեանքերը յուզող շատ մը իրականութիւններու մասին: Այս իմաստով 2026 տարին ան հոչակեց «Հոգեւոր կեանքի վերանորոգումի տարի», ինչ որ շատ կարեւոր եւ հրամայական նիւթ-մտահոգութիւն է: Պիտի չուզէինք առանձնացնել այս տարուան բնաբանը նախորդ տարիներու բոլոր մտահոգութիւններէն, բայց պիտի յանդգնինք ըսելու, թէ «հոգեւոր կեանքի վերանորոգումը»



այժմեական, հրատապ իրականություն է:

Չ'ուշանար վեհափառ հայրապետի բացատրությունը. «Պարագայական որոշում մը չէ սա, այլ հրամայական անհրաժեշտություն մը ի տես հայ կեանքէն ներս հոգեւոր կեանքի առանցքային կարեւորութեան նահանջին»: Վեհափառ հայրապետը կը գիտակցի այս «նահանջին»: Այսօր մեր համահայկական իրավիճակը կը պարզէ այս «նահանջ»-ը: Վեհափառ հայրապետը քաջ կը գիտակցի, թէ «քրիստոնէական հասկացողութեամբ մարդը ֆիզիքականէն անդին ու վեր, հոգեւոր գոյություն է՝ Աստուծոյ պատկերով եւ նմանութեամբ ստեղծուած»: Ֆիզիքականէն անդին մարդուն արժեւորումը հոգեւորի ինքնութեամբ կեանք է, որ մարդը, իմա՝ հայը, պարտի ապրիլ աշխարհի մէջ եւ որ զինք կը տանի յաւիտենականութեան:

Հաւատքի հասկացողությունը կարելի չէ անջատել ազգի ու հաւաքականութեան ընկերամշակութային եւ պատմաքաղաքական իրականություններէն: Հաւատքը կ'արտայայտուի եւ կ'արտայայտէ ազգ-հաւաքականութեան մը կեանքի ինքնությունը: «Հաւատքը ինքզինք կ'արտայայտէ տուեալ մշակոյթին ճամբով, եւ մշակոյթը քրիստոնէական նկարագիր կը ստանայ հաւատքի ազդու ներկայութեամբ», կ'ըսէ վեհափառ հայրապետը: Եթէ հաւատքը կը մտնէ հաւաքական կեանքին մէջ, այդ կու տայ ինքնություն, բայց երբեք չի նսեմացներ կամ չի տարանջատեր զայն:

Հաւատքը կը զօրացնէ հաւաքականությունը եւ կու տայ ուժ ու նոր թափ: Հաւաքականութեան մաս կազմող եկեղեցական համայնքները իրենց հոգեւոր կեանքը կ'արտայայտեն տարբեր «շեշտաւորումներով», բայց հիմքը կը մնայ նոյնը: «Երկնային արժեքներու հաւատարմությունն է՝ Աստուծոյ ներկայությունը կ'ապրինք «լեցուն կեանք»-ի մը մէջէն, որ մեզի շնորհուեցաւ Յիսուս Քրիստոսի միջոցով, երբ Աստուածաշունչը կ'ըսէ. «Ես եկայ, որ կեանք ունենաք եւ ա՛լ աւելին»: «Ա՛լ Աւելին» լեցուն կեանքն է, որ Յիսուս Քրիստոսի միջոցով կը բացատրուի ապաշխարութեան հասկացողութեան ընդմէջէն:

Քրիստոնէական աստուածաբանութեան հիմքը ապաշխարությունն է՝ նոր կեանքը, որ Քրիստոս մեզի շնորհեց, երբ խաչին վրայ մահացաւ, բայց յարություն առնելով ստեղծեց նորը: Մարդը, նոյնքան նաեւ հայը, կը ստանայ այս նորը, երբ ապաշխարութեան միջոցով Աստուծոյ ներկայությունը կը դարձնէ ապրուած կեանքի հիմքը: Ապաշխարությունը «բողոքական» վարդապետական ուսուցմունք մը չէ: «Եթէ մարդ մը նորէն չծնի, չի կրնար Աստուծոյ թագաւորությունը տեսնել» (Յովհաննու 3:3): Նորէն ծնիլը ուրիշ բացատրություն



շունի, եթէ ոչ ապաշխարութիւն: Ապաշխարութիւնը ապրող իրականութիւն է, որ մարդուն կեանքը կը վերածէ «լեցուն կեանք»-ի իրականութեան:

Ապաշխարութիւնը ինքնաճանաչման եւ հոգեկան մաքրագործման կարեւորագոյն ճանապարհներէն մէկն է: Այդ միայն մեղքերու խոստովանութիւն չէ, այլ՝ մարդու ներքին աշխարհին մէջ կատարուող խոր փոփոխութիւն, որ կը սկսի խղճի ձայնը լսելով եւ կը հասնի Աստուծոյ հետ վերանորոգուած յարաբերութեան: Ապաշխարել կը նշանակէ կանգ առնել, անկեղծօրէն նայիլ սեփական կեանքին եւ գիտակցիլ այն սխալ քայլերուն, որոնք հեռացուցած են մարդը բարոյական եւ հոգեւոր ճշմարտութենէն: Ապաշխարութեամբ մարդը կը վերստեղծուի՝ կը ծնի, «հաշտուելով» Աստուծոյ հետ եւ նոր կեանքի մէջ քալելու վճռականութեամբ: Վեհափառ հայրապետը կը բնութագրէ այս իրականութիւնը հոգեւոր կեանքի իր բացատրութեան ընդմէջէն՝ իբրեւ «կեանքի որակ, որուն առանցքը Քրիստոս ինքն է՝ իր ուսուցմունքները, հրաշքներէն եկող պատգամները, իր խաչն ու յարութիւնը»:

Եկեղեցական աւանդութեան մէջ ապաշխարութիւնը նաեւ համայնքային երես ունի: Թէեւ այդ խորապէս անձնական փորձառութիւն մըն է, սակայն կը կապէ մարդը եկեղեցիին ամբողջ մարմնին հետ: Խոստովանութեան միջոցով հաւատացեալը կը զգայ, որ մինակ չէ իր պայքարներուն մէջ, այլ՝ մաս կը կազմէ միասնութեան մը, ուր աղօթքը, խորհուրդը եւ սիրոյ ներկայութիւնը փոխադարձաբար կը զօրացնեն բոլորը: «Հոգեւոր կեանքը եկեղեցիէն անջատուած անձնակեդրոն կեանք չէ, հոգեւոր ու բարոյական արժէքները եկեղեցիէն դուրս ապրելու իւրայատուկ եղանակ մը չէ. այլ՝ եկեղեցւոյ համայնական կեանքի շրջագիծէն ներս, հոգեւոր արժէքներու շեշտաւորումով ապրուած կեանք է», կ'ըսէ վեհափառ հայրապետը:

Եկեղեցական խորհուրդներու շրջանակին մէջ ապաշխարութիւնը ունի խոր բնոյթ: Խոստովանութեան խորհուրդը հաւատացեալը կը միացնէ Քրիստոսի խաչին եւ յարութեան խորհուրդին: Մեղքի խոստովանութիւնը մահ է՝ հին մարդուն համար, իսկ ներման շնորհը՝ նոր կեանքի յարութիւն Քրիստոսի մէջ: Ապաշխարութիւնը մասնակցութիւն մըն է փրկագործական իրադարձութեան, որ իրականացաւ Գողգոթայի վրայ, բայց կը շարունակուի եկեղեցւոյ կեանքին մէջ: Վեհափառ հայրապետը կը շեշտէ այս իրականութիւնը. «Հոգեւոր կեանքը հաւատացեալի եւ հոգեւորի միջեւ տարբերութիւն տեսնող կեանք չէ, առաջինը նկատելով՝ եկեղեցւոյ դաւանանքին ու աւանդութիւններուն հետեւող, երկրորդը՝ իր հոգեւոր կեանքը ինք ստեղծող: Նման անջատում ճիշդ չէ: Միւս կողմէ, եկեղեցւոյ պատկանիլը բնական ընթացքով հոգեւոր չի դարձներ ենթական: Հոգեւոր կեանքը, եկեղեցւոյ հաւաքական կեանքին մէջ հոգեւոր արժէքներու ապրուած կեանք է»:



Կեանքի ընթացքին մարդը բազմիցս կը կանգնի բարիի եւ չարի խաչմերուկին վրայ: Ապաշխարութեան հոգին կենդանի պահելով ան կը սորվի միշտ վերադառնալ ճշմարիտին, նորոգուիլ սիրոյ մէջ եւ աւելի լուսաւոր կերպով ապրիլ իր հաւատքը իր շրջապատին մէջ: «Հոգեւոր կեանքը Աստուծոյ շնորհքով փրկութեան հրաւիրուած ըլլալու կեանք է եւ փրկութեան ճանապարհէն հաւատքով ու հաւատարմութեամբ քալելու յանձնառութիւն է՝ միշտ զգուշ ըլլալով չհեռանալու փրկութեան ճամբէն (Եբր 2:1)», կը հաստատէ վեհափառ հայրապետը: Ապաշխարող մարդը արդէն իսկ կը սկսի ապրիլ այս կեանքը աշխարհի մէջ, որ իր ամբողջական իրագործումը պիտի գտնէ Աստուծոյ յաւիտենական ներկայութեան մէջ: Այսպէս, ապաշխարութիւնը կը դառնայ ոչ թէ տխրութեան, այլ՝ յոյսի, լոյսի եւ վերածնունդի կեանք: «Հոգեւոր կեանքը հաւատքով թրծուած ու յոյսով զօրացած կեանք է» (Արամ Ա. վեհափառ հայրապետ):

Ապաշխարութիւնը մարդը եւ հաւաքականութիւնը կը զետեղէ «լեցուն կեանք»-ի իրականութեան մէջ: Այս «լեցուն կեանք»-ը կը սորվինք Աստուածաշունչի միջոցով: Վեհափառ հայրապետը կը շեշտէ. «Աստուածաշունչը անանջատելի մասը պէտք է կազմէ մեր կեանքին»: Եթէ անհրաժեշտ է, որ կարդանք Աստուածաշունչը, նոյնքան եւ աւելի «հրամայական է ապրիլ Աստուածաշունչի պատգամը՝ զայն դարձնելով ուղեցոյցը մեր մտածումներուն, գործերուն ու ապրելակերպին» (Արամ Ա. վեհափառ հայրապետ): Հետեւաբար, Աստուածաշունչը պէտք է դարձնէ մեր ազգային համապարփակ դաստիարակութեան անբաժան մասնիկը: Վեհափառ հայրապետը կը գիտակցի, երբ կ'ընդգծէ. «Ազգայինը դարձած է տիրական՝ ի հեճուկս հոգեւորին»: Ան նաեւ կը շեշտէ «հոգեւոր արժեքներուն կենսական կարեւորութիւնը հայ կեանքէն ներս՝ որպէս աղբիւրը մեր բարոյական, մշակութային, կրթական ու ազգային արժեքներուն»:

Հայ ժողովուրդի դիմագրաւած մարտահրաւերները այսօր չեն պարփակուիր միայն քաղաքական, ռազմական եւ աշխարհաքաղաքական իրավիճակներու մէջ: Հայ ժողովուրդը այսօր նոյնքան նաեւ կ'ապրի հոգեւոր կեանքի տագնապ եւ կը նահանջէ իր հոգեւոր արժեքներու գիտակցութեան մէջ: Վեհափառ հայրապետը կը զգաստացնէ մեզ բոլորս, երբ կը դնէ իւրաքանչիւրս այս մեծ իրականութեան դէմ յանդիման՝ 2026 տարին հռչակելով «Հոգեւոր կեանքի վերանորոգումի տարի»:

Հոգեւորը պարտինք վերականգնել եւ վերապրիլ: Պիտի տքնինք դարձեալ կերտելու ու հասնելու «լեցուն կեանք»-ի իրականութեան: Անհատական, ընտանեկան, հաւաքական ու

ազգային մեր կեանքերը պարտինք լիցքաւորել «լեցուն»-ի գիտակցութեամբ: Այս այն «լեցուն կեանք»-ն է, որ «աւելի»-ն է:

Այս «լեցուն» եւ «աւելի» կեանքով է, որ հայը պիտի դնենք պատմութեան շարունակականութեան գործընթացին մէջ:

ԴՈԿՏ. ՀՐԱՅՐ ԸԷՊԷՃԵԱՆ

ՅԻՇՈՂՈՒԹԻՒՆԸ ԶՆՁԵԼՈՒ ԴԻԻԱՆԱԳԻՏՈՒԹԻՒՆԸ - ԾԻԾԵՌՆԱԿԱԲԵՐԴԷՆ ՊԱՔՈՒ՝ ՅԻՇՈՂՈՒԹԵԱՆ ՎԱՃԱՌՔԸ

ԱՀԱՐՈՆ ՇԽՐՏԸՄԵԱՆ



Ճէյ Տի Վենսի այցելութիւնը Ծիծեռնակաբերդի յուշահամալիր, անոր կատարած գրառումը քանի մը ժամ ետք ջնջելը պարզ դիւանագիտական սայթաքում մը չէր: Անիկա քաղաքական «ժեստ» էր՝ կանխամտածուած, չափուած եւ վերանայուած այլ մայրաքաղաքներու կամքին համեմատ:

Սկզբնապէս՝ «ցեղասպանութեան նահատակներուն» յիշատակին գրառում, ապա քանի մը ժամ ետք՝ բառերու մաքրագործում, «Genocide» բառին անհետացում, եւ անոր փոխարէն՝ անորոշ

ձեւակերպում մը՝ «շատ սարսափելի բան մը պատահեցաւ աւելի քան 100 տարի առաջ»:

Ահա՛ ժամանակակից դիւանագիտութեան բառարանային սրբագրութիւնը. ոճային ուղղումի քօղին տակ՝ պատմութեան էութենէն հրաժարում:

Երբ Միացեալ Նահանգներու փոխնախագահը կը յայտնէ, թէ Հայոց Ցեղասպանութիւնը հայերուն համար «մշակութային առումով կարեւոր» մըն է, աւելի քան լեզուական սխալ մը կ'ընէ: Վենս կը նսեմացնէ միջազգային իրաւունքի սահմանումներուն տակ ամրագրուած ոճիրը եւ զայն կը վերածէ յուշագրական արարողութեան, մշակութային ինքնութեան տարրի, կարծէք խօսքը հին աւանդութեան կամ ծէսի մը մասին ըլլար:

Ցեղասպանութիւնը «մշակութային հարց» չէ. ան մարդկութեան դէմ ոճիր է, որուն ճանաչումը քաղաքական եւ իրաւական հետեւանքներ ունի:

Եւ ահա այստեղ է խնդրոյ բուն հանգույցը:

Վենսի այցելութեան ամբողջ տրամաբանութիւնը, ինչպէս անոր Պաքուի յայտարարութիւնները կը վկայեն, ուղղուած էր տարածաշրջանին մէջ «խորհրդային սահմաններու» օրինականացմանը: Արցախը չյիշատակուեցաւ: Նախիջեւանը լուրջ ջրջանցուեցաւ: Արեւմտահայաստանի հարցը գոյութիւն չունեցաւ: Ան հպարտութեամբ յայտարարեց, թէ առաջինն էր, որ կը սաւառներ Թրամփի «Ատրպէյճանի երկու մասերը կապող» մայրուղիին վրայով: Այսինքն՝ աշխարհաքաղաքական քարտէսը արդէն գծուած է, եւ հայ ժողովուրդի պատմական իրաւունքները տեղ չունին անոր մէջ:



«Genocide» բառին ջնջումը պատահական չէր: Ան քաղաքական ու իրաւական բեռ մըն է, ներառեալ Հայաստանի իշխանութիւններուն համար: Ան կը բանայ հատուցման, պատասխանատուութեան, պահանջատիրութեան դռները: Ան կը յիշեցնէ, որ պատմութիւնը փակուած էջ մը չէ:

Ուաշինկթընը, իր երկերեսանի բարոյախօսութեամբ, մէկ կողմէ կը խօսի մարդկային իրաւունքներու մասին, իսկ միւս կողմէ՝ Թուրքիոյ եւ Ազրպէյճանի զգայնութիւնները հաշուի առնելով կը նահանջէ մարդկային ողբերգութիւն խորհրդանշող բառի մը դիմաց:

Սակայն աւելի մտահոգիչը Հայաստանի իշխանութիւններուն լռութիւնն է:

Երբ օտար բարձրաստիճան պաշտօնեան կը նսեմացնէ Ցեղասպանութեան քաղաքական բնոյթը, եւ Երեւան լուռ կը մնայ, այդ լռութիւնը կը դառնայ համակրանքի ձեւ: Երբ արտաքին ուժեր կը փորձեն պատմութիւնը սահմանափակել «խորհրդային սահմաններու» շրջանակին մէջ, եւ իշխանութիւնները չեն հակադարձեր, այդ լռութիւնը կը վերածուի համաձայնութեան:

8 Օգոստոս 2025-ին, Ուաշինկթընի մէջ նախաստորագրուած հայ-ազրպէյճանական փաստաթուղթին վերջնական ստորագրութիւնը, եթէ իրականացուի այս տրամաբանութեամբ, կրնայ դառնալ ոչ միայն տարածքային, այլեւ պատմական հրաժարականի քայլ: Արցախի, Նախիջեւանի, Կարսի, Արարատի նկատմամբ ազգային իրաւունքներու հարցը դուրս կը դրուի բոլոր օրակարգերէն՝ «իրատեսութեան» անունով: Բայց հայ ժողովուրդին յիշողութիւնը չի ջնջուիր դիւանագիտական խմբագրումներով: Ծիծեռնակաբերդի Անմար Կրակը մշակութային զարդ չէ: Ան վկայութիւն է: Ան մեղադրանք է: Ան պահանջ է:

Երբ մեծ տէրութիւն մը կը փորձէ բառ մը ջնջել, ան չի կրնար ջնջեր պատմութիւնը. ան կը բացայայտէ իր քաղաքական հաշուարկները: Երբ իշխանութիւն մը կը լռէ, ինքնաբերաբար կը թուլացնէ տուեալ պետութեան բարոյական ողնաշարը:

Հայոց Ցեղասպանութիւնը «մշակութային կարելորութիւն» չէ: Ան արդարութեան հարց է: Ան միջազգային իրաւունքի հարց է: Ան ազգային արժանապատուութեան հարց է:

Ո՛վ որ կը փորձէ զայն անորոշ «սարսափելի դէպքի» մը վերածել՝ կը մասնակցի համամարդկային եւ ազգային յիշողութեան դէմ լուռ դաւադրութեան:

Վերջաւորութեան, անգամ մը եւս Անմար Կրակին առջեւ՝ սառած խղճմտանքներու ցուցադրութեան ակնատեսը դարձանք...

ԻՆՉՈ՞Ւ ՓԱՇԻՆԵԱՆ ԴԱՐՉԱԾ Է ԱԶԴՊԷՅՃԱՆԻ ԵՒ ԹՈՒՐԹԻՈՅ ՍԻՐԵԼԻՆ

Յարութ Սասունեան

www.ThealiforniaCourier.com

12/2/2026

Օրէ օր Թուրքիան եւ Ազրպէյճանը կը նեղցնեն օդակը Հայաստանի պարանոցի շուրջ՝ Միացեալ Նահանգներու նախագահ Տանըլտ Թրամփի օրհնութեամբ: Անոր ինքնահռչակ «Թրամփի ուղի»-ն (Թրամփի ուղի՝ յանուն միջազգային խաղաղութեան եւ բարգաւաճման) ասոր լաւագոյն ապացոյցն է: Թրամփը չէ հետաքրքրուած Հայաստանով կամ անոր շահերով: Ան կը մտածէ միայն իր անձնական շահերուն մասին՝ յուսահատօրէն ձգտելով անարժան Նոպլէեան խաղաղութեան մրցանակ: «Թրամփի ուղի»-ն պարզապէս այլ անուն է Թուրանի ճամբուն, որ Թուրքիան եւ Ազրպէյճանը կը կապէ Կեդրոնական Ասիոյ թրքական հանրապետութիւններու. վաղեմի փանթրքական երազանք մը, որ լուրջ սպառնալիք է Հայաստանի գոյութեան:



Որքան ալ Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինեանը պնդէ, որ ինք խաղաղութիւն բերած է Հայաստան, ինչպէս կը պնդէ, որ ժողովրդավարութիւն հաստատած է, իրականութիւնը կը մնայ այն, որ ոչ միայն խաղաղութիւն չկայ, այլ նաեւ նոյնիսկ անարժէք «Խաղաղութեան պայմանագիրը» ստորագրուած չէ:

Մտահոգիչ է, որ Հայաստանի ղեկավարը դարձած է Ագրպէճանի եւ Թուրքիոյ սիրելին:

Այս երկու երկիրները, Եւրոպայի եւ

Միացեալ Նահանգներու հետ միասին, ամէն ինչ կ'ընեն, որպէսզի այս յունիսին կայանալիք խորհրդարանական ընտրութիւններէն ետք Փաշինեան մնայ իշխանութեան ղեկին: Վերջին բանը, որ անոնք կ'ուզեն, ընտրութիւնն է զայն փոխարինող հայ ազգայնականի մը, որը պիտի ջնջէ վերջին ութ տարիներուն իրենց բոլոր ձեռքբերումները: Ահա թէ ինչո՞ւ մնայուն կերպով կը լսենք Թուրքիոյ նախագահ Ռեճեփ Թայիփ Էրտողանին եւ անոր մօտիկներուն այն միտքը, թէ իրենք հարց չունին Փաշինեանին հետ, սակայն մեծապէս մտահոգ են «արմատական» սփիւռքով:

Այս տխուր իրավիճակի վերջին ապացոյցը «Եւ թիուպ»-ի վրայ տեղադրուած թրքերէն 8,5 վայրկեան տեւողութեամբ տեսանիւթն է՝ «Անոնք թրքերէն կը դասաւանդեն (Հայաստանի) դպրոցներուն մէջ» խորագիրով: Տեսանիւթը, զոր պատրաստած է թուրք պլուկըր Էրենջան Ալկիւնը, վերջին 11 օրուան ընթացքին դիտուած է 86.562 անգամ եւ ունի 638 մեկնաբանութիւն:

Ալկիւնը, որ ունի մօտ 200 հազար հետեւորդ, յայտարարած է. «Ինչո՞ւ Հայաստան կը բարեկամանայ Թուրքիոյ հետ: Դպրոցներուն մէջ թրքերէն կը դասաւանդեն: Արդեօք Հայաստան աստիճանաբար կը ձեռքազատի՞ Թուրքիոյ նկատմամբ իր թշնամանքէն: Եկէք՝ այս հարցին նայինք Փաշինեանին յայտարարութիւններուն ընդմէջէն: Նախորդ ամրան ան ըսաւ. «Մեր միակ տարբերակը Թուրքիոյ հետ հաշտուիլն է: Պատերազմի՞լ Թուրքիոյ նման երկրի մը դէմ: Անոնք չեն գիտեր՝ ինչի՞ մասին կը խօսին: Ատկէ գտա՞նք Թուրքիան եւ Հայաստանը իրարու համար սպառնալիք չեն: Մեր առաջարկած «Խաղաղութեան խաչմերուկ» նախագիծը խոչընդոտ չէ Թուրանի ճանապարհին համար: Եթէ ջրուղի կայ, բոլորս այդ ջուրէն կրնանք միասին խմել», յայտարարած է ան: Այս յայտարարութիւններէն կարճ ժամանակ ետք Թրամփը միջամտեց՝ վերանուանելով յայտնի «Զանգեզուրի միջանցք»-ը «Թրամփի միջանցք» եւ տրամադրելով Միացեալ Նահանգներուն 100-ամեայ վարձակալութեան իրաւունք տարածաշրջանին մէջ... Փաշինեանի խաղաղասիրական խօսքերը ինչպէ՞ս կ'ազդեն հասարակութեան վրայ, եւ ինչպէ՞ս Հայաստան յառաջ կը տանի այս գործընթացը:

Իրօք, Հայաստանի կրթութեան նախարարը յայտարարած է, որ Հայաստանի մէջ շուրջ 400 աւագ դպրոցներ հետաքրքրութիւն կը ցուցաբերեն ագրպէճաներէն եւ թրքերէն լեզուներու ուսուցման նկատմամբ: Սակայն նախարարը ընդունած է, որ այս լեզուներու որակեալ ուսուցիչներու պակաս կայ: Յաջորդ քայլը կրնայ ըլլալ հարիւրաւոր ագրպէճանցի եւ թուրք ուսուցիչներու տեղափոխումը Հայաստան, ինչ որ կրնայ բարենպաստ միջավայր ստեղծել



ապագայ լրտեսներուն համար: Ես աւելի քիչ կը մտահոգուէի, եթէ այս լեզուները դասաւանդուէին համալսարաններուն, եւ ոչ թէ աւագ դպրոցներուն մէջ:

Ալկիւնը կը շարունակէ. «Հայաստանի քաղաքական առանցքը սկսած է փոխուիլ, եւ անիկա ընտրած է համագործակցութեան ուղի թուրքերուն հետ... Հայաստանի մէջ «թուրք», «թուրքիա» եւ «թրքական» բառերը տակաւին յուզականութիւն յառաջացնող բառեր են: Թրքերէնի առկայութիւնը՝ իբրեւ ընտրովի դասանիւթ Հայաստանի մէջ, տակաւին չի նշանակեր, որ երկու հասարակութիւնները իրարու կը մօտենան: Սակայն ասիկա նշան է, որ երկու երկիրները դադրած են զիրար անտեսելէ, եւ Փաշինեանի յայտարարութիւնները այս մէկը կը հաստատեն:

Մէկնաբանելով «Թրամփի ուղի»-ն, զոր ագրայէճանցիները եւ թուրքերը կը կոչեն «միջանցք», Ալկիւն կը նշէ. «Զանգեզուրը ոչ միայն երթելեկային հաղորդակցութեան ուղի է Ագրայէճանի եւ Հայաստանի միջեւ, այլ նաեւ ռազմավարական գիծ է, որ կը կապէ Թուրքիան եւ Կեդրոնական Ասիան: Երբ «Զանգեզուրի միջանցք»-ը բացուի, մինչ այդ անջատուած թուացող թրքական պետութիւնները առաջին անգամն ըլլալով կը կապուին անխափան ցամաքային ճամբով: Ասիկա սոսկ խորհրդանշական միաւորում չէ: Այս ճամբով կրնան երկարիլ բնական կազի եւ նաւթի խողովակաշարեր: Պիտի տեղադրուին ֆայպըր օփթիք մանրաթելային համացանցի հաղորդալարեր: Պիտի ստեղծուի ուղղակի երկաթուղային հաղորդակցութիւն:

Պատկերացուցէք, որ մէկը Պոլիսէն առնէ պասը եւ ճամբորդէ Նախիջեւանով, Զանգեզուրով, Արցախով, Գանձակով եւ Պաքով՝ մինչեւ Կասպից ծովու ափ: Հոնկէ ան նաւով կրնայ հասնիլ Ղազախստան, ապա պասով՝ Պիշքէք, կամ գուցէ՝ Ուրումչի (Չինաստան)... Ասիկա պարզապէս ճամբայ չէ: Ասիկա քաղաքակրթութիւններու վերամիաւորման պէս բան մըն է: Այս տեսլականը կը կոչուի նաեւ «Թուրանի ճամբայ», բայց քանի որ այդ եզրը կ'անհանգստացնէ որոշ (հայ) շրջանակներ, դիւանագիտօրէն կ'օգտագործուի «Միջին միջանցք» եզրոյթը: Իսկ ի՞նչ դեր պիտի ունենայ Հայաստանը այս գործընթացին մէջ: Իրականութիւնը այն է, որ Հայաստան կրնայ օգտուիլ այս միջանցքէն: Եթէ ան գործէ խելամտօրէն, անոր տնտեսութիւնը կրնայ վերակենդանանալ այս ճամբուն միջոցով, քանի որ հոսկէ անցնող իւրաքանչիւր բեռնատար փաստօրէն պիտի անցնի Հայաստանի սահմաններով: Պիտի բացուին եկամուտի նոր աղբիւրներ՝ գումարային (logistics) եկամուտներ, ծառայութիւններու ոլորտի շահոյթ եւ մաքսային վճարումներ, եւ նոյնիսկ կարելի է ներգրաւել նոր արտասահմանեան ներդրումներ»:

Այնուամենայնիւ, Ալկիւնը կը խոստովանի. «Անցեալի բեռը այնքա՛ն ծանր է, որ անոնք (հայերը) չեն կրնար յաղթահարել որոշ զգացումներ: Այսօր Հայաստանի քաղաքական հոետորաբանութիւնը տակաւին կը կեդրոնանայ Յեղասպանութեան, Ղարաբաղի կորուստին եւ Թուրքիոյ՝ իբրեւ թշնամիի գաղափարին վրայ: Բնական է, որ այս հոետորաբանութեամբ մեծցած հասարակութեան համար միասնութեան ուղիին աջակցիլը դիւրին չթուի: Տեսնենք՝ Ժամանակը ի՞նչ ցոյց պիտի տայ: Սպասենք եւ տեսնենք»:

Ալկիւնը եզրափակելով՝ կ'ընդգծէ, որ «Թրամփի ուղի»-ն՝ «Օգտակար պիտի ըլլայ մեր երկրի (Թուրքիոյ) եւ Ագրայէճանի համար: Իմ կարծիքովս, անիկա ոչ միայն երթելեկային հաղորդակցութեան նշանակութիւն պիտի ունենայ, այլ նաեւ պիտի առաջնորդէ աշխարհաքաղաքական ընդլայնման: Ասիկա ձեռք կը բերէ ռազմավարական նշանակութիւն՝ թէ՛ տնտեսական, թէ՛ ռազմական առումով: Եւ պէտք չէ մոռնալ, որ Ագրայէճան այն վայրն է, ուր Թուրքիոյ զինուած ուժերը աշխուժ ներկայութիւն ունին: Եթէ



այս միջանցքը բացուի, ասելի պիտի զօրանայ Թուրքիոյ զինուած ուժերուն ազդեցութիւնը արեւելքի մէջ: Հետեւաբար, Թուրքիան այս բեմագրութեան մէջ առնացքային դեր կը խաղայ: Պէտք է պարզապէս գիտնալ՝ ինչպէ՛ս ճիշդ խաղալ մեր քարտերը»:

ԳՐԱԿԱՆ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ

ՓՈՒՆՋ ՍԸ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ՝ ԵՐԱՆ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆԷ



ԳՐԻՉՍ ԸԼԼԱՄՐ

Գրիչս ըլլար սիրոյ անթրոց
Չոր սիրտերու մոխիրին մէջ,
Գրիչս ըլլար խոհի անթրոց
Միտքերու խոր թմբիրին մէջ...

Թող ան ըլլար զանգ ու դօղանջ
Քար խիղճերու արթընացման,
Լոյս հեղեղէր վարդաբուրեան,
Զերթ արեգակն արդարութեան,

Մտնէր ամէն խորշ, խորխորատ,
Լոյսը սփռէր ճշմարիտին
Խաւարին դէմ շիլ կեղծիքին,
Անիրաւին, անարդարին...

Իր թելերուն վրայ տանէր
Յոգնած մարդը դէպ' բարձունքներ,
Հոն ուր ոգին ճառագայթէ
Արշալոյսնէ՛ր, արեգակնէ՛ր...

Գրիչ ի՛մ խոնարհ, հաւատաւոր,
Քեզ փայլեցնեմ, ժանգ չկապես,
Դողամ վրադ գերթ աչքի լոյս,



Մթութեան մէջ՝ բեկոր մը յոյս...

25/1/2016

.....

ԱՌԱՒՕՏԵԱՆ ԱՊՐՈՒՄ

Ամէն առաւօտ, վաղ լուսաբացին,
Ինձ այցի կու գան թրթիռներ յոյզի,
Արեւալոյսին հետ կ'ողողեն հոգիս
Շողով ու շաղով, բերկրանքով լոյսի:

Յետոյ բիւր բառեր ինձ այցի կու գան
Մեր Մեսրոպաշունչ գանձէն Մեծասքանչ,
Բա՛րդ-բա՛րդ կուտակուած կեանք կ'առնեն յանկարծ,
Կու գան ինքնակամ գրիչիս տակ խոնարհ:

Մերթ հոսքը անոնց հեզասահ է շատ,
Առուակի մը պէս կարկաչ է զուլալ,
Որ զիս կ'առնէ իր հոսանքըն ի վար,
Խոհի եւ յոյզի ընթացքով վարար...

Մերթ կը խցանուի ցաւի մորմոքով,
Բառս կ'ընդվզի, չի դառնար ան տող,
Կը տանջուիմ ես տենդով ալեկոծ,
Ցաւս զիս կ'այրէ ներքին կրակով:

Երանի՛ բառս հոսի գրչիս տակ,
Անբերրի ծառ մը չդառնա՛մ յանկարծ,
Երկունքս օրհնուի ծնունդով բարի,
Զերթ լոյսի հատիկ մարդկանց բաշխուի:
6/2/2024

.....

ԻՄ ՄԷՋ Կ'ԱՊՐԻՆ

Իմ մէջ կ'ապրին հիւլէները
Հայկեան ոգոյն ազատաբաղձ,
Որ թռիչք առաւ ու խոյացաւ,
Երկնեց հայոց պատմութիւնը:

Աչքերուս մէջ բո՛յլ մը նայուածք
Դեռ կը ցոլայ Անանիայէն,
Ու սրտիս մէջ կը խորզգամ
Զա՛րկ մը խղճի մեր մեծ Սուրբէն:

Խորին խորհո՛ւրդ մը կ'առկայծի
Մտքիս խորունկ ծալքերուն մէջ
Դաւիթ Անյաղթ Մտածողէն,
Անոր մտքի ճենճերումէն:



Հոգւոյս երկնին մէջ պլպլայ
Շո՛ղ մ'աստեղաց մեր Մեծերէն,
Որոնք մութին մէջ ճաճանչեն,
Դառնան փարոս մը լուսարծարծ:

Սրտիս փոքրիկ բաժակին մէջ,
Թրթիռը կայ սիրտերուն Մեծ
Դուրեանին ու Մեծարենցին,
Որոնք միշտ սէր շնչացին:

Ներաշխարհիս մէջ կ'ապրի դեռ
Խորաթափանց Թէքէեանը,
Որուն դրոշմած մէն մի տողը
Դարձաւ յորդո՛ր, լոյսի պատուէ՛ր:

Անդրանիկին քաջ ոգիէն
Հրեղէն բո՛ց մը դեռ բոցկլտայ
Երակիս մէջ իմ հնամեայ,
Պայքարի կա՛նչ է անվեհեր...

Չյանձնուիլ երբե՛ք, երբե՛ք
Ու զէնքերը վար չդնել,
Քանզի սահմանն իրաւ քաջաց
Ոգին է բորբ ու աննահանջ:
3/2/2022

.....

ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒ

Մայրենի՛ լեզու, քաղցրիկ հայերէ՛ն, դո՛ւն ես սրտիս մէջ,
Քու կարկա՛ չդ է որ զիս կը գերէ մօրս ձայնին պէս,
Քու բառե՛րդ են որ դիւթեն սիրտս սիրոյ խօսքի պէս...
Շրթանցս վրայ հայաստանահամ կարօ՛տ ու կա՛նչ ես,
Հոգւոյս մէջ թաքուն խոստովանանք ես, զրոյց ես անկեղծ,
Աղօթք ես խորունկ, Աստուծոյ ուղղուած աղապատանք ես,
Հին-հին դարերու հետ հաղորդութիւն, լուսէ՛ ծիածան ես,
Իմ բիր-բիր նախնեաց հետ ոգեղէն կապ ու ներշնչանք ես...
Հայրենեաց հողին ոգին ու շունչն ես, իր բոյրն ու թոյրն ես,
Ամէն մէկ վանկդ սրբազան միւռնոն հայոց խորանին,
Ամէն մէկ տառդ ոսկեղենիկ գիր աստուածապարգէս,
Օղա՛կ առ օղա՛կ դուն կը կամարուիս որպէս լոյս տեսի՛լք,
Օղա՛կ առ օղա՛կ դուն կը կամարուիս որպէս սուրբ պատգա՛մ,
Յոյսի վառ կեռո՛ն, մաքառումի կա՛մք ու պայքարի կա՛նչ
Եւ հաւա՛տք անխախտ այն արշալոյսին որ պիտի ծագի
Զարթօնքով գարնան ու բողբոջումով վառ ու կենսալի:
19/11/2019

.....



ՄԵՐԹ ԱՅՍ ԵՄ, ՄԵՐԹ ԱՅՆ

Մերթ արե՛ւ կայ իմ մէջ գարնան,
Մերթ սառնաշո՛ւնչ հովը ձմրան,
Մերթ թախի՛ծը դալուկ աշնան,
Մերթ ալ գո՛լը տապին ամրան...

Մերթ լուսաբացն եմ գուարթո՛ւն,
Մերկ կէսօրուան տապը կիզո՛ղ,
Մերթ իրիկուան լոյսը խոհո՛ւն
Մերթ ալ գիշերն եմ բեղմնաւո՛ր...

Ժա՛մ-ժամանա՛կ իմ մէջ առած,
Բնութեան հետ յար ներդաշնակ,
Մէկ ա՛յս, մէկ ա՛յն, փոփոխական,
Բնութեան պէս եմ հոգեշո՛ւյլ...

Միրտս միշտ շէ՛ն, անապակա՛ն,
Բնութեան պէս երբ գայրանայ,
Յետոյ դարձեալ ոսկեշառա՛յլ
Կը փոէ լոյսն արեգական...
7/2/2018
.....

ԶՄԵՌ Է

Հրակարմիր աշունէս ետք, պատրանքներս հատի՛կ-հատի՛կ
Ինկան գետին, պաղ սառոյցին ու թաղուեցան անոր ծոցին:

Նախշո՛ւն-նախշո՛ւն տերեւներս զիս լքեցին կմախացած,
Մերկ ճիւղերս պարզած երկինք այդպէս մինա՛կ ու դողահա՛ր:

Երկնի անհունը բացուեցաւ հայեացքիս դէմ պայծառացած,
Որ տեսաւ ա՛յն ինչ չէր տեսած տերեւներուն տակ թաքնուած...

Աստուածամերձ բարձունքները զիս կանչեցին գորովագին,
Նոր յո՛յս, հաւա՛տք ներշնչեցին տխուր հոգւոյս տառապահար:

Ո՞րն է արդեօք նախընտրելի, հարցուց հոգիս անսթեփեթ.-
Մերկ ու անզարդ փնտռել զԱստուա՞ծ, ճշմարիտ Լոյսը ոգեղէն,

Թե՞ օրօրուիլ նեննիմներով, տերեւներուս սօսափիւնով,
Հեքիաթ հիւսել ու երազել, ապրիլ, շնչել անուրջներով...

Միենո՛յնն է, ըսաւ ձայն մը, ճշմարիտը ամէն տեղ է,
Կը բաւէ որ գայն միշտ փնտռես, զգաս զանի քու սրտիդ մէջ:

Տերեւները երգ կը հիւսեն անոր մասին երբ գարուն է,

Իսկ ձմռան մէջ, ան կը շողայ մերկ ու անգարդ, բիրեղի պէս:
26/1/2026

ՊԱՏՄԱԿԱՆ ՎԱՆԷՆ ՄԻՆՉԵՒ ԵՐԵՒԱՆ

ԱՐԱՄ ԱՃԵՄԵԱՆ



Անցեալ դարասկզբին, մեր Աճէմեանական տոհմը կ'ապրէր իր բնօրրան Վանին մէջ: Վանը Հայկական Բարձրաւանդակի Վասպուրական Նահանգի մայր քաղաքն էր: Սա երբեմնի Արարատեան թագաւորութեան՝ Ուրարտուի Բիայնա վարչական կեդրոնն էր, որ կոչուած է նաեւ Տուշպա կամ Տոսպ, նախքան Վան դառնալը:

Առաջին Համաշխարհային Պատերազմը ծանր հետեւանքներ ունեցաւ Արեւմտահայութեան համար, որոնք թուրք եաթաղանի սպառնալիքին տակ ականաւ լքեցին իրենց պատմական հայրենիքը:

Վանեցիները թէեւ արեւան գնով պաշտպանեցին Վանը, սակայն ի վերջոյ նահանջող ռուսական բանակի հովանիին տակ արտագաղթեցին դէպի Ռուսա-Հայաստան, անցնելով ռուս-թրքական սահմանը: Այսօր, Մեծ Եղեռնէն մագապուրծ եղած մեր հայրենակիցները սփռուած են աշխարհով մէկ:

Ճակատագրի բերումով՝ ես ծնած եմ Եգիպտոսի մէջ: Ծնած օրս, պապիկիս հօրեղբորորդին՝ Լեւոն Աճէմեան, ընտանեօք հանդերձ ներգաղթեց Խորհրդային Հայաստան: Նախքան այդ, ան Գահիրէի Գալուստեան ազգային վարժարանի հայոց պատմութեան ուսուցիչն էր: Ան աչքի կ'իյնար որպէս ՌԱԿի երդուեալ անդամ, հեղինակ պատմութեան գիրքերու եւ հրատարակիչ «Փունջ» մանկապատենական հանդէսին: Օր մը, երբ Շուէտէն գացեր էի ծնողքիս այցելութեան, Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ բակին մէջ հանդիպեցայ առաջնորդարանի դիւանապետին: Վերլիշելով Լեւոն Աճէմեանին՝ ան զինք «պոլշեիկ» անուանեց: Ասիկա ակնյայտ հերիւրանք մըն էր, վանեցի ազգականիս հանդէպ:

Կիլիկիոյ ազատագրումէն ետք, Լեւոն Աճէմեան եւ ուրիշ ազգայնականներ, Պարսկաստանի վրայով գաղտնի կ'անցնին Կիլիկիա՝ Միհրան Տամատեանի կառավարութեան մաս կազմելու: Չար բախտէն՝ ֆրանսացիները բանակցելով ազգայնական թուրք առաջնորդ՝ Մուսթաֆա Բէմալին հետ, անոր կը յանձնեն լեգէոններու ձեռքով ազատագրուած Կիլիկիան՝ դրժելով իրենց խոստումը հայերուն: Հայ զինուորները անձնուրաց մարտնչած էին՝ տապալելու Օսմանեան կայսրութիւնը: Առանց Ֆրանսայի հովանաւորութեան սակայն, հայերը ի վիճակի չէին առանձին պաշտպանելու Կիլիկիան՝ օրէ օր սաստկացող



քեմալական արշաւանքներուն դէմ: Ուխտադրուծ ֆրանսացիները, երկարատեւ պատերազմէն յոգնած, Կիլիկիան կը պարպեն 1919-ին եւ կը վերադառնան իրենց հայրենիքը:

Լեւոն Աճէմեան Ատանայի մէջ կը հանդիպի իր ապագայի հարսնացուին՝ օրիորդ Ռաքելին, հետը կը նշանուի Կիպրոսի մէջ եւ առանձին կը վերադառնայ Եգիպտոս: Գահիրէի մէջ անոնք կը պսակուին եւ ընտանիք կը կազմեն: Նախ կ'ունենան դուստր մը, որուն կ'անուանեն Վանուշ: Տարի մը ետք կը ծնի անոնց որդին՝ Վանիկ : Հայրս եւ մայրս կը պատմեն, թէ 1947ին անոնց ընտանիքը գաղթեց Խորհրդային Հայաստան՝ այնտեղ մշտական բնակութիւն հաստատելու համար:

Տարիներ ետք բախտաւոր առիթը ունեցայ իրենց հանդիպելու՝ դառնալով անոնց տան ցանկալի հիւրերէն մէկը: Անոնք Հայաստանի միակ ազգականներս էին, որոնք տունը Արեւմտահայերէն կը խօսէին: Անոնց մօտ, ազատ կը զգայի զրուցելով ընդհանուր նիւթերու շուրջ: Անոնք ալ ինծի պէս կը տիրապետէին օտար լեզուներու: Իւրաքանչիւր անգամ որ իրենց կ'այցելէի, ընթրիքէն ետք Վանիկին հետ կ'առանձնանայի իր նեղ սենեակին մէջ՝ ունկնդրելու BBC-ի վերջին լուրերը, իր կարճ ալիքի թրանզիստորէն, որ նուէր ստացեր էր իր Մանչեստրի մօրեղբօր տղայէն: Վանուշը յաճախ կը խնդրէր, որ Շարլ Ագնաւուրէն երգէի իր նախասիրած երեք երգերը *Il faut savoir, L'amour c'est come un jour* եւ *Bonne anniversaire*՝ մանաւանդ երբոր իրենց տունը արտասահմանէն հիւր գար:

Հայաստանի մէջ, ի միջի այլոց, «Վանուշ» արական սեռի անուն է. ատոր համար տեղացիները զինք կը կանչէին «Վանուհի»: Յետպատերազմեան տարիներուն, Տիկ.Ռաքել անձամբ կը հոգար ընտանիքին ապրուստը, մինչ Վանիկն ու Վանուշը կը հետեւէին իրենց բարձրագոյն ուսման: Ան կ'երթար սեւ շուկայ՝ Եգիպտոսէն բերած հրահանի կայծքարերը ծախելու և շահած դրամով կը գնէր հաց, միս, պտուղ և ծաղիկ: Դժբախտաբար ո՛չ Վանիկը, ո՛չ ալ Վանուշը կ'ամուսնանան: Սակայն ասիկա արդէն ուրիշ զրոյցի թեմա է: Երկուքն ալ կը մահանան խոր ծերութեան մէջ, մէկը Ամերիկա, միւսը՝ Երեւան:

Մէլգոնեան ուսանած տարիներուս ամառուան արձակուրդի օրերս կ'անցընէի Գահիրէ, ծնողքիս մօտ: Օր մը հայրս տուն կը բերէ Գուրգէն Մահարիի «Երիտասարդութեան սեմին» գիրքը, զոր նուէր ստացած էր մի ոմն վանեցի՝ Տիկին Կալիպսէի կողմէն: Ինքնակենսագրական վէպին մէջ հատուած մը կար մեծ հօրս՝ Արամ Աճէմեանին մասին, որուն այնպէս ալ չկրցայ տեսնել կենդանութեան օրօք: Հայրս, որ կիսատ թողած էր իր հայեցի ուսումը, յաճախ ինծմէ կը խնդրէր գիրքէն կարդալ իր հօր մասին յիշատակուած հատուածը: Կիպրոս վերադառնալուս պէս, որոշեցի նամակ մը գրել Գուրգէն Մահարիին, առանց ունենալու իր տան հասցէն: Նամակս պարզապէս հասցեագրեցի

To Mr. Gurgen Mahari in Yerevan, Armenia USSR

Շատ չանցած, իրմէ ստացայ նամակիս պատասխանը, որուն հետ ներփակ գետեղած էր իր մակագրած լուսանկարը՝ ակնոցը ձեռքին: Անսահման մեծ էր կրած ոգեւորութիւնս, որ դասընկերներուս կարդացի նամակին պարունակութիւնը: Լուրը կայծակնային արագութեամբ հասաւ դաստիարակ հսկիչ՝ Պր. Աբգարեանին: Ան ինծի առաջարկեց, որ



Գուրգէն Մահարիին նամակն ու լուսանկարը տեղադրեմ տղոց շէնքի ապակեպատ ցուցատախտակին վրայ, որպէսզի հոնկէ անցնողը պահ մը կենար և կարդար նամակը: Ես շատ հպարտ էի նշանաւոր ազգական մը ունենալուս համար: Այդ օրէն սկսեալ, խելքս միտքս ուսանիլն էր Մայր Հայրենիքին մէջ:

Երեւան հասնելուս պէս, քսանամեայ տարեդարձս տօնեցի Գուրգէն Մահարիի տան մէջ: Այդ կապակցութեամբ, ուրիշ անձանօթ ազգականներ եկան զիս դիմաւորելու: Անոնցմէ մէկն էր վերոնշեալ Վանուշը, որ Եգիպտոսէն հայրենադարձուած էր: Միւս ազգականս Վանի մէջ ծնած Վարդան Աճեմեանն էր, որ Վանուշէն խնդրեց ձեռքերէս բռնելով տանիլ իր տունը: Այդպէս ալ պատահեցաւ:

Վարդան Աճեմեանը Սունդուկեան թատրոնի գլխաւոր ռեժիսորն էր: Ցերեկները ան կ'աշխատէր որպէս աւագ դասախօս՝ Թատերական Ինստիտուտին մէջ: Ան միշտ զբաղած կ'ըլլար ստեղծագործական աշխատանքներով: Սակայն, երբ իրեն այցելութիւն մը տայի՝ ան ժամանակ կը գտնէր հետս զրուցելու:

Օրուան որ ժամուն պատահէր, կը բարձրանայի Վարդան Աճեմեանի բնակարանը, Մատենադարանի հարեւանութեամբ, եւ դուռը կը թակէի: Ընդհանրապէս տիկին Արուսը տունը կ'ըլլար, որ դուռը բանալուն պէս իսկոյն կը հարցնէր.

— Քաղցած ես:

Առանց պատասխանիս սպասելուն, ան տերեւի տոլման իսկոյն կը տաքցնէր եւ զիս կը կանչէր խոհանոց՝ զայն ճաշակելու: Պատահած է որ իրիկունը ներկայացում ունենար, ուստի ան կ'աճապարէր դէպի թատրոն՝ զիս յորդորելով տանը սպասել, մինչեւ Աճեմեանին գալը: Արուս Ասրեանը Սունդուկեան թատրոնի ամենաշատ սիրուած դերասանուհիներէն մէկն էր: Թատերական Ինստիտուտէն տուն վերադառնալով՝ Վարդանը կը հրճուէր իմ ներկայութեամբ: Ան կը հետաքրքրուէր ուսանողական կեանքովս, կը հարցնէր եթէ վերջերս նամակ ստացեր էի Ֆրանսայի Աճեմեաններէն: Կուգէր անպայման լսել մերոնց լուրերը: Յետոյ գրասեղանէն կը հաւաքէր լրագիրներն ու պարբերականները եւ պահ մը կ'առանձնանար ննջասենեակին մէջ՝ անոնց պարունակութիւնը աչքէ անցընելու և պահ մը հանգստանալու: Թարմացած ոյժերով ոտքի կ'ելլէր անկողինէն եւ աճապարանօք «ցտեսութիւն»ըսելով՝ կը մեկնէր տրամատիկական թատրոն:

Ես դարձեալ մինակ կը մնայի՝ սպասելով Ալիոշայի, Նաթայի և Վարդանիկի գալուն: Ամէն գալուս կը տեսնէի երեք սերունդներու ներկայացուցիչները՝ հայր, որդի և թոռնիկ: Ինչ խօսք, որ մթնոլորտը չափազանց ջերմ եւ ոգեշնչող էր: Յետոյ, անցնելով դաշնամուրի գլխին, կ'երգէի Ալիոշային սորվեցուցած նոր երգը՝ «Ո՛վ իմ Նունէ». Նաթան կ'ընկերակցէր դաշնամուրին վրայ: Ալիոշան՝ մեր գիտցած շնորհալի երգահան՝ Ալեքսանդր Աճեմեանն էր: Ան կը յօրինէր էսթրատային սիրուած մեղեդիներ և հայկական սիմֆոնիաներ:


Ինքնաճանաչման եւ ժամանակակից հայկական մշակոյթի՝ զրականութեան, թատրոնի և երաժշտութեան ընկալման բացառիկ շրջան մըն էր, որ ընդմիշտ զիս պիտի կապէր արմատներուս հետ: Ես հպարտ էի Երեւանի Աճեմեաններով՝ քաջ գիտակից, թէ ունէի

հրաշալի ազգականներ: Այնքա՛ն ուշադրութեան եւ սիրոյ կ'արժանանայի իրենց մօտ: Երբ ուշ գիշերին վերադառնայի հանրակացարանի սենեակս՝ հազուադիւտ երանութեամբ կը մտնէի անկողինս:

ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒ ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉ

ՄԻԱՄԻՆ ԿԱՐԴԱՆՔ ԵՒ ՊԱՏՄԵԼՔ

Ճորճ Արապաթեան



Աստուածաշունչը աշխարհի մէջ ամէնէն շատ տարածուած, տպագրուած ու թարգմանուած գիրքն է անկասկած: Ի՞նչը կրնայ ըլլալ այս իրողութեան պատճառը. պատմութիւններուն հետաքրքրութի՞ւնը, գեղարուեստական արժէ՞քը, բարոյական դասէ՞րը: Գիրք մը, որուն վերջին բաժինը գրուած է շուրջ երկու հազար տարի առաջ,

սակայն մշտապէս կը փայլարդիական:

Գիրքի մը յաջողութիւնը ինչի՞ հետ կապուած է: Աշխարհի մէջ տարեկան տասնեակ, նոյնիսկ հարիւր հազարաւոր գիրքեր կը տպուին: Որեւէ գիրք, նոյնիսկ ժամանակուան մը համար սիրուած ու տարածուած գիրք մը, կրնայ շուտով դառնալ ժամանակավրէպ, անոր ներկայացուցած նիւթերը կրնան ոչ հետաքրքրական դառնալ: Դասախօս մը ունէի, կ'ըսէր թէ՝ մեր ամենայայտնի գրողները մինչեւ 20-30 տարի պիտի դառնան ժամանակավրէպ:

Համեմատաբար երկար կը պահպանուի այն գիրքը, որ կրնայ ապագան գուշակել տրամաբանութեամբ եւ զգացումով, այն գիրքերը, որոնց ներկայացուցած նիւթերը անձնական յոյզերէն կը վերածուին համամարդկային ապրումներու: Իսկ ժողովուրդը կը սիրէ այն գիրքը, որ անմիջականօրէն կապուած է իր կեանքին:

Ինչքան ալ լաւ շարադրած ըլլաս միտքդ՝ գեղեցիկ բառերով ու հարուստ նկարագրութիւններով, եթէ անիկա կապուած չէ կեանքին, չի տարածուիր ու չ'ընդունուիր մեծ լսարանին կողմէ:

Մենք՝ ուսուցիչներս, կը ջանանք մշտապէս աշակերտին մատուցուող նիւթը կապել անոր կեանքին: Նոյնիսկ երբ կը քնենք մեր ժամանակներէն բաւական առաջ ապրած գրողի մը մէկ գիրքը, անպայմանօրէն կը ջանանք գտնել կապ մը, որ ներկայացուող նիւթը կը հասցնէ մեր ժամանակներուն:

Այս իմաստով մեծ է արժեքը Աստուածաշունչին: Աստուածաշունչը գեղեցիկ պատմութիւններ չի պատմեր միայն, այլ կը ստրվեցնէ ճիշդ ապրիլ նաեւ. երբեմն պատմութիւններով, երբեմն առակներով, երբեմն փառաբանութիւններով, աղօթքներով, նամակներով ու խրատներով Աստուածաշունչը կը դառնայ ճիշդ կենսակերպի աղբիւր:



Աստուածաշունչի մասին եղող կարծիքներն ու մեկնաբանութիւններ երբեմն կը ջանան մոլորեցնել մեզ: Աստուածաշունչը պիտի չկարդանք սոսկ տեղեկութիւն քաղելու, այլ ամէն տողի մէջ նոր դաս մը առնելու, կեանքի այս կամ այն երեւոյթ ճիշդ հասկնալու եւ ըմբռնելու համար: Ասոր պիտի օգնեն, բնականաբար, ճիշդ մեկնութիւնները, բացատրութիւնները, որոնցմով մարդը պէտք է սնանի մանուկ հասակէն: Փոքրիկները, մանաւանդ կրօնական հարցերու շուրջ, կը սիրեն ամենատարբեր հարցումներով խճողել մեր միտքը: Անոնցմէ ոմանք կ'ունենան յստակ պատասխաններ, իսկ ոմանք կ'ենթադրեն լուրջ մտածում եւ յստակ մեկնութիւն: Յաճախ կը փորձենք պատասխաններ գտնել, սակայն աւելի յաճախ կը խուսաբինք անոնցմէ, զանոնք՝ փոքրիկները, յուսախաբ ընելով: Քիչ մը առաջ անցնելով ըսեմ, որ նոր հրատարակուած այս գիրքը՝ «Մանուկներու Աստուածաշունչը. միասին կարդանք եւ պատմենք», պիտի օգնէ լաւապէս պատասխանելու այդ հարցումներուն, եւ ոչ թէ միայն «անձրեւին տակէն չոր դուրս գալու»: Պէտք է յիշել, որ մեր պատասխաններէն կախեալ է կեանքին նոր բացուող փոքրիկին վերաբերմունքը՝ կենսական հարցերուն նկատմամբ: Ծնողքին, ուսուցիչին, դաստիարակին մէկ սխալ բառը կրնայ էականօրէն պղտորել փոքրիկին պատկերացումը կեանքի տարբեր արժէքներուն նկատմամբ:

Սուրբ գրոց ընկերութեան հրատարակութիւնները միշտ ալ եկած են գունագեղ դարձնելու Աստուածաշունչի պատմութիւններն ու բարոյագիտական դասերը:

Աստուածաշունչը երբ հայերէնի թարգմանուած է, գրուած է գրաբար հայերէնով: Այնքան ճոխ ու հարուստ եղած է գրաբարի թարգմանութիւնը, որ զայն «Թագուհի Թարգմանութեանց» կոչած են: Գեղեցկութեան, ճոխութեան, հարստութեան հետ մէկտեղ մեր եկեղեցւոյ հայրերը կարելոր համարած են նաեւ Աստուածաշունչը ժողովուրդին հասցնելու գաղափարը: Այդ պատճառով ալ երբեմն գեղարուեստական եղանակով, երբեմն մեկնութեանց ճամբով Աստուածաշունչը մօտեցուցած են ժողովուրդին:

Սուրբ գրոց ընկերութիւնը, իր առաքելութեան հաւատարիմ ժառանգորդ, անգամ մը եւս լոյսին կը բերէ գեղեցիկ հրատարակութիւն մը, ուր Աստուածաշունչէն քաղուած դէպքեր կը ներկայացուին այսօրուա՛ն մանուկին: Սա ձեւով մը նախկին հրատարակութեան շարունակութիւնն է՝ ճոխացած նոր մտածումներով: Նախորդ գիրքին մէջ աստուածաշունչեան դէպքերը կեանքին կը կապուէին ամփոփ կերպով, իսկ հոս՝ գործնական վարժութիւններով:

Աստուածաշունչի ընկերութիւնը միշտ ալ նպատակային ուղղութիւն մը որդեգրած է դէպի մանուկները:

Գիրքը արեւմտահայերէնի թարգմանած է Դոկտ. Արտա Ճեպէճեան, խմբագրած՝ Տիկ. Նորա Բարսեղեան: Թարգմանիչն ու խմբագիրը բժախնդրօրէն աշխատած են, որ գիրքը ըլլայ սահուն ընթերցելի: Նմանօրինակ գիրք մը, անկասկած, այսօրուան մարտահրաւերներուն դէմ մեծ ու շնորհակալ աշխատանք մըն է, ցոյց տալու, որ արեւմտահայերէնը դեռ չի բարձրացներ իր «Ճերմակ դրօշակը»:

Ինչպէս վերը նշեցինք՝ սոյն գիրքին հիմնական նպատակը գործնական վարժութիւններով Աստուածաշունչը փոքրիկի կեանքին կապելն է: Այս գիրքը ցոյց կու տայ, որ այսօրուան նիւթականացած աշխարհին մէջ, ուր կան ընկերային ու բարոյական մեծ խնդիրներ ու տագնապներ, ինչպէս կրնայ Աստուածաշունչը օգնել յաղթահարելու զանոնք:

Այս գիրքին մէջ մեր մանուկները, ինչու չէ շատ աւելի մեծ մարդիկ, պիտի գտնեն իրենց մտահոգող շատ հարցումներու պատասխաններ: Այս գիրքը պիտի սորվեցնէ մեր մանուկներուն սիրելի իրենց միջավայրը, իրենց բարեկամն ու չգգալ մինակ:

«Մանուկներու Աստուածաշունչը

Միասին կարդանք եւ պատմենք

Աստուածաշունչը ընկալենք պատմութիւններու եւ վարժութիւններու ճամբով:

Գիրքին ճակատին այս տողերը կը կարդանք: Մա կը նշանակէ, որ ներկայացուող գիրքը ոչ միայն պիտի օգնէ հասկնալ Աստուածաշունչը կեանքէն առնուած օրինակներով, այլ հասկցածը վերապատմել: 144 էջերու մէջ ամփոփուած 24 պատմութիւններ, որոնք պիտի օգնեն կեանքը ընկալել Աստուածաշունչի կողմէ տրուող կեանքի դասերով:

Ծնողներ մշտապէս իրենց զաւակներու ուշադրութեան առարկաներն են: Մեր զաւակները մեզի կը նային, սիրելի ծնողներ: Անոնք մեզմէ կ'առնեն, մեզի ալ թող տան: Երբեմն պէտք է մանկանալ կեանքին նոր բացուող մեր մանուկներուն հետ, որոնք մանաւանդ ընկերային հարցերու շուրջ միշտ ալ պատասխաններ պիտի սպասեն մեզմէ: Աստուածաշունչը թող ըլլայ միշտ ներկայ՝ որպէս կեանքի ուղեցոյց, իսկ զայն կարդալը՝ կենսակերպ:

ԹՈՆՐԱՏՈՒՆ

Մարիանա Պերթիզլեան-Ղազարեան

Հալէպ



Լուսէ ափսէներուն վրայ գետեղած չիրերը վեր ու վար կը շրջէր: Էսկիւրանի մատուռին կից գտնուող փոքրիկ այս տարածքէն շատ յստակ կերեւէին թրքական Օրտու գիւղի լոյսերը: Մթութիւնը ամայութեան հետ ձեռք-ձեռքի բռնած, աննկատօրէն իրենց թելերուն տակ կ'առնէին հովիտները, իսկ լեռները տակաւին կը պայքարէին արեւու

վերջին ճառագայթները ամուր պահելու իրենց կողերուն վրայ՝ զծելով մայրամուտի գեղանկար մը, որ նոյնիսկ հեռուներէն կը հմայէր դիտողը:

Ուրախ էր Լուսէ՝ իրեն համար լուսաւոր ու խաղաղ այս պատկերին համար, մանրուք թուող ամէն բան կըմբռնէր մեծ հաճոյքով:

Մանկամարդ կինը առանձին էր գիւղական իրենց փոքրիկ տան, հողէ պատշգամին կեդրոնը: Պատշգամը աննկատօրէն կը միանար դաշտերուն եւ հանդիպակաց լեռներու ստորոտին, որ քիչ անդին թշնամիի տարածքին մէկ մասը կը կազմէր:



Տասնութ ամեայ որդին բանակ գացած էր, իսկ դուստրը՝ իբրեւ հարսնացու գաղթած ԱՄՆ՝ իր նորակազմ բոյնը այնտեղ հաստատելու համար:

Մինչ մտքերուն մէջ խորասուզուած գոհունակութեամբ կ'աշխատէր, չնկատեց թէ գիշերը ինչպէս խաղաղօրէն եկաւ ու հանգչեցաւ իրենց տան շրջակայքը:

Ներսը, խոր լռութեան մէջ, տան գրադարանի դարաններուն վրայ հանդարտօրէն կը մտածէին Լուսէի սիրելի գիրքերը. այն գիրքերը, որոնք օր մը անոր մատներուն հպումն ու բոյրը վայելած էին: Հիմա, անոր կոշտացած մատները կը հաճոյանային հպելով բազմապիսի միրգերու եւ հատապտուղներու թափշին, միաժամանակ ապահովելով անոր տան ապրուստը, կարծեցեալ երջանկութիւնն ու ընտանեկան բարօրութիւնը: Առաւօտեան եւ կէսօրին մինչեւ մայրամուտ, արեւու ճառագայթները պիտի հանգչէին իր սեղանիկներուն վրայ, հրճուէին միասնաբար, գոյն տային միրգերուն եւ Լուսէին, անոնց գոյներէն շիկնէին ու բարձրանային կրկին դէպի արեւ, որ յետոյ Լուսէի տունն ալ լեցուէր լուսաւոր, ճառագայթող երազով:

Ատեն-ատեն միտքը գործով կը սառէր հեռաւոր մտածումի մը վրայ: Ովկիանոսէն անդին դուստրը՝ մանկահասակ Արփին, նոյն միջոցին իր քունին մէջ պիտի զգա՞ր մայրական գոյութիւնն ու ներկայութիւնը, մօր ջերմացնող բազուկներուն զօրութիւնը: Արփի հիմա իր գիրկը ունէր նորածին մանչուկ մը, որուն արմատները կու գային հեռաւոր Կիլիկիոյ փոքրիկ բարձունքներէն, որոնք տակաւին հայօրէն կը շնչէին եւ կը բաբախէին: Արփիի համար անհասանելի իր պապենական տան այգիի պտուղներուն համն ու բուրմունքը ոչ մէկ կապ ունէին այս նոր երկրի, հատ-հատ տուն բերուող ծինափոխուած պտուղներուն հետ:

Արփի բացաւ աչքերը եւ իրականութեան հետ մնաց դէմ յանդիման: Կարծես երազ էր ամէն բան...

Սպառած էր, ոչ մէկ բանի կարիք ունէր՝ բացի լռութենէ, անրջելէ, անցեալը ապրեցնելու փորձեր կատարելէ: Ուր ամսական մանչուկը՝ Արէնը Արփիի ուժերը սպառած էր, իսկ հայրական տան կարօտը կը հիւծէր, կը ցաւցնէր հոգին:

Մանուկներուն ձայնը հանգչած էր հիմա, հեռաւոր իր ծննդավայրի՝ Էսկիւրէն գաւառիկի եւ մերձակայ մթութեան մէջ: Անոնք իրենց փոքրիկ մատիկներով զանազան հատապտուղներ, միջերկրականեան ծովափերուն վրայ աճող՝ զաարուրի եւ աննապի փոքրիկ հատիկներ զետեղած էին թափանցիկ տոպրակներու մէջ, յաջորդ օր տօնակատարութեան ընթացքին, մատուոյն կից սեղանիկներու վրայ վաճառելու համար:

Աստուածածնայ ուխտի օրն էր: Քաղաքներէն եկող մարդոց յորդոց հոսանքը հետզհետէ կ'աւելնար: Կու գային Սուրիոյ մօտակայ քաղաքներէն՝ Հալէպէն, Լաթաքիայէն... բոլորն ալ՝ ուխտերով եւ բաղձանքներով, զորս ծրարած էին իրենց սրտերուն խորքը: Կու գային զանոնք յանձնելու Աստուածածնայ բարեհաճութեան: Փոքրիկ մատուռի ձայնի ելեւէջները, հնչիւնները կը ծածկէին հանդիպակաց լեռներն ու ձորերը: Գիշերային ամայութեան մէջ, ցնծութեամբ եռացող հովիտին մէջէն, շարականաձայն հովիկը կ'արձագանգէր՝ հեռաւոր լեռնաշղթաներէն ճամբայ գտնելու համար դէպի երկինք...



Լուսէ գիշերային ամայութեան մէջ ձեռքը երկարեց, գրադարանի գիրքերէն մին բացաւ, ականարկ մը նետեց գիրքի էջերէն մէկուն վրայ, սկսաւ կարդալ... Ետքը հապճեպով դուռը բացաւ, գլխաբաց ու ոտաբոյսի վազեց դուրս՝ դէպի դաշտ...

Հրդեհի, այրուածքի հոտ էր, ուրկէ ըլլալը չէր գիտեր: Ուժասպառ նստաւ թոնիներէն մէկուն տակ, որ մտածէր՝ տեսիլք էր, թէ՞ երազ. դժուար էր հասկնալ, հոտը ռունգերուն մէջ էր տակաւին... Հինաւորց հողը կը ճշար, կը բղաւէր կարծես. դիմացը թրքական գոյութիւնն էր, որ զինք կ'ընկճէր. շուարած էր...

Դրացիները քնացած էին, չէին տեսներ զինք: Հեռուն մարգարիտներու պէս փոքրիկ սպիտակ լոյսեր կը շողային. թերեւս ալ, հայկական արմատներ թաքնուած ըլլային անոնց մէջ, ի վերջոյ ովքեր ալ ըլլային հեռուն գտնուողները՝ մարդիկ էին վերջապէս... մարդիկ, որոնք ստեղծուած էին նոյն արարիչին կողմէ...

Յիշեց թէ՛ ինչպէ՛ս իրենց դրացուհին կը պատմէր իր մօր՝ Զուլալ մայրիկին մասին, որ դիմացի Օրտու՝ թրքական գիւղէն էր, ջարդի օրերուն անոնք ալ թուրքերէն հալածուելով այս սահմանով հագիւ հասած էին Քեսապ, այնտեղ թողած իրենց ամբողջ ունեցածը: Սովի օրեր էին ամեն տեղ. Քեսապ եւ իր յարակից շրջանները կը ջարդուէին թրքական եաթաղանով: Քեօրքիւնեցի Պետրոս թրքական հարուածէն կ'իսամեռ վիճակով պառկած էր, մինչ՝ Զուլալ գեղուհին գաղթականներուն հետ կը հասներ Պետրոսէնց գիւղ, ուր սկիզբ կ'առնէր սիրոյ պատմութիւն մը...

Լուսէ յիշեց օրը այդ՝ երբ ինք հարս եկաւ այս փոքրիկ գիւղը: Այնքան ուրախ ճամբայ ելած էր, հասնելէն քանի մը օր ետք իրեն համար ամեն բան վերածուած էր հսկայ թոնիքի մը, որուն շուրջ ինք պարտաւոր էր մշտակայ ներկայութիւն դառնալ, անընդհատ աշխատելու մեղուի մը ժրաջանութեամբ, որ թոնիքին կրակը մնար թէժ... թոնիքը մխացած էր անընդհատ, Լուսէի յոյգերով կայծ տուած էր՝ չէր մարած անոր տաքուկ հոգիին շնորհիւ: Զինք հրաւիրած էին տաքնալու, բայց փոխարէնը Լուսէ իր քրտինքով եւ սիրով էր որ ջերմացուցած էր թոնիքը: Քիչ մնացած էր որ ներս գլորէր ու անհետանար բոցերուն մէջ, բայց զուսպ եւ դիմացկուն կեցուածքը զինք պահպանած էին կորուստէ. մինչ օրն ի բուն թոնիքը թէժ պահելու համար կը ջանար, կը տքնէր, միաժամանակ նշմարած էր, որ իր կեանքն ալ անցած էր, ցաւի զգացողութիւնն ալ անցած էր, մանկութեան ու պատանեկութեան պէս, իսկ ինք մնացած էր միւս-մինակ հեռաւոր այս լեռներուն վրայ՝ գլխիկոր թաւալքով...

Յանկարծ Լուսէ սթափեցաւ, ցուրտ էր, իսկ ինք անպաշտպան՝ արտաքնապէս եւ հոգեպէս:

Ժամանակը ինչպէս սահեցաւ չհասկցաւ, թէ՛ իր կեանքի ժամանակը եւ թէ՛ կեսգիշերը, որ ականթարթի մը պէս վերածուեցաւ առաւօտեան...



Գիւղը փոքրիկ 22ուկներով, կենդանիներուն կանչերով կ'արթննար, մութն ու լուսաբացը կարօտով զիրար կը գրկէին: Մելամաղձոտ կիներ առանձին զգաց, բայց ճնճողկներուն երգեցիկ մտերմութիւնը ժպիտ մը ուրուագծեց անոր դէմքին...

Լուսէ ամչցաւ իր շփոթահար վիճակէն, խոր շունչ քաշեց, լոյսի թափանցիկ շողին հետ արագ քայլերով մտաւ ներս. առանձին էր, որոշում առաւ խաւարը ետէ թողուլ՝ վերադառնալու դէպի լոյսը, ուր ամէն ինչ յստակ էր, հետապնդելու համար իր տեսիլքը:

Հեռացող մշուշին պէս իր կեանքը եւս ենթակայ էր արագ անցնելու. պէտք է աճապարել՝ մտածեց...

Քայլերը լոյսին հետ հալեցան, միաձուլուեցան յաւիտենական լեռներու խորութեան մէջ, ուր անմահութեան ծննդավայրն է... ուղղուեցաւ ամպերուն առաջնորդութեամբ եւ բռնկող լուսաբացերուն ոգիով... հետեւելու մոլեգնապէս սլացող երկրագունդի վազքին, հասնելու հորիզոններէն անդին զինք սպասող՝ Արփիին...

Լուսէ քալեց արեւաթաթախ ճամբաներէն, յետոյ մշուշոտ ու անկայուն հորիզոններէ, ուր թշնամին ամենուրեք է, բայց իր հայրենի տան հողոծածկ պատշգամն ու լեռները ոչ մէկ տեղ գտաւ:

Լուսէ հիմա օտար է, լուսաւոր ճամբորդ է: Իր տաքուկ թոնիրն ու հոգիի կրակը եւ լեռներու ամրութիւնը իրմէ անբաժան, անվերջ կը քալեն...

Կը վերադառնա՞ր արդեօք, իր տաքուկ թոնիրի երկիրը...

Աղբիւր՝ «Գանձասար-Բացառիկ 2026»

ՎԱՐԴԱՆԱՆՔ, ԲԱՐԵԿԵՆԴԱՆ ԵՒ ՓԱԿԵԱԼ ԽՈՐԱՆ



արարողութիւններէն զատ, հանդիսութիւն, թատերական ներկայացում եւ այլ անակնկալներ...

Նոր տարիէն եւ Ս. Ծնունդէն ետք, մեր մանուկ հոգիները անհամբեր կը սպասէին Վարդանանց տօնին, որպէսզի վայելէինք հնգօրեայ արձակուրդը, որ կը սկսէր Հինգշաբթի օր, Վարդանանց նուիրուած տօնով եւ կը շարունակուէր մինչեւ Բուն Բարեկենդան եւ Փակեալ խորան... Տօներ՝ որոնց ընթացքին հետաքրքրական տօնախմբութիւններ ալ կ'ըլլային եկեղեցական

Ո՞վ չէ արտասանած Կարմիր Վարդանին նուիրուած անմահական տողերը՝ «Հայ եմ ես, Հայ եմ ես, Սարսափեցէք իմ դէմքէս, Հայաստանը ազատող Քաջ Վարդանին թոռն եմ ես»... Մանկութենէն մեր յիշողութեան մէջ դրոշմուած այս տողերը այնքան սիրելի կը



դարձնէին Վարդանանց տօնը, զայն ըստ արժանւոյն նշելու կոչուած հանդիսութիւնները, ուր անպայմանօրէն թատերական ներկայացում մըն ալ կ'ըլլար, Վարդանանք ընդդէմ Պարսիկներու...եւ անշուշտ յաղթանակը կ'երթար Քաջ Վարդանին ու Վարդանանց 60,000 կտրիճներուն, հոգ չէ թէ բարոյական ըլլար ատիկա...եւ կը կրկնէինք լոգունգի պէս «Մահ ոչ իմացեալ մահ է, Մահ իմացեալ անմահութիւն է», «Յանուն հաւատքի, յանուն հայրենեաց, Յառա՛ջ», առանց թերեւս իրապէս ու խորապէս հասկնալու անոնց բուն, ներհուն իմաստը...Քաջն Վարդանի նկարը կը ներկէինք, կը գունազարդէինք եւ ան անջնջելիօրէն կը դրոշմուէր մեր սիրտերուն մէջ, կը դառնար խորհրդանիշ հայութեան, հայրենասիրութեան, ազգային ինքնագիտակցութեան ոգիի, ազգային արժանապատուութեան, հերոսական դիմադրութեան հաւաքական կամքի...եւ մեզի կ'ուղեկցէր իր պատգամով մեր կեանքի բոլոր ճանապարհներուն...

Պատանեկան տարիներուս, ՀԲԸՄ Դարուիի Յակոբեանի կրթական յարկին տակ, ի՛նչ ոգեւորութեամբ կ'երգէինք Վարդանանց նուիրուած երգերը՝ «Հիմի է՛լ լռենք»ը, «Իմ Հայրենեաց հոգի Վարդան, Հոգիս հոգւոյդ եղնի դուրպան»ը, «Լռեց: Ամպերը եկան, ծածկեցին երկինք»ը եւ այլ երգեր, անուանի երաժիշտ Համբարձում Պերպլեւեանի խմբավարութեամբ: Բայց զիս ամենէն շատ տպաւորած է Վահան Թէքէեանի «Խորհուրդ Վարդանանց»ը, զոր այնքան գեղեցկօրէն, տո՛ղ առ տո՛ղ եւ բա՛ռ առ բա՛ռ կը վերլուծէր մեր սիրելի ուսուցիչը՝ բանաստեղծ Վահէ Վահեան, մեր հոգիներուն վրայ կնքելով անոր խորհուրդը խորին.-

«Գիշեր մը երբեք այսպէս լուռ ու լուրջ Չէ դիզուած, հսկա՛ծ բանակի մը շուրջ:

Եւ բանակ մ'երբեք, խաւահին մէջտեղ Չէ եղած այսպէս լուսազեղ, անմե՛ղ:....

Եւ յատկապէս սա տողերը՝

«Վարդանի հոգին, հրագո՛ւնդ անշէջ, Կը մտնէ ամէն հայու հոգւոյն մէջ:

Հոգիներուն մէջ ան կ'երթայ առաջ՝ Հոգիներէն դուրս ցցած սուր ու խաչ:

Ու անոր վերջաբանը:

«Դարերը կ'անցնին, բայց Վարդա՛նը Քաջ, Բայց Վարդա՛նը Սուրբ կ'երթայ միշտ առաջ...»:

Աւելի վերջ, Կիպրոսի մէջ, կը յիշեմ Նարեկ վարժարաններու Վարդանանց հանդիսութիւնները, մանաւանդ թատերական ներկայացումները, որոնք այնքան բծախնդրօրէն պատրաստուած կ'ըլլային եւ կը կատարուէին ամբողջ աշակերտութեան մասնակցութեամբ՝ ապրումով ու հասկացողութեամբ, կարծես Վարդանի ոգին կը թեւածէր փոքրիկներու շրթունքներուն վրայ ու անոնց մատղաշ հոգիներէն ներս:

Յուշերուս գանձարանին մէջ, հոգեյոյզ ապրումներով կը փայփայեմ այն գեղեցիկ օրը, երբ Լառնագայի Նարեկ վարժարանի Տեսուչն ու Ուսուցչական Կազմը զիս հրաւիրէր էին որպէս բանախօսը Վարդանանց հանդիսութեան, որ տեղի կ'ունենար Չորեքշաբթի 21 Փետրուար 2001-ին: Բովանդակալից էր յայտագիրը, որուն կը մասնակցէին 4-12 տարեկան



աշակերտներ՝ արտասանութեամբ, երգերով եւ թատերական ներկայացումով, անթերի առողջանութեամբ եւ կատարողութեամբ հրամցուած: Կ'արժէ յիշատակել յատկապէս հայերէնի ուսուցիչ Պրն Յակոբ Էսքիճեանի տքնաջան աշխատանքը ի պատրաստութիւն ամբողջ հանդիսութեան, ինչպէս նաեւ վերջերս մահացած, Մելգոնեանցի եւ հայ դպրոցին, հայ բառ ու բանին նուիրեալ Տիկ Մարի Սումաքեանի հոգնուէր աշխատանքը՝ թատերախաղին բնագիրը պատրաստելու գծով: Դպրոցին սրահը ծայրէծայր, խուռներամ լեցուած էր Լառնագայի համայնքի անդամ-անդամուհիներով, որոնք ակնառու խանդավառութեամբ հետեւեցան մատուցուած յայտագրին... Սիրտս տակաւին կը ջերմացնեն անոնց տաք հայեացքները, երբ կը բանախօսէի բեմէն, վերաբժեւորելով Վարդանանց խորհուրդը, Աւարայրի ոգին...

Մելգոնեան Կրթական Հաստատութեան սրահին մէջ ալ, Վարդանանց յիշատակի ոգեկոչման տօնակատարութիւնները տեղի կ'ունենային մեծ ոգեւորութեամբ... Անոնց յաւելեալ փայլ ու հմայք կու տար ի մասնաւորի Հաստատութեան քառաձայն Երգչախումբը, խմբավարութեամբ տաղանդաւոր Մաեստրօ Սեպուհ Արզարեանի... Երգչախումբը վառ հաւատքով, խանդավառութեամբ կը հնչեցէր օրուան խորհուրդը պատգամող երգեր, որոնց մէջ յատկապէս՝ «Շաւարշանի հերոսներուն արի սերունդն ենք հարազատ...», հայրենասիրական խրոխտ երգը, որ կարծես խոստում-երդում էր ըլլալու Վարդանանց արիագարդ սերունդին հարազատ շառաւիղը եւ արդէն իւրաքանչիւր Մելգոնեանցի, ինչպէս ամէն լիարժէք հայ աշակերտ, չէ՞ր կրեր արդեօք իր հոգւոյն մէջ Վարդանի հայրենասիրական էութենէն կայծ մը հրելէն...

Երանէ՛լի օրեր, որոնք հոգիս կը լեցնեն ազգային-հայրենասիրական վարար զգացումներով հիմա ալ եւ ընդմիշտ...

Ինչ կը վերաբերի Բարեկենդանին, անիկա Մեծ Պահքին նախորդող Կիրակին ըլլալով, ուրախութեան, զուարճանքի կերուխումի եւ ընտանեկան տօնախմբութեանց Օր մը կ'ըլլար, ընդհանրապէս, երբ կը սիրէինք դիմակներ ալ հագնիլ տեսա՛կ-տեսա՛կ, ծպտուիլ, խնդալ ու զուարճանալ, կատակներ ու խաղեր ընել ամբողջ օրը... Մեծ Պահքէն առաջ, հայեր քով-քովի կու գային Բարեկենդանին, միասին կ'ուտէին իւղով, միտով պատրաստուած ճաշատեսակներ, ազգային-ժողովրդական խաղեր կ'ընէին, կը ծիծաղէին կուշտ ու կուռ...

Յիշենք այստեղ որ Պահքի 40 օրը կը խորհրդանշէ անապատին մէջ Քրիստոսի քառասնօրեայ աղօթքի, ծոմապահութեան եւ ապաշխարութեան շրջանը: Իսկ քառասնօրեայ պահքին կը յաջորդէ պահոց եւս մէկշաբաթեայ շրջան՝ Աւագ շաբաթը:

Բարեկենդան բառացիօրէն ալ կը նշանակէ կենդանութիւն, կեանք, լիութիւն, բարի տրամադրութիւն, համերաշխութիւն, կենսութախորհիւն... Բարեկենդանին, հայեր զիրար կը շնորհաւորէին ըսելով. «Շնորհաւոր Բարեկենդան, բարով հասնինք Սուրբ Յարութեան»: Դեռ շատ ու շատ գեղեցիկ աւանդոյթներ կապուած են Բարեկենդանի հետ, աւանդոյթներ՝ որոնք իրենց տեղը հետզհետէ կը զիջին օտարամուտ բարքերուն, մինչդեռ հայկական «Գարնավալ»ն էր Բարեկենդանը, երբ ամբողջ համայնքը միասնաբար կը նշէր գայն, որպէս նաեւ սիրոյ, խնդութեան, ցնծութեան ու միասնականութեան տօն:



Յաջորդ օրը՝ Երկուշաբթին, կը կոչուէր Փակեալ Խորան, Մեծ Պահոց սկիզբը:

Գարնանամուտը աւետող կապոյտ երկինքը, ոսկեշող արեւը, դալարագեղ դաշտ ու անդերը, նոր բացուող գունագեղ ծաղիկները մեզ կը կանչէին իրենց գիրկը... Փակեալ Խորանը սովորական օր չէր, այլ մեզ դաշտային պտոյտներու հրաւիրող օր, վայելելու նախագարնանային բոյրերն ու թոյրերը նոր ծաղկած գոյնզգոյն ծաղիկներու եւ յուռթի բուսականութեան, որոնք կը պատէին դաշտ ու անդերը...

Պէյրութի Էշրեֆիէի թաղամասը, ուր կը բնակէինք, տուն ու խանութներով խճողուած չէր, ինչպէս հիմա: Կային լայնատարած դաշտերը, ուր կը հաւաքուէինք տարբեր ընտանիքներով ու հարեւաններով, միասին ճաշակելու օրուան համադամ ճաշերը, որոնք միշտ բաղկացած կ'ըլլային ձէթով պատրաստուած եւ առատ կանաչեղէն ու արմտիք կամ ընդեղէն պարունակող զանազան կերակուրներով, որոնց մէջ «թապուլէն» ունէր իր պատուաւոր տեղը, ինչպէս նաեւ «ոսպով քէօֆթէն»:

Կանաչ մարգագետինին վրայ կը փռէինք մեր գունագեղ կարպետը կամ քիլիմը, ծածկոցի մը վրայ շարելով օրուան ուտելիքը եւ ի՛նչ ցնծագին պահեր կ'անցընէինք ծաղիկներ փնջելով, ուրախ ուստոստելով բաց երկնքին տակ եւ ճաշակելով համադամ ճաշերը, որոնք քիմքիս աւելի հաճելի կը թուէին ըլլալ քան միսով պատրաստուած կերակուրները...Տակաւին, ի՛նչ գունագարդ թռուցիկներ կը թոցընէինք երկնքին մէջ, մէկս միւսին հետ մրցելով թէ ո՞վ պիտի կարենար աւելի բարձր թոցընել իր թռուցիկը...Եւ այսպէս, մեր բացօթեայ խայտանքը կը շարունակուէր մինչեւ օրուան իրիկնանալը եւ հուսկ՝ մեր տունդարձը...

Բայց կը բաւէ՞ միայն անցեալի քաղցրայուշ պահերը յիշել, մասնաւորաբար ազգային աւանդական տօնակատարութիւնները, որոնք ներկայիս քայլ առ քայլ կը նահանջեն, համահարթեցման եւ օտարացման տխուր յորձանուտին մէջ, իրենց տեղը զիջելով օտարամուտ, խորթ բարբերու, որոնք աննկատելիօրէն եւ կաթի՛լ առ կաթի՛լ մեզ կը հեռացնեն մեր հարազատ, հայեցի ինքնութենէն, կ'աղճատեն ու կը խաթարեն ՀԱՅ ՀՈԳԻՆ...

ԵՐԱՆ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆ

ԱԿՆԹԱՐԹՆԵՐ

ԱՐԺԱՆԱՊԱՏՈՒՈՒԹԻՒՆԸ Էական է անհատի թէ ժողովուրդի համար: Եթէ զուրկ ըլլաս այս կարեւորագոյն որակէն, յայնժամ կ'ոտնակոխուիս որպէս անձ եւ հաւաքականութիւն, կը ստրկանաս այլոց կամքին, կը դառնաս կրաւորական գործիք եւ ոչ՝ արժանավայել ու գործօն դերակատար, սեփական ճակատագրիդ կերտումին մէջ...: Կրաւորական վարքագիծը մեծապէս կը սատարէ որ արտաքին ազդակներ ձեւաւորեն մտածողութիւնդ, կամքդ, արարքդ...: Կրաւորականութենէ դուրս գալու առաջին քայլը անկախ մտածել սորվիլն է:

.....



Հաւատացած եմ, որ մեր մէն մի խօսքը, մէն մի արարքը, մէն մի կեցուածքը, վարքն ու վարուեցողութիւնը իր ՀԵՏՔԸ կը թողու մեր շրջապատին, համայնքին, երկրին ու ազգային հաւաքականութեան վրայ, մեր պատմութեան երթին վրայ, թէկուզ աննշան, թէկուզ չնչին, թէկուզ հիւլէաչափ՝ կ'ունենայ իր անդրադարձը, նոյնիսկ տիեզերական շունչին ու համակարգին վրայ: Ամէն ինչ ամենափոքրիկ, ադոմային մասնիկներէ է բաղկացած... Նոյնպիսին է ազգային-մարդկային կեանքը: Իւրաքանչիւրս ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ է իր խօսած-չխօսածին, իր ըրած-չըրածին, իր գործած-չգործածին համար... ՄԵՆՔ, ՈՐՊԷՍ ԱՍԲՈՂՋՈՒԹԻՒՆ, ԵՒ ԱՌԱՆՁԻՆ-ԱՌԱՆՁԻՆ ԿԸ ԿԵՐՏԵՆՔ ԱԶԳՆ ՈՒ ՄԱՐԴԿԱՅԻՆ ԿԵԱՆՔԸ...

.....

ՄՈԼՈՐՈՒԹԻՒՆԸ օրուան հիւանդութիւնն է: Կը մոլորուինք երբ կը հաւատանք «մարդկային իրաւունք», «ժողովրդավարութիւն», «ազատութիւն» եւ նման անբովանդակ եւ խաբեպատիր եզրոյթներուն, որոնք ուղեղները խցանելու կամ լուալու միայն կը ծառայեն... Կը մոլորուինք երբ կը հաւատանք սպառողական հասարակութեան օրն ի բուն քարոզած շուկայական «արժէք»ներուն ու կենցաղին, վարք ու բարքին: Կը մոլորուինք երբ համաշխարհայնացման համահարթեցնող ալիքին կ'ըլլանք անձնատուր, մոռնալով ազգային ինքնութիւն եւ ոգի, ազգային արժէք ու մարդկային դարաւոր աւանդութիւններ... Շահան Շահնուր պիտի ըսէր իրաւացիօրէն. «ՄԵՂԱՅ, ՄԵՂԱՅ ԱՐԱՐԱՏԻՆ...»:

.....

Սփիւռքահայ կեանքը նկատի ունենալով, դժուար չէ նկատել որ մեր դժբախտութեանց տուն տուող կարեւորագոյն պատճառներէն մէկն ալ ա՛յն է, որ ազգային մեր կառոյցներու եւ կազմակերպութիւններու գլուխը կը գտնուին՝ մեծաւ մասամբ, այնպիսի անձինք, որոնք շատ հեռու են համահայկական մտածողութենէ, համահայկական ոգիէ, արդարամիտ ու արդարադատ նկարագիրէ, անկողմնակալ վարքէ, անխտրական մօտեցումէ, լայնահորզոն տեսլականէ...: Արդիւնքը կ'ըլլայ գաւառամիտ, նեղ-անձնական, նեղ-խմբակային շահերու սպասարկումը, կարծես համայնքը ըլլար իրենց ազարակը, գոր կը տնօրինեն շատ անգամ ՔՄԱՀԱՃՕՐԷՆ եւ ԸՍՏ ԿԱՄՍ:

.....



Մարդկային պատմութեան մէջ, բոլոր յեղափոխութիւններն ալ իրագործուել են որպէս արդիւնք ՈԳԻԻ ՅԱՆԴՅՆՈՒԹԵԱՆ...Ստրկամիտ եւ համակերպող ժողովուրդներն ու հաւաքականութիւնները չեն կրնար յեղափոխութիւն ընել, նոյնիսկ իրենց գիտակցութեան եւ ոգիին մէջ, ուր կ'իշխէ գերազանցօրէն ՎԱԽԸ...ՎԱԽԸ՝ ոտքի ելլելու զօրաւորին դէմ, ՎԱԽԸ՝ պատժուելու, տուժելու, ՎԱԽԸ՝ կորսնցնելու այն քիչը կամ շատը զոր ունին, ՎԱԽԸ՝ անյայտին, աննախատեսելիին...Վերջապէս, եթէ ՎԱԽԸ իր հազար ու մէկ ձեւերով սողոսկած է մարդ էակին էութեան մէջ, յայնժամ ինչպէ՞ս կարելի է ըմբոստանալ տիրող անարդարութեանց, անարգութեանց, կամայականութեանց, կեղեքումներուն դէմ: Սակայն, ամէն ինչ սահման մը ունի, եւ համբերութեան կամ համակերպողականութեան բաժակը միշտ ալ կրնայ յորդիլ:

.....

Կեանքի իւրաքանչիւր ակնթարթ անկրկնելի է, եւ թերեւս ա՛յդ է անոր բուն արժէքը...Պիտի ուզէի՞նք վերապրիլ նոյնութեամբ մեր կեանքի մէկ անցած ակնթարթը, հոգ չէ թէ որքա՛ն ցնծագին եղած ըլլար ան...Մարդ էակը ընդհանրապէս կրկնութիւն չի սիրեր: Այլազանութիւնը եւ փոփոխութիւնը կը թուին ըլլալ կեանքի հմայքին էական բաղադրիչները:

.....

ԳԻՐՔ ԿԱՐԴԱԼ...Մեծագոյն հաճոյք եղած է եւ է ինծի համար...: Կարդալով կ'առնչուիս այլ միտքերու հետ, երբեմն մեծութեանց հետ, անդրանցելով միջոցի եւ ժամանակի սահմանափակումները, կը հաղորդուիս անոնց յոյզերուն եւ գաղափարներուն, կ'ընդարձակուիս, կը տարածուիս, կ'աճիս հոգեմտաւորապէս...: Շատ գիրքեր կարդացեր եմ՝ հայերէն եւ անգլերէն, որոնց մէջ միշտ ալ խառնուածքիս բոներ են գեղարուեստական-փիլիսոփայական խորքով գիրքերը...Անշուշտ ՀԱՅ ՄԵԾԵՐՈՒ գիրքերը իմ ամէնէն սրտամօտն են, ամէնէն հարազատը, որոնցմէ շատերը դարձեալ եւ դարձեալ կը կարդամ՝ վերըմբռնելու համար անոնց լեզուի համն ու հոտը, ոճի հարստութիւնը, յուզա-իմացական բովանդակութիւնը: ՀԱՅԵՐԸՆ ԳԻՐՔԸ ՈՒՐԻՇ Է...Բայց որքան ցաւալի է, երբ ոմանք կը յոխորտան ըսելով. «Հիմա ո՞վ գիրք կը կարդայ» եւ նման խօսք ըսողներէն շատեր կուսակցական ալ են եւ իբրեւ թէ ազգին նուիրեալները...Ծիծաղելի է պարզապէս:

.....

Երբ մինակ եմ, մարդկանց կարօտը կը խեղդէ զիս, լաւ մարդկանց, բարեկամի, ծանօթի, հարազատի: Երբ շրջապատուած եմ մարդկանցով, կարօտը կը զգամ միայնութեանս, եւ ինձ հետ ըլլալու, մտածելու, խորանալու...Բայց մարդ էակը խորքին մէջ միշտ ալ առանձին է՝ իր մտորումներուն, զգացումներուն, յոյզերուն եւ տազնապներուն հետ...

.....

Ժողովուրդ մը, որ իր լուագոյն զաւակներուն հոգիին մէջ, կորսնցուցած է՝ անվախ, անվեհեր ոգիի խոյացումներուն ճաշակը, արժանաւորութիւնը, արժանապատուութիւնը, կը



թակարդուի վախի ճիրաններուն մէջ, կը ստրկանայ գետնամած խոնարհութեամբ, չի կրնար գլուխ բարձրացնել զինք ճորտացնել փորձող անարգ թշնամիին դէմ, ներքին թէ արտաքին, կ'ապրի նուաստ կեանքով եւ ի վերջոյ անհետանալու կը դատապարտուի պատմութեան թատերաբեմէն...

Դէմ ելլել անարդարութեան, արժանապատիւ տէրը ըլլալ սեփական ճակատագրին, բարձրագոյն հոգիներուն միայն յատուկ է..Նմաններն են որ կը հերոսանան եւ պատմութիւն կը կերտեն անհատական եւ հաւաքական մակարդակներու վրայ ալ:

.....

Աշխարհի հզօրներուն համար, փոքր ազգերը ճատրակի քար են սոսկ՝ յանուն իրենց աշխարհակալական նկրտումներու կենսահաստատման, եւ այդ ճանապարհին վրայ, անոնք Ո՛Չ մէկ բանի վրայ կանգ կ'առնեն, կոխկոտելով ամէն մարդկային իրաւունք, արդարութեան եւ բարոյականութեան ամէնէն նուիրական զգացումները, որոնք առ ոչինչ կը համարուին...: Այդպէ՞ս չպատահեցաւ Յեղասպանութեան ժամանակաշրջանին, երբ գերտէրութիւններ դիւրաւ ծախեցին Հայաստանն ու Հայ դատը յանուն իրենց շահերուն...ՀԻՄԱ ԱԼ ՈՉ ՄԷԿ ԲԱՆ ՓՈԽՈՒԱԾ Է, ՄԵՐ ՄԻԱԿ ՓՐԿՈՒԹԻՒՆԸ ՄԵՐ ՀԱԻԱՔԱԿԱՆ ՈՅԺԻՆ ՄԷՋ Է, զոր կերտելու ենք անյապաղ:

ԵՐԱՆ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆ

ՔԱՌԵԱԿՆԵՐ



Ու բառերն են այնքան անզօր
Ապրումներուն անդնդախոր,
Անոնք գուցէ փրփուրն են սոսկ



Ովկէանին խոր ու ալեկոծ:

.....

Թէ իտէալներ դուն չունենաս,
Որոնք հոգւոյդ թել ու թռիչք տան,
Կը մընաս սոսկ գետնին գամուած
Հողակպիկ մի արարած:

.....

Աւաղեցին նահանջն լեզուին,
Ողբ հիւսեցին, ավստասցին,
Բայց հայ գիրքին, հայ գրողին
Աչք փակեցին, անցան-գացին...

.....

Ես մնացի հաւատարիմ
Համոզմունքիս, խղճիս ձայնին
Եւ բարձր գին վճարեցի
Անդաւաճան վարք ու բարքիս:

.....

Եւ կը քարկոծեն երբ իրենցմէ չես,
Երբ ունիս ուրոյն կարծիք, տեսակէտ,
Նոյնիսկ քեզ կ'ըսեն որ դաւաճան ես,
Բայց էականը՝ ՊԻՏ՝ ԸԼԼԱՍ ԴՈՒՆ ՔԵԶ:

.....

Հոգիս մնաց խորթ ու օտար
Հաշիւներուն աղուեսական,
Իրը լոյսի օրհնութիւնն էր,
Սիրոյ քնքշանքն ու թրթիռն էր:

.....

Խօսքը բխի սիրտէդ, միտքէդ,
Զայն միշտ մաքուր դուն ընծայէ,
Էութեանդ վճիտ ցոլքն է,
Քու հոգիիդ հայելին է...

.....

Պահեր կան սուրբ, արարչական,
Երբ երկինքէն լոյս կը տեղայ՝
Բեղուն մտքի, վառ յոյզերու,
Աշխարհ մը նոր կ'առնէ ծնունդ:

.....

Երագներս տուի հովին որ զանոնք տայ լոյս երկնքին,
Ու երբ մութին ու խաւարին հոգիս ուզէ ճախրել երկինք,



Մէկի՛կ-մէկի՛կ անոնք պիտի իջնեն երկիր եւ իմ սրտին,
Պիտ' ճառագեն լոյսեր, յոյսեր եւ հեքիաթներ զուարթագին:

.....

Չեմ սիրեր ես ախն ու վախը,
Ողբերգակներն եղերերգու,
Որոնք չկան երբ կայ կեանքը
Եւ յայտնուին լոկ յետ-մահու...

.....

Մեծին փառքը ո՞վ պիտ' ճանչնայ, կը խնդան ու կ'անցնին, կ'երթան,
Կամ ալ նոյնիսկ կ'արհամարհեն, կ'անտեսեն զայն, երբ դեռ ողջ է,
Յետոյ, սակայն, երբ ա՛լ չկայ, կը մեծարեն ու կ'ափսոսան,
Կեանքն է այդպէս ընդհանրապէս՝ Գնա՛ մեռիր, եկո՛ւր սիրեմ:

.....

Հարուստ եղայ ես ոգիով, կամքով հզօր եւ անկոտորում,
Փուշ ու մացառ իմ ճամբէքին արիւնեցին ոտքերս պինդ,
Ու քալեցի զառիվերէս մերթ շնչահեղձ, միշտ աննկուն,
Ըմպեցի լոյսն արեգական անյագօրէն ու խնդագին:

ԵՐԱՆ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆ